

Ա. ՅԵ. ՆԵԶԼԻՆ

ՏՈՒՐԵՐԿՈՒԼՅՈԶՈՎ ՀԻՎԱՆԴԻ
ՌԵԺԻՄՆ ՈՒ ԲՈՒԺՈՒՄԸ

ՀՈՎԿՈՎԱՆ ԽՈՀ Ա.Ի.ՖՈՎ.ՎՈՐՈՏԻ ՍՈՒ. ԼՈՒ. ԲՈՋԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1939



16-995-08

Հ-56

Ո. 66. ՆԵԶԼԻՒ

ԱՅՈՒԹՎԱԾ Է 1961 թ.

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՑՈՅՈՎ ՀԻՎԱՆԴԻ
ՌԵԺԻՄՆ ՈՒ ԲՈՒԺՈՒՄԸ



ԱՅԿԱԿԱՆ ԽՈՃ ԱՌ-ՖՈՂԿՈՄԱՏԻ ՍԱՆ. ԼՈՒՍ. ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆ

1939

A ⁱ
2534

Պատ. Խմբագիր՝ Ա. ԽԱՐՄԱՆԴԱՐՅԱՆ
Թարգմանիչ՝ քժ. Թ. ԲԱԲԱՅԱՆ
Լեզվ. Խմբագիր՝ ԱՎ. ՇԱԹԻՐՅԱՆ
Տեխ. Խմբագիր և սրբագրիչ՝ Հ. ԱՅՎԱԶՅԱՆ

Գլավիլիսի լիազոր՝ Ե 1193 Պատվեր № 732 Տիրած 3000

Հայկական ԽՍՀ ԺԿԵ-ին կից «Խորհրդային Հայտատան»
հրատարակչության տպարան, Յերևան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տուրերկուլյոզը բուժելի յե— դա վերջին տարիներս անմիջելիորեն ապացուցված ե գիտության կողմից : Հաստատված և, վոր տուրերկուլյոզի հաջող բուժման հարցում դիմավոր դերը խաղում են վոչ թե դեղերը, այլ հիվանդի կանոնավոր ու խելացի վարած կյանքը : Այդ պատճառով ել հիվանդության ընթացքն ու նրա բարեհաջող յելքը խոշոր չափերով կախված ե նրանից, թե հիվանդը ինչպես ե կատարում բժիշկների նշանակումներն ու խորհուրդները : Հիվանդը, վոր վճռական պայքար ե հայտարարել իր հիվանդությանն ու այդ նպատակով հրաժարվել ե իր վատ սովորություններից (ծխելուց, ալկոհոլից), վորն իր տնային ուսարմաններում ու աշխատավայրում ոգտվում ե թարմ սղից ու մաքրությունից, կամոնավոր սնվում, աշխատում ե հանգստանուամ և,— այդպիսի հիվանդն առողջանալու բոլոր տվյալներն ունի նաև այն դեպքում, յեթե անդամ հիվանդությունը բավական խորն ե անցել : Այլ կերպ ասած, տուրերկուլյոզով հիվանդի բախուը մեծ չափերով կախված ե իրենից, հիվանդից :

Այս գրքույկի նպատակն ե տուրերկուլյոզով հիվանդին սովորեցնել դիտակցարար վերաբերվել իր հիվանդությանը, իր բուժմանը, իր ապրելու յեղանակին : Գրքույկին ողտակար և նաև հիվանդին չըջապա-

առողջերի համար, վորոնք պիտի իմանան թե Հիվանդի արագ առողջացման համար ինչպիսի լավագույն պահանջներ կարելի յե ստեղծել:

Հիվանդի հիմնական խնդիրը՝ իր առողջանալու համար մղվող պայքարն է: Այդ հարցի լուծումը մի կողմից կուխուծ և իր ժամանակին բժշկի գիմելուց ու կանոնավոր բուժվելուց, մյուս կողմից հիվանդը միշտ պիտի հիշե, վոր տուբերկուլյոզի զեմ պայքարում մեր գլխավոր զաշնակիցներն են բնության ուժերը, մաքրությունը, կանոնավոր սնունդը, ուժերը շերածին շափ առողջ աշխատանքը և կանոնավոր հանգիստը:

Հիվանդը չպիտի մռանա, վոր վարակվելու վտանգը զյխավորապես առաջանում և իր հիվանդության մասին քիչ զիացող ու անմաքրասեր հիվանդից: Այն գեղքերում, յերբ հիվանդը դիտի նախաղը ուշակու բոլոր միջոցները և զրանք կատարում են ամենայն շշտապահությամբ, նաև ըջաւալատողներին չե վարակում: Այն հիվանդը, վորը պաշտովանում և իր մատիկներին, զրանով իսկ հոգ և տանում իր մասին: Յուրաքանչյուր բժիշկ պիտի, թե հիվանդին ինչպես ստատիկ հուզում և իր ընտանիքի վարակման վախր և թե ինչպես իր հարազաների ու մոտիկների առողջության հարցը հաճախ խանդարում են նրա կտղությելուն: Այդ պատճառով ել հիվանդն իր իսկ շահերի անուակետից պետք է խմանա այն միջոցները, վորոնք կարող են պաշտպանել վարակվելուց իր հարազաներին և միասին աշխատող բնկերներին:

Բուրժուական յերկրներում տուրերկուլյոզն իրա-

վացիորեն համարվում է պրոլետարական հիմանդրություն։ Տուբերկուլյոզն ամենից չառ տարածված է այնտեղ, վսրտեղ մասսաները տառապում են ճղնաժամերից ու գործադրկությունից, աշխատանքի ծանրությաններից ու ցածր աշխատավարձից, վաս անընդից, վատասառդը բնակարանից և կազիտավետական շահագործման այլ անխռուսափելի հետեւանքներից։

Խորհրդային պետության մեջ բանվոր դասակարգի և աշխատավորության մյուս տարրերի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակը տարեց-տարի արագորեն զարգանում է, այդ պատճառով ել մեր յերկում տուբերկուլյոզը պակասում է և բանվորական խոչընդունակությամբ (Մոսկվա, Լենինգրադ) մինչեղամփախական ժամանակի համեմատությամբ, համարյա յերկու անգում պակասել է։

Սակայն, չնայած այդ հաջողություններին, տուբերկուլյոզը— ցարական հասարակարգի այլ ժառանդությունը— մեղանում դեռևս վերացված չե։ Տանիրոկ և հարյուր հազարավոր բանվորներ ու գյուղացիներ— հասակավորներ ու յերեխաներ, գեռ մինչեւ ոլժմ ել տառապում են այդ հիմանդրությունից։ Տուբերկուլյոզն իջեցնում է բարձահազար աշխատավորների աշխատառնակությունը։ Տուբերկուլյոզը, մանավանդ չահել հասակում, հաշմանդամության վլխավոր պատճառներից մեկն է։ Տուբերկուլյոզային հիմանդրություններից ու խրոնիկական տուբերկուլյոզային հիմանդրից հիմանդրության սրումից քիչ պարագուրդներ չեն տեղի ունենում գործարաններում ու Փարիկաներում, խորհանուեառություններում ու կոլտնուե-

տություններում։ Միանգամայն անկասկած է, վոր տուբերկուլյոզը վերանում է սոցիալիզմի համար մըզ-վող պայքարի պլոցեսում։ Բարձրանալով տեխնիկայի ու եկանութեայի ավելի ու ավելի բարձր աստիճաններ, խորհրդային յերկիրը միաժամանակ բարձրացնում է իր ընդհանուր սանհիտարական-հիգիենիկ կուլտուրան, բարելավում է միլիոնավոր աշխատավորների սննդի, բնակարանի և աշխատանքի պայմանները։ Դրանով արմատախիլ են արվում տուբերկուլյոզի, վորպես սոցիալական (հասարակական) հիվանդության արմատները, վորովհետեւ այդ միջոցների նպատակն է կանխել տուբերկուլյոզով մասսայական հիվանդացումները։

Առողջապահական որդանների միջոցով կիրառվող այդ խոչը աշխատանքը, խորհրդային իշխանությունը տանում և մասսաների լայն ինքնազործունելության հիման վրա։ Գործարկուներին կից աշխատանքի պաշտպանության հանձնաժողովների և տուբերկուլյոզային դիսպաններին կից սոցիալական պաշտպանության խորհուրդների միջոցով բանվորական հասարակայնությունը անմիջականորեն մասնակցում է տուբերկուլյոզի դեմ մղվող ոլորտարին։

Տուբերկուլյոզով գիտակից հիվանդը, իր անձնական փորձով ըմբռնած լինելով տուբերկուլյոզի ամբողջ հասարակական վնասը, ամենուրեք— դործարանում, բնակվածկողապում, կոլտնտեսություններում— հանդիսանում է տուբերկուլյոզի գեմ մղվող պայքարի միջոցառումների նախաձեռնողն ու զեկավարը։ Այս գրքույիում մանրամասն կնշվեն այն միջոցները, վո-

ըսնք Հնարավորություն կտան առեքերկուլյով հի-
վանդին իր մասնակցությունն ունենալու առեքերկու-
լյով, վորպես սոցիալիստական շինարարության
թշնամու դեմ մզվող պայքարում :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ


Ի՞՞Չ Ե ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԸ

Տուրերկուլյոզը վարակիչ հիվանդություն է : Մենք վարակիչ ենք համարում այն հիվանդությունները, վորոնք հիվանդ՝ մարդուց կամ հիվանդ էրնդանուց անցնում են առողջ մարդկունց : Վարակիչ հիվանդություններն առաջանում են հասարակ աչքով անտեսանելի կենդանի՝ երակներից— միկրոբներից . նրանք այնքան մանր են, վոր նրանց կարելի յի տեսնել միայն հատուկ մեծացնող վործիքի՝ մանրադիտուկի միջոցով :

ԿՈԽԻ ՑՈՒՊԻԿԸ

Տուրերկուլյոզի միկրոբն ավելի քան 50 տարի առաջ (1882թ.) հայտաբերել ե զերմանացի գիտական-պրոֆեսոր Ռուբերտ Կոխը (նկ. 1) : Յեթև ման-րուկիտակով նայենք այդ միկրոբին, կտեսնենք, վոր նա ցուպիկի տեսք ունի, որա համար ել կոչվել ե «Կոխի ցուպիկ» (նկ. 2) : Գիտնականները մանրամասն ուսումնասիրել են այն պայմանները, վորոց մեջ առ-րում, զարգանում և վոչնչանում ե տուրերկուլյոզի ցուպիկը :

Այդ միկրոբն ամենից լավ ապրում ու բազմանում է մթության ու խոնավության մեջ։ Արեի վառ լույսը մի քանի րոպեյի ընթացքում սպանում է կոխի ցուպիկին։ Ցերեկփառ սովորական ցրված լույսը կանգնում նրա աճն ու դարձացումը։ Խորխի չորացումը, վորի մեջ դանվում և տուրերկուլյոզի ցուպիկը, մի քիչ կարճացնում է նրա կյանքի տելովու-



Նկ. № 2 Կոխի ցուպիկը

Նկ. № 1 Ռոբերտ Կոխ

թյունը և նվազեցնում նրա թունավորությունը։ Սակայն նույնիսկ տուրերկուլյոզի հիվանդի չորացած խորիսում կոխի ցուպիկները կարող են ամեներով առլին։

Տուրերկուլյոզի ցուպիկն այլպես կենսունակ ու պիմացկուն է, վորովհետեւ նա ամբողջօվկին սնված է շատ կայուն նյութով— ծարապամոմով։ Տուրերկուլյոզի ցուպիկները ցրտից չեն վախենում։

Զափավոր տաքությունը նրանց վրա բարենպաստ ազգեցություն և ունենում : Ցուպիկները հաջողությամբ դարձանում են մարդու մարմնի տաքությանը հավասար տաքության պայմաններում : Ծառ բարձր չերժաստիճանում (տուրերկուլյուզային խորիս մի քանի բոպե յեռացնելիս) տուրերկուլյողի ցուպիկները վոչչանում են :

Տուրերկուլյողի ցուպիկները մի քանի տեսակ են վնում ,— մարդկային տուրերկուլյողի ցուպիկ, յեղջերավոր անասունի տուրերկուլյողի ցուպիկ, թոշունների տուրերկուլյողի ցուպիկ, ինչպես նաև սանաբրյունների-ծկների, կրիաների տուրերկուլյողի ցուպիկ : Մարդը մասամբ հիվանդանում և մարդկային տուրերկուլյողի ցուպիկով, յերթմն յեղջերավոր անասունների տուրերկուլյողը ևս մարդու համար վարկիչ և որինակ, յերեխաները կարող են վարակվել տուրերկուլյողով հիվանդ կովի կաթից : Ծառ հաղվագույտ դեպքերում մարդը կարող և վարակվել նաև թոշունի տուրերկուլյողի միկրոբից :

Կոխի ցուպիկն ընդունակ և որդանիզմի համար թունավոր նյութեր արտադրելու . թույներ արտադրվում են նաև որդանիզմում ցուպիկների մասսայական վոչչացման դեպքում : Բժշկականության մեջ այդ թունավոր նյութերը կոչվում են տոքսինուեր : Տոքսինուերն իրենց մասսակար ազդեցությունն են ունենում վոչ միայն այն որդանի վրա, վորտեղ այդ ցուպիկները բուն են դնում, այլև արյան միջոցով ամբողջ որդանիզմի վրա :

Տուբերկուլյոզ լինում և մարդու բոլոր որդանեներում — թոքերում կոկորդում, աղիքներում, յերիկամներում, ղեղձերում, վոսկորներում, հողերում, մաշկի վրա և այլն : «Տուբերկուլյոզ» խոռքը հայերեն չե և հայերեն թարգմանելիս կնշանակիր բլրակ¹⁾ : Հիգնակության այլ անունը ծագում է «բլրակ» բառից, վորովհետեւ տուբերկուլյոզով հիվանդացած որդանեներում սովորաբար մեծ քանակությամբ բլրակներ են կոյանում : Տուբերկուլյոզով ամենից հաճախ վնասավում ան թոքերը : Տուբերկուլյոզի 10 դեպքից 9-ը թոքային է :

Հենց վոր կոխի ցուպիկն ընկնում և մարդու թոքերի մեջ, նա թոքերի հյուսվածքում փոփոխություններ և առաջացնում : Այն տեղում, վորտեղ ցուպիկը տրմատակալում է, աճում և փոքրիկ զնղասեղի դրւխիկից փոքր, մոխրագույն, չոշափելիս սլինդ բլրակ :

Յեթև այլպիսի բլրակը մանարդիտակով նայենք, տպա բլրակի հենց մեջտեղում կտեսնենք տուբերկուլյոզի ցուպիկներ : Ցուպիկների շուրջը գտնվում են թոքային հյուսվածքի բջիջները), վորոնքմիկորիների և առանձնապես այլ միկրոբների արտադրած թույների ազդեցությամբ փոփոխության են յենթարկվում :

1) Տուբերկուլյոզ — լատիներեն տուբերկուլյուս բառից և, վոր նշանակում և բլրակ:

2) Մարդու և կենդանու բոլոր որդանեները կազմված են մանր, միայն մանրադիտակով տեսանելի մասնիկներից, վորոնք բջիջներ են կոչվում:


Հաճախ առանձին բլրակներ ձուլվում են միմյանց հետ և ավելի խոշոր հանգույցներ կազմում:

Հետաղյում մի կարեսը հանդամանք ևս հաստատեց, վոր բլրակները և հանգույցները վոչ մեծ քանակությամբ հաճախարած կերպով հայտարկրվում են այն մարդկանց մոտ, վորոնք իրենց ամբողջ կյանքի ընթացքում յերբեք հիվանդ չեն զգացել իրենց: Առողջ ժարդ կանց որդանիքմաւմ հայտարկրված տուրերկույզային հանգույցներն առնեն առողջացման ոլարդ նշաններ, — նրանք կամ չըջառափափած են սպիռերով կամ հաղեցված կրով: Այս դիտողաւթոյնը ցույց է տալիս, վոր տուրերկույզայինը մեծ մասամբ բարարակ հիվանդություն է, վորը հաճախ առողջանում է ինքնարերարար, առանց վորեն բռնժման:

ԹՈՐԵՑԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶՈԶ.

Թորեցի տուրերկույզային ժամանակ, թորերում աեղի ունեցած փոփոխությունները կարող են տարբեր տևակի լինել: Յերբեմն թորերում զտնվում են միայն բլրակներ կամ վորիկ հանգույցներ: Յերբեմն էլ հանգույցների չուրչը ստացվում են բորբոքման մեծ տարածություններ. (տուրերկույզային հանգույցների չուրչը դորսցող այդ բորբոքումը կոչվում է ինֆիլտրատ): Յերբեմն խոշոր հանգույցներում կամ ինֆիլտրատում տուրերկույզային տոքովների սպակեցության տակ թոքային հյուսվածքի քայլքայում է աեղի ունենում: Յեթե այդ քայլքայումը չոտ թե քիչ զգալի չափերով է, ապա թորերում

կողմվում ե զատարկ տարածաթյուն, վոր կալերնայի կոչվում (կալերնա լատիներեն խոսք է, վոր հայերեն նշանակում ե «այր») : Այն զեղքում, յերբ թոքերն առաջանում են, նրանցում բարձաթիվ սպիներ են գոյանում : Խրոնիկական (տելական) տուրերկուլյողի ժամանակ միենույն թոքում կարելի յե զանել մի չարք տարբեր տեսակի փոփոխություններ (հանգույցներ, ինֆելտրատներ, կալերնաներ, սպիներ) : Ահնագենյան ձառագայթներով¹⁾ հետպատելիութեան համար հաջողվում ե վորոչել վոչ միայն



Նկ. 3. Ահնագենյան նառագայթներով լուսարկելը թոքերի տուրերկուլյողի առկայությունը, այլի հիգանդ թոքերում տուրերկուլյողից առաջացած փոփոխությունների ընույթը :

1) Ձառագայթներ, վորոնք 1895 թվին գտնված են գերմանական գիտնական Ահնագենի կողմից ներբեն որդանները լուսարկելու համար:

թոքերի տուբերկուլյոզի դեպքում հիվանդանա-
լու սկզբին հիվանդը քիչ և զգում իր հիվանդությու-
նը: Հիվանդը մի փոքր թուլություն և զգում և իր
սովորական աշխատանքից արագ հողնում է: Յեր-
բեմն ել հիվանդը նիհարում է, դունատվում, տնե-
նում և թեթև չոր հաղ:

Հաճախ հիվանդն ուշադրություն չի դարձնում
հիվանդության այդ առաջին նշաններին, դրանց դա-
տարկ բաներ և համարում ու բժշկի չի դիմում: Յեր-
բեմն բժիշկն անգամ դժվարանում է սկզբում չորո-
շել տուբերկուլյոզով հիվանդ լինելը, այնքան այդ
հիվադության նշաններն աննկատելի լին առաջին շա-
րաթիներում:

Յերբեմն թոքերի տուբերկուլյոզը սկսվում է
անկարծակի. Հիվանդն ունենում է բարձր ջերմու-
թյուն, հաղ, դիխացավ, այդ դեպքում ստացվում է
այն պատկերը, վոր նման ե մյուս սուր հիվանդու-
թյուններին (գրիպ, թոքերի բորբոքում): Այդպիսի
դեպքերում հիվանդության ճիշտ վորոշելը հաջող-
վում է զյուսավորապես հետազոտության նորագույն
մեթոդներով (ունգենայան ճտուագայթներով լուսար-
կելը, խորխոր մանրադիտակով հետազոտելը): Հի-
վանդության շուտ հայտաբերումը շատ խոչը նշանա-
կություն ունի: Յուրաքանչյուր հիվանդություն,
վոր հայտաբերվում է իր գարգացման սկզբում, ա-
վելի հեշտ և բուժվում:

Յերբեմն տուբերկուլյոզով հիվանդի ախորժակը

նիվաղում և կամ բոլորովին կորչում . այդ դեպքում
հիվանդը խիստ նիհարում է , նա ոկտում է հազար ,
վորք հաճախակի ու սուր և գառնում , յերեան և գա-
լիս խորիս , վորի մեջ հետազոտելիս , կոխի ցուպիկ-
ներ են գառնում : Վորոշ դեպքերում հիվանդը տառա-
պում և գողով , զիշերային սառը քրտինքով , կրծքի
ու կողքի ցավերով :

Տուբերկուլյոզն արտահայտվում է ամենատաքեր
ձեվերով : Մինչեւ վոչ հեռավոր անցյալը բժիշխները
տուբերկուլյոզով հիվանդի վիճակը վորոշում եյին
միայն «ստաղիաներով» այլ կերպ ասած , թոքի հի-
վանդ մասի մեծությամբ : Յեթե տուբերկուլյոզով վր-
հասված և թոքի մի փոքրիկ մասը միայն (ամբողջ
թոքի մեկ վեցերորդ մասից պակաս) , վորոշում եյին
վորսրիս սոսալիայի տուբերկուլյոզ : Յեթե
հիվանդությունը համակել եր թոքի մեկ վեցերորդ
մասից ամելին , սակայն նրա մի յերրորդից պակաս ,
ապա ասում եյին , վոր տուբերկուլյոզը գտնվում և
յերկրորդ ստաղիայում , իսկ յեթե տուբերկուլյոզա-
յին փոփոխությունները բռնել եյին մի թոքի ամբողջ
մի յերրորդը կամ նույնիսկ ամելին , այդպիսի հիվան-
դությունը դասում եյին յերրորդ ստաղիայի շարքը :

Սակայն հիվանդ մասի մեծությամբ ստաղիաների
բաժանումը չի կարող հիվանդության ծանրության
չափանիշ ծառայել : Այսպիս , շատ դեպքերում , յերր
նույնիսկ առկա յե ընդարձակ տուբերկուլյոզային
որոցեսը , վորը բռնել և թոքի մեկ յերրորդը կամ
նույնիսկ յերկու յերրորդը , սակայն այդ դեպքումն
ել հիվանդությունն ընթանում է այնպիս , վոր հի-

վանդը ի վիճակի յև աշխատել, ունի նորմալ ջերմաստիճան, իրեն լավ և զգում: Հիմում է նաև հակառակը, հիվանդի թոքի վնասվածքը կարծես թե փաքք և ի բր ժեծությամբ դասվում և առաջին ստաղիոյի շարքը, սակայն հիվանդը ջերմում է, նիհարում և ի վիճակի չե աշխատել: Ահա, թե ինչու հիվանդության այս կամ այն ստաղիան ինքնին զեսես առացուց չե վոչ հիվանդի վիճակի ծանրությանը, վոչ նրա բուժման համար անհրաժեշտ միջոցներ ու կյանքի հասուլ ուժիմ կիրառելուն:

Հենց վոր տուբերկուլյոզի ցուպիկն ընկնում և մարդու որգանիզմի մեջ, որգանիզմն սկսում է իր պայքարը վարակի (ինֆեկցիայի) և ցուպիկների արտադրած թույների զեմ: Հիվանդության ընթացքն ու հիվանդի զրությանը միշտ ել կախված է նրանից, թե այդ պայքարից ո՞վ հաղթող դուրս կը: Յեթե որգանիզմն է հաղթում, հիվանդը բոլորովին առողջանում է, իսկ յեթե հաղթողը ինֆեկցիան է, ապա հիվանդը հարկադրված է յերկար կամ կարճ ժամանակով պառկել անկողնում: Սակայն շատ դեպքերում պայքարը որգանիզմի և ինֆեկցիայի միջև շատ յերկար և տեղում: Այդ ժամանակը մարդը հիվանդանում է յերկար տարիներ, անգամ տասնյակ տարիներ: Եզդպիսի տեվական հիվանդությունը կոչվում է խրոնիկական, իսկ տեվական հիվանդությամբ հիվանդը՝ խրոնիկ: Տուրերկուլյոզը մեծ մասամբ խրոնիկական հիվանդություն է:

Մի կողմից տուբերկուլյոզի ցուպիկը ու նրա արտադրած թույների և մյուս կողմից հիվանդը՝ որգա-

նիզմի ուժերի հարաբերակցություն—ահա ինչն է հան .
դիսանում հիվանդի դրության ամենից ավելի ճիշտ
չափանիշը : Յեթե հիվանդի որգանիզմը հիվանդու-
թյանը լավ և դիմադրում և թույներից (տոքսիննե-
րեց) չի թունավորվել, հիվանդը չի նիհարում, չի
քրանում, չի տենդում և աշխատունակությունը չի
կորցնում ապա այդ նշանակում է, վոր որդանիզմն իր
պաշտպանողական ուժերով անվնաս և դարձնում տու-

թբերկուլյոզի թույնի աղղեցությունը, հիվանդի որգա-
նիզմի ուժերը հավասարակշռում են հիվանդությանը :
Հիվանդության այդպիսի դրությունը կոչվում է
համակշիռ դրություն : Յեթե ժամանակավորա-
պես ինֆեկցիան և հորդթող հանդիսանում, ապա
հիվանդն աշխատել չի կարողանում, նրա ջեր-
մությունը բարձրացնում է մինչեւ 38° և ավե-
լի, գիշերները քրանում են, սաստիկ նիհարում,—այդ-
պիսի գեպքերում մենք ունենք խախտված հավասա-
րակշռություն— ապահամակշռություն : Շատ դեպքե-
րում պայքարը ինֆեկցիայի և որգանիզմի միջև
ծգծվում է, այդ ժամանակ մենք ունենում
ենք անկայուն հավասարակշռություն, վորի ժա-
մանակ հիվանդն իրեն յերբեմն լավ և զղում,
յերբեմն վատ : Հիվանդը կարծես թե կարող է
աշխատել, սակայն աշխատելուց հետո չուտ հոգնում
է, մեծ տաքություն չի ունենում, բայց ժամանակ առ-
ժամանակ ջերմաստիճանը մի փոքր բարձրանում է :
Այդպիսի դրությունը կոչվում է յենթահամակշիռ

Կայուն, լավ համակշռությամբ հիվանդը կարող է, աշխատել և բռւժվել, առանց արտադրությունից կտրվելու։ Ապահամակշիռ և յենթահամակշիռ պրոցեսներով հիվանդները կարիք ունեն սանառորական կամ հիվանդանոցային բռւժման, կամ տանը՝ անկողնային պահպանության, մինչեւ վոր նրանք հասնեն կայուն համակշիռ դրության։

ԼԱՆՉԱԹԱՂԱՆԹԻ (ՊԼԵՎՐԱՅԻ) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶ

Թոքը պատած և կրկնակի քսակով—լանջաթաղանթով։ Լանջաթաղանթի մի մասը ծածկում և թոքերը և կոչվում ե թոքաթաղանթ, մյուսը միակցված և կողերի հետ, կոչվում է կողաթաղանթ։ Այդ յերկու թերթ լանջաթաղանթների (թոքային ու կողային) միջնվանդությունը կոչվում է լանջախոր։ Հաճախ տուբերկուլյոզը վնասում և լանջաթաղանթը և ստացվում է լանջաթաղանթների տուբերկուլյոզային բորբոքում։ Պիեվայի տուբերկուլյոզը հաճախ պատահում է թոքերի տուբերկուլյոզի ժամանակ։ Ցափերն ու ծակոցները կողքում, վոր հաճախ դրում ե տուբերկուլյոզով հիվանդը, առաջ ևն գալիս պլեվրիտից։ Ցերբեմն տուբերկուլյոզային պլեվրիտի ժամանակ պլեվրայի խորչում հեղուկ և կուտակվում, իսկ մի քանի դեպքում ել թարախ՝ և առաջանում է ջրիկ (երսուղատիվ) կամ թարախային պլեվրիտ։

ՎՈՍԿՈՐՆԵՐԻ ՑԵՎ, ՀՈԴԵՐԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶ

Վոսկորների ու հոգերի տուբերկուլյոզն ամենից շատ վնասում և յերեխաներին (առանձնապես փոքրա-

հաստիներին), մեծերն ավելի հազվագեղ են այդ հիմնակությունն ունենում: Այդ հիմնակությունը ժողովրդի մեջ հայտնի յէ «վոսկրուտիչ» անունով, և իրոք տուբերկուլյոզը յերբեմն կարծես թե ուստում ե վնասված վոսկորը: Յերբեմն վոսկորի ներսում կազմվում ե թարախակույտ, վորը կարող է ծակել դուրս դալ. այդ ժամանակ վերք ե ստացվում, վորից թարախ և հոսում, այդպիսի վերքը խուզակ (Փիստուլա) է կոչվում: Խուզակից թարախի հետ զուրս են դալիս քայլայլած վոսկորի կտորներ:

Տուբերկուլյոզով վնասված վողնաշարը զգալիորեն քայլայլած լինելու դեպքում կարող է ծռվել, վորի հետեւ վանդառվ սապատ և առաջանում: Այդը կամ ծնկի անուշադրության մատնված տուբերկուլյոզի դեպքում յերեխան յերբեմն ամբողջ կյանքում կաղ է մնում:

Բայց յեթե հիմնակությունը ժամանակին և հայտաբերված և ժամանակին ել ձեռնարկված է նրա կանոնավոր բուժման, առա կարելի յէ յերեխայի կադալը՝ կանխմել:

ՄԱՇԿԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶ («ԳԱՅԼԱԽՏ»)

Գայլախտ կոչվում է մաշկի տուբերկուլյոզ հիմնակությունը: Տուբերկուլյոզի ցուսիկը մաշկի մեջ կալող և ընկնել վերքի կամ քերծվածքի միջոցով, կամ նա մաշկի մեջ մտնում և տուբերկուլյոզով վնասված մի այլ որդանից, արյան հոսանքի միջոցով: Մաշկի վրա սկզբում առաջանում է բլրակ, հետագայում, յեթե հիմնակությունն աչքաթող է արվում, վերքեր են

առաջանում : Սովորաբար դայլախսն սկսվում է յերեսի վրա, քթի մոտ : Հետազայում նա կարող է բռնել յիշախի մեծ մասը և նույնիսկ վիզը : Զբուժվելու գեղագում հիվանդությունը կարող է յերկար տարիներ և նույնիսկ տասնյակ տարիներ տեսիլ : Բայց յեթե դայլախտով հիվանդն իր ժամանակին, չենց հիվանդության սկզբից, դիմում է բժշկի, ապա բավականին կարճ ժամանակում բուժվում է կամ արեվի, կամ արհեստական լույսի և կամ թիւ վտքքիկ սպերացիայի միջոցով :

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶ

Փոքրահասակ յերեխաների տուբերկուլյոզը հաւաի արտահայտվում է այսպես կոչված «զեղձախտի» (սկրոֆուլյոզ) ձեվով : Գեղձախտի ժամանակ բուրոքվում է յերեխաների աչքերի շարակցական թաղանթը, թարախակալում են ականջները, զլիսի վրա յերեվում են ջրավող ցաներ, ուռչում են վզաղեղձերը :

Տուբերկուլյոզը մնասված զեղձերը ուռչում են նրանցում մեծ քանակությումը խոշոր համազույցներ գտնվելու հետեւանքով : Յերբեմն ամբողջ վիզը ողառած է լինում տուբերկուլյոզային պինդ զեղձերով մինչեւ ընկույզի և նույնիսկ ավելի (մինչեւ իսկ ձվի) մեծության : Այդ ուռուցքները կարող են փափկանալ, նրանց մեջ թարախ է դոյանում : Յեթե թարախը յերես և գուրս դալխա-խուղակ և ստացվում, վորը կարող է ամիսներով ու տարիներով թարախակալել :

Տուբերկուլյոզը հիվանդ յերեխան զանդաղ և ա-

Հում և թույլ և զարգանում, տասներկու տարեկանին
կարելի յէ 8 կամ 9 տարեկան համարել: Նա նիհար
և լինում, մաշկը բարակ և նուրբ, վոսկորները բա-
րակ, մկանները թույլ, կուրծքը նեղ: Այսպիսի յե-
րեխան սովորաբար վաս և ուսում, չուտ հոգնում ե
և մրսկոտ ե: Նա չի սիրում շատ խաղալ, վազվել ու
չարություն անել, հոգնում և արագ շարժումներից:

ՄԱՐԴՈՒ ՈՐԳԱՆԻԶՄԸ ԻՆՉՊԵՍ Ե ՊԱՅՔԱՐՈՒՄ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ (ՎԱՐԱԿԻ) ԴԵՄ

Տուրերկուլյոզը զանազան ձեվերով և լինասում
մարդու որգանիզմին և նրա հետեվանքը կարող է
միանդամայն տարեր լինել: Մեծ մասամբ, յերբ
կոփի ցուպիկն ընկնում է որգանիզմի մեջ դա մար-
դու համար աննկատելի յէ մնում և նա չի հիվան-
դանում: Շատ զեղքերում տուրերկուլյոզով վարակ-
ված մարդը այն հեշտությամբ է տանում և առանց
վորեկե բուժման արակ առողջանում է: Այդ տեսա-
կետից հետաքրքրական են տուրերկուլինի պատվաստ-
ման միջոցով կատարված փորձի տվյալները (տուրեր-
կուլինը տուրերկուլյոզի տոքսիններ պարունակող տու-
րերկուլյոզային ցուպիկների հյութն ե):

Յեթե մի կաթիլ տուրերկուլին, անդամ լուծված
վիճակում պատվաստեն տուրերկուլյոզով վարակված
մարդու մաշկի մնջ, ապա պատվաստված տեղում ու-
ռուցք և կարմրություն կառաջանի: Դա կատարվում
է այն պատճառով, փոք տուրերկուլյոզով վարակված
մարդու բջիջներն ընտելանում են ցուպիկի ու նրա

թույների դեմ պայքարելում։ Կարմրությունը և ուսուցքը հետվանք են որդանիզմի բջիջների և տուրերկուլյոգային տոքսինների միջել յեղած պայքարի։ Իսկ այն մարդը, վորի որդանիզմում յերբեք տուրերկուլյոգային վարակ չի յեղել, տուրերկուլյունի պատվաստումից մաշկի կարմրություն և ուսուցք չի առաջանում։ Մեծ քաղաքների համարյա ամբողջ հասակավոր բնակչությունը վարակված է տուրերկուլյոգով։ Այդ յերեվում և ինչպես տուրերկուլյոգային փորձի արդյունքներից, նույնպես և նրանից, վոր համարյա բոլոր մարդկանց թոքերում կարելի յե հայաարերել առողջացած տուրերկուլյոգի այս կամ այն փոփոխությունները։ Զնայած մեծ քաղաքների բնակչության տուրերկուլյոգի ինֆեկցիայով գլխովին վարակված լինելուն, այնուամենայնիվ իրականության մեջ տուրերկուլյոգով հիվանդանում է բնակչության 3—4 տոկոսը միայն։

Ի՞նչու տուրերկուլյոգային վարակը մի քանի դեպքերում որդանիզմում մեծ ավերածություններ և զործում, յերբեմն ել տուրերկուլյոգով վարակված մարդը հեշտությամբ և տանում վարակը, անգամ չնկատելով այն, ուրիշ դեպքերում ել հիվանդանում և, սակայն հիվանդությունը չառ հեշտությամբ և տանում և արագ ել առողջանում ։ Բանը այն է, վոր այդ հիվանդության ընթացքը կախված է վոչ միայն վարակի ու թույնի ներգործությունից, այլ խոչը չափերով այն որդանիզմի վիճակից, վորտեղ նաև ընկել է։ Մարդու որդանիզմը, նրա մեջ տուրերկուլյոգային

վարակ ընկնելիս անպարծ չի մնում, այէ ընդհակառակը, վարակի դեմ պայքարի յէ մտնում:

Ամենից ասաջ որդանիզմն արգելում է կոխի ցուպիկներին իր մեջ թափանցելուն: Այսպես որինակ, ներշնչվող աղի հետ, փոշու միջոցով քիթն ու թոքերն ընկնող միկրոբները, որդանիզմից մեծ մասամբ դուրս են դալիս հաղալիս ու փոշտալիս: Արյան մեջ գանվում են նյութեր-հակաթույներ, վորոնք թուլացնում են միկրոբներին և անվնաս մն դարձնում նրանց թույները: Արյան մեջ՝ գանվող այլ նյութեր միկրոբներին լուծում և մարսում են: Արյան մեջ կան նաև այնպիսի նյութեր, վորոնք կուտակում են միկրոբներին, սուրնձում և զրանավ անվնաս դարձնում նրանց: Արյան սպիտակ զնղիկները ընդունակ են միկրոբներին վորալու, նրանց մարսելու և վոչնչացնելու:

Որդանիզմի պայքարը տուբերկուլյոզային միկրոբների դեմ հաճախ կատարվում է և այլ ձանապարհներով: Վերը մենք խոսեցինք տուբերկուլյոզին բլրակների մասին: Բլրակը՝ դա տուբերկուլյոզային ցուպիկի ու նրա թույնի ազգեցության տակ կերպարնափոխած բջիջների հասարակ կուտակում չե: Դա միենույն ժամանակ տուբերկուլյոզային ցուպիկների դեմ մարդու որդանիզմի կողմից կառուցած արգելաղիծ, չըջապարիսպ է: Բլրակում, արյան սպիտակ զնղիկները շղթայով շրջապատում են ցուպիկների թունավորած բջիջներով: Այդ կարծիք առաջին փականն է: Այնուհետեւ բլրակներն ու հանդուցիկները չըջապատվում են սպիկների ամուր հյուսվածքով: Սոտիճանաբար այդ հյուսվածքը գերանում և բլրա-

կին, վորն ամբողջովին վեր և ածվում սպիթի: Յերբեմն ցուպիկի ու նրա թույների ազգեցության տակ բորբոքված ու քայքայված հյուսվածքներում արյունից նոսում են կրային աղեր: Թոքի վնասված մասը կարծես թե վեր և ածվում կրի մի փոքրիկ կտորի: Հաճախ հիվանդությունը դրանով ել վերջանում ե, որպանիզմը չնչին կորուստներով հաղթող և դուրս դարիս: Զի աշխատում, չնչառությանը չի մատնակցում թոքի մի փոքրիկ մասը, վորտեղ սպի կամ կրային կուտակում և գոյացել: Այդ կորուստը ասկայն նշանակություն չունի, — մարդը կարող և առընկը, թեկուղ նա չնչում և իր թոքերի մեկ յոթերորդ մասով միայն:

Մարդու որդանիզմում տուբերկուլյոզային ցուպիկների վիճակը կախված և որդանիզմի դրությունից: Միկրոբի աճելն ու բազմանալը կախված և այն միջավայրից, վորի մեջ միկրոբն ընկնում և: Առողջ մարդու որդանիզմը միկրոբների համար վատ միջավայր և առողջ մարմնի մեջ կոխի ցուպիկները չեն կարող հաղթել որդանիզմի պաշտպանողական ուժերին, նրանք շրջապատվում են սպիկներով ու կրտվ, վորոնք խանդարում են նրանց հետագա ներթափանցմանը թոքերի առողջ մասերի հյուսվածքների մեջ: Բայց չափից դուրս աշխատանքից, թերասնումդից, անկանոն կյանքից, կամ վորելե հյուծող հիվանդությունից թուլացած որդանիզմը թույլ և դիմադրում: Այդպիսի որդանիզմի պաշտպանողական ուժերը թույլ են լինում և այդպիսի դեպքերում լավ, ամուր սպի չի գոյանում:

Թոքերում կամ գեղձերում՝ սպիթ կամ կրային կուտակման մեջ յերեմն կոփի կենդանի ցուպիկներ են զանգում, վորոնք այստեղ տարիներով ու տասն-յակ տարիներով կարող են ապրել։ Սակայն, յերբ մարդու առողջությունը թուլանում է, սպիների ամ-րությունը պակասում է, կիրք վարող և լուծվել։ Այդ դեպքում ցուպիկները ներս են թափանցում թոքի առողջ մասերը և սկսում իրենց քայքայիչ աշխատանքը։

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր տուքերկու- լյովով վարակվելու և հիվանդության յելքը գլխավո- րակես կախված և որպանիզմի դիմացկանությունից և նրա դիմագրողական ընդունակություններից։ Հետե- մասին այն բոլոր պատճառները, վորոնք թուլացնում են մարդուն և նրա դիմագրողական ուժերը միկրոքների դեմ— հանդիսանում են տուքերկուլյողային վարակի լավգույն բարեկամներն ու ողնականները։ Այդ պատճառներն են՝ մի կողմից վեասակար ու ուժից վեր աշխատանքը, (բանվորի աշխատանքը կապիտալիստա- կան պետությունների մեջ) և մյուս կողմից՝ կենցա- դային վատասողջ պայմանները— վատ կամ անմաքուր պահվող բնակարանը, հարբեցողությունը, ծխելը, անկանոն սնունդը, անկանոն կյանքը։ Աշխատանքի առողջ պայմանների և առողջ կենցաղի համար մզվող պայքարը՝ տուքերկուլյողին հաղթելու լավագույն միջոցն է։

Այդ իսկ պատճառով տուքերկուլյողի բուժման հիմքը կանոնավոր կյանք վարելն է, այլ կերպ ա- ած, նրա հիգիենիկ ուժիմը։ Տուքերկուլյողով հի- վանդի հիգիենիկ ուժիմի հիմնական տարրերն են

(բազի ացուցիչ մասերը) թարմ ողը, կոփումը, աշխատանքի ու հանգստի կանոնավոր հերթափոխումը ու կանոնավոր սնունդը :

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ՈԴԱԲՈՒԺՈՒՄ

Բժշկականությունը վազուց արդեն հաստատել է, վոր մաքուր թարմ ողը տուրերկուլյողի բուժման լավագույն միջոցներից մեկն է : Սակայն մի ժամանակ բժիշկները դառնում ենին, վոր իրը թե ողով բուժել կարելի յե միայն կլիմայական հաստուկ պայմաններում — ծովափում, լեռներում կամ հարսովում : Անդիսացի բժիշկ Կորմանկը 1858 թ. առացուցեց, վոր ողավ բուժել կարելի յե կլիմայական ամեն մի պայմանում և վոր տուրերկուլյովավ հիվանդների մշտապես վակ չենքերում լինելը նրանց մեծապես վնասում է :

ՆԵՐԾՆՉՎՈՂ ՅԵՎ ԱՐՏԱՇՆՉՎՈՂ ՈԴ

Յուրաքանչյուր մարդու, առանձնապես հիվանդ մարդուն ողտակար ե միայն մաքուր, ամեն տեսակի խառնուրդներից ազատ ողը : Ինչից ե կազմված մաքուր ողը : Մեր ներշնչած մաքուր ողը կազմված է յերկու գլխավոր մասերից՝ թթվածնից ու բորակածնից : Մաքուր ողի հարյուր մասին բարակածին լինեամ և մոտավորապես 79, իսկ թթվածին — 21 մաս : Մարդու շնչելու համար հարկավոր ե միայն քրվածին :

Մարդու արտաշնչած ողն եր լազաղըությամբ
տարբեր է ներշնչված ողից : Արտաշնչած ողում թթվա-
ծինը քիչ է (100 մաս ողին միայն 16 մաս թթվածին) :
Ամկայն կա մի այլ զաղածիաթթու¹⁾ 100 մաս ողին
մաս ± մաս ածխաթթուի չափով, ինչպես նաև ջրա-
զոլորշի և մի քանի վնասակար խառնուրդներ : Ար-
տաշնչած ողը, վոր քիչ քանակությամբ թթվածին և
մեծ քանակությամբ ածխաթթու յէ պարունակում,
հետազա չնշառության համար, այլևս պիտանի չե :
Յեթե չողափոխվի այն չենքը, վորուել յերկար ժա-
մանակ մարդիկ չնշել են, այնտեղի ողը բոլորովին
կփչանա ու վնասակար կդառնա, մանավանդ տուրեր-
կուլյովով հիվանդի համար :

Վորքան ավելի մաքուր և ողը, այնքան նրանում
ավելի քիչ են զանազան հիվանդություններ առաջաց-
նող ամեն տեսակի միկրոբները : Շարունակ մաքուր
ողում լինելը տուրերկուլյովով հիվանդին պահպանում
և յերկրորդական հիվանդություններից (որինակ՝
զբիզ, անոլինտ և այլն), վորն առանձնապես կարեոր
և տուրերկուլյովային պրոցեսի բարեհաջող ընթացքի
համար :

Վորքան բնակավայրից հեռանում ես, այնքան ա-
վելի և ավելի յէ մաքրվում ողը միկրոբներից և ու-
րեւ խառնուրդներից :

1) Ածխաթթուն ինքնին թօւնավոր չե, բայց ողում նրա մեծ
քանակությունը աղացուցում է ողի կեղտոտագուծ լինելը որդանիդ-
մի համար վնասակար նյութերով:

Ողլ կարող եւ փչանալ վոչ միայն չնչառությունից : Արդյունաբերական քաղաքներում ու ավաններում, վորտեղ շարունակ ծխում են գործարանների ու ֆաբրիկաների ծխնելութիւնը, ողում կարող ե մուգ, այսինքն ածխավոշի լողալ : Զոր յեզանակին փոշի կա վաս ջրվող փողոցներում, նաև բնակարաններում, յեթե նրանց նկատմամբ բացակայում ե պատշաճ խնամքը : Բնակարանում ողը փչանում է խոնավությունից, վաս պահվող զուգարաններից, սպիտակեղեն լվանալուց և կերակրուր ուղարաստելուց, ծխախոտի ծխից, կեղաստ մարմնից, կեղաստ հագուստից ու սպիտակեղենից : Փողոցի ողը կարող է փչանալ նաև բենզինի (ավտոմոբիլային) հոսքից, այլև վաս խցանված տակառներով անմաքրություններ ունեցափոխելիս : Սակայն այդ բոլոր վնասակար յերեւույթները զգալի չափով կարելի յեւ մեկուսացնել քաղաքների բարեկարգության վերաբերյալ միջոցների հիբառմամբ (կամաչազարդում, փողոցների ջրում և այլն) :

ՄԱՔՐՈՒՐ ՈԴԻ ԲՈՒԺԻՉԻՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Թոքերի միջով շարունակ անցնող մաքուր ողը լայակույն միջոցն է խորխը հեշտությամբ և աղատորեն իրելու համար : Հայտնի յեւ, վոր հիվանդները խորխը լավ խխում են առավտաները մաքուր ող դուրս գալիս : Այդ առանձնապես կարեոր նշանամիւթյուն ունի

թոքային հիվանդությունների համար : ՅԵթև հիվանդությունը շարժվում է — նա ավելի խորն և շնչում, այդ գեղքում ողլ մտնում է թոքի ամենախոր մասները և լորձով խցանված թոքերի մանր ցնցուղները (բրոնխիները) մատչելի յեն դառնում մաքուր ուղով ողափոխելու համար : Մաքուր ողի այդ ազդեցությունը չի դադարում նաև քնած ժամանակ : Ամառը բաց ողում կամ բաց արած լուսամուտներով սենյակում քնող հիվանդները հաճախ հաղալուց զարթնում են, իսրիս են արտախիսում և ոկզբում կարծում են, վոր թարմ ողը իրենց վնաս և : Բայց նրանցից շատերն ել չուտով նկատում են, վոր անհետանում և տապահույան առատ արտախիսումով հաճախ հողնեցուցիչ նոպան և վոր — դրա հետեանքով սկսվում և ինքնազգացողություն զգալի բարելավում :

Մաքուր ողը նպաստելով մանր ցնցուղների լորձից աղատվելուն, հետեազես նաև թոքերի ավելի լայն ողափոխությանը, զբանով իսկ ողնում և թրթվածնի լավ կլանվելուն և արյան բաղադրության բարելավելուն : Այդ անմիջապես արտահայտվում և հիվանդի ամրագչ որդանիդմի վրա, ընդվորում հիվանդը ամենից առաջ նկատում և ախորժակի լավացում : Վաստ ախորժակը և յերրեմն ել նբա կատարյալ բացակայությունը հաճախ հանդիսանում և սկսվող տուբերկուլյոզի ամենաբնորոշ նշաններից մեկը և յերրեմն ուժերի արագ անկման պատճառ հանդիսանում : Ախորժակի յերեան վալը չափազանց բարենպաստ աղղեցություն և անում տուբերկուլյոզի հիվանդի առողջության վրա և հնարավորություն և

ողալիս ողտագործելու բուժման մի այլ կարևոր յեղանակը — բավականաչափ ու կանոնավոր անունդը :

ՄԱՔՈՒՐ ՈԴԸ ԹԵԹԵՎԱՑՆՈՒՄ Ե ԹՌՅԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ինչպես վերն արդեն նշվեց, արտաշնչված ողը թթվածնով ավելի աղքատ եւ քան մաքուլ, թարմ ողը: Վորագեսղի թթվածնով աղքատ ողեց անհրաժեշտ քանակությամբ թթվածին ստանա, մարդն ստիպված է իր թոքերով ավելի ուժեղ աշխատել և ավելի հաճախ չնչել: Այդ օղատառով ել վատ ողով չենքում ավելի հաճախ և ավելի մակերեսորեն ե չնչվում, իսկ թարմ ողում, ընդհակառակը, ուշուց և խորն ե չնչվում: Մաքուր ողը թեթեվացնում ե թոքերի աշխատանքը և դրանով ողնում ե հիվանդության առաջորեն դադարելուն:

Մաքուր ողը մարդու ամբողջ որդանիզմի վրա պրզող աղղեցություն ե զործում: Մաքուր ողում լինելուց հետո մարդ իրեն զզալիորեն առույգ և աշխատունակ ե զգում: Նայեցեք զբոսանքեց վերադարձած մարդուն — նրա տեսքը զվարթ և, դեմքի դույնը կարմիր, առողջ, աչքերը փայլուն: Թարմ ողի բարենպատ, կայտառացնով աղղեցությունն արտահայտվում և մարդու վոչ միայն Փիզիկական (մարմնի), այլև մտավոր աշխատանքի վրա: Թարմ ողն ել ավելի խոշոր նշանակություն ունի արյունապակառ կամ հիվանդությունից թուլացած մարդկանց, մասնավանդ տուբերկուլյոզով հիվանդների աշխատանքի

Համար : Վաս ողբ դժվարացնում եւ թոքերի աշխատանքը՝ ածխաթթուն, ջրադոլորչին և որդանիզմի համար զանազան անպետք թափանների արտադրման գործում, վորոնք դուրս են դալիս դազի ձեռվլ : Թափանների մնալը և ներշնչվող վաս ողում գտնվող վնասակար խառնուրդները թուլացնում են մարդու սրբանիզմը ամեն տեսակի վարակի, այդ թվում նաև կոխի ցուպիկների դեմ պայքարելու նրա ընդունակությունները : Մաքուր ողում աշխատող մարդիկ (որինակ, ձկնորսները) ալելի քիչ և ավելի թեթև էր հիվանդանում տուրերկուլյոզով, քանի բանվորական վահանքերում աշխատող մարդիկ, որինակ դերձակները : Այդ պատճառով նատած աշխատանքով դրազվող մարդիկ որտեսն մի քանի ժամ պետք է բաց ողում անցկանցին :

ԱՄԲՈՂՋ ՈՐԸ ԲԱՑ ՌԴՈՒՄ

Վերեւում տոածներից հետո պարզ հասկանալի յէ, թե ինչու մաքուր ողն այնքան խոշոր նշանակություն ունի տուրերկուլյոզի բուժման զործում :

Տուրերկուլյոզով հիվանդների սանատորիաներում ալելի ամբակազմ հիվանդներն ամառն ամբողջ ժամանակ ապրում են բաց ողում, շենքերից դուրս, ցերեկը նրանք անց են կացնում այլում կամ պուրակում, իսկ դիշերում են հատուկ կառուցած ծածկոցներում (պատշպամբներում) : Պատշպամբը նայում է շեովի հարավ և յերեք կողմից ծածկված ե :

Սանատորական շատ հիվանդներ ձմռանը նույն-

պես որվա մհծ մասը բաց ողումն են անցկացնում
—կամ զբոսնում են, կամ պառկում պատշգամբում,
ցուրտ յեղանակին ծածկվելով մորթե վերժակներով:
Թույլ հիվանդները բաց ողում ժամերով նստում կամ
թիկն են տալիս բազմոցներում, բայց վորում տարվա
ցուրտ ժամանակ վոտները փաթաթում են մորթե պար-
կով կամ տաք վերժակով:

Այսպես է կաղմակերպված զործը սանատորիա-
ներում: Հարց է ծաղում, արգյուք տնային պայման-
ներում հիվանդը կարո՞ղ է այլքան ժամանակ բաց
ողում անցկացնել: Յեթե հիվանդը չի աշխատում,
որինակ, հիվանդության պատճառով արձակուրդում է
դանվում, նա պիտի աշխատի ամառն ամբողջ որը
(24 ժամ) բաց ողում անցկացնել, իսկ ձմռանը՝ որվա
մհծ մասը: Ցուրտ յեղանակին զբոսանքի դնալիս,
կամ բաց ողում պատկելիս հիվանդը պիտի բավակա-
նաչափ տաք հաղնի: Զմեռվա ցուրտ որերին պիտի
հաղնի տաք հաղուստ, տաք սպիտակեղեն ու կոշիկ-
ներ: Պառկելիս պիտի ծածկվի տաք վերժակով, ա-
ռանձնապես վստաները պիտի լավ փաթաթի: Ամենից
լավ է, յեթե հաղած և թաղիքե կոշիկներ (վալենկի):
Սակայն հիվանդի յերեսը պետք է բոլորովին բաց
լինի, վորովեսղի առանց վորեկ արզելքի թարմ ող-
չնչի:

Տնային պայմաններում բաց ողում պառկելու
հնարավորություն ունենալու համար անհրաժեշտ է
անձրեվից, արևելի չափազանց վառ ձառապայթներից,
կամ ուժեղ քամուց պաշտպանվելու հարժարություն-
ներ ստեղծել — ծածկ, այլում հովնոց (բեսեղկա),

կամ հյուղակ շինել։ Այն տունը, վորտեղ հիվանդն է ապրում, յեթե ունի թեկուղ մի փոքրիկ կանուչ այդի կամ բանջարանոց, ապա ամենից լավ է հենց այլպիսի տեղում հովնոց կամ հյուղակ շինել։ Այդտեղ պետք է դնել յեղեգնից հյուսած բաղկաթոռ, թախթ կամ բազմոց, վորը հեշտ լինի տեղափոխել։ Այդպիսի հովնոցում կամ ծածկի տակ հիվանդը կարող է ամառ ժամանակ նաև քնել գիշերը։ Յեթե հովնոց չկա, ապա ամառը կարելի յե քնել մի կողմից բաց պատշգամբում, իսկ գյուղում՝ խոտանոցում։

Սշիստող հիվանդը, վորը 7—8 ժամ անց և կացնում ցեխում կամ գրասենյակում, բաց ողում լինելու համար պիտի ոգտագործի իր ազատ ժամերը, մանավանդ քնելու ժամերը։ Քաղաքաներում զբունելու համար ամենից լավ է լինել կուլտուրայի և հանգստի պարկերում, մերձքաղաքային վայրերում ու անտառներում, քաղաքային այգիներում, պուրակներում և այլն։

Քաղաքից դուքս ողն ավելի մաքուր է, քան քաղաքում։ Ամելի ամբակազմ հիվանդն ըստ հնարավորության պիտի ամելի հաճախ դուքս դա քաղաքից, որինակ հանգստի որերը։ Յուրաքանչյուր տարվա հերթական արձակուրդը նույնպես քաղաքից դուքս պիտի անցկացնել— զնալ դյուղ, անտառնոց կամ հանգստի տուն։ Դաշտի կամ անտառի ողը թարմ է, դուքսեկան և թթվածնով հարուստ։ Տուքերկույզով հիվանդների համար առանձնապես ոգտակար և տափաստանի կամ փշատերեց սոճու անտառի ողը։

ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՈԴԱՓՈԽՈՒՄԸ.

Վորքան ել վոր հիվանդը աշխատի ավելի շատ ժամանակ չենքից զուրս, թարմ ողում դանովել, այս ուստամենայնիվ նա ստիգմած է զարձյալ բարվական ժամանակ իր սենյակում անցկացնել: Իսկ մի քանի հիվանդներ, պրոցեսի սրբելու կամ վորելի այլ բարդության հետեանքով, բժշկե կարդաղըությամբ, ժամանակ առ ժամանակ, մի քանի որով, իսկ յերբեմն նաև շուրաթներով սինու սպառկեն: Սակայն այլ դեմքում ել հիվանդն ամբողջ որը պիտի թարմ ող չնչի:

Սանտառական պալատում ամուսնն ամբողջ ժամանակ բաց մն լուսամուտները, իսկ ճմուսը՝ վերափեղելերը:

Վերնափեղելը-լուսամուտի շրջանակի վերեկի հետ ծալովի մասն ե, վորը շինված է այնպես, վոր գեղի սենյակի ներմու և բացվում վոչ թե ամբողջովին, այլ մասումք: Դրա հետեանքով ողի ցուրտ հոսանքը նախ ուղղվում և դեպի առաստաղը, այնտեղ առքանում և, իսկ հետո աստիճանաբար խառնվում և սենյակի ողի հետ: Այս դեմքում ողի սուր ցուրտ հոսանք չի ստացվում, վորը թույլ հիվանդի համար անդուրեկան ե:

Յուրաքանչյուր հիվանդ 15—20 սուր. ծախսելով կարող է իր տան լուսամուտների համար վերնափեղելը շինել, սակայն յեթե այդպիսի ծախս անելը նրա ուժերից վեր է, ապա լուսամուտի վերնափեղելը կարելի յե փոխարինել ավելի եժան հարմարանքով:

Քաներայով կամ բարակ տախտակից ողանցքի մեծության արկղ են շինում: Արկղի մի պատը սղոցում էն, արկղը այդ պատով դրվում և ողանցքի մեջ, վրբը պիտի դարձված լինի դեպի դուրս: Արկղի սենյակի կողմը դարձված ներսի պատը պատը պիտի չեղ դրված լինի և դեպի առաստաղը դարձված բացվածք հանենա: Այդպիսի պարզ և եժան գործիքը տպահովում և թարմ ողի անընդհատ հոսանքը և այս դեպքում սենյակի արադ ցրտելը հնարավոր չե: Գիշերը փեղկի և ողանցքի մեջ կարելի յե քաթանի շիրմա դնել: Շիրման չի խանդարում ողի աղատ փոխանակությունը, բայց քամու շարժումը դեպի հիվանդի կողմը արգելում է:

Բայց յեթե չկա վոչ վերնավեղկ, վոչ արկղ, վոչ շիրմա— ապա հիվանդի սենյակում ճմեռն ևլ ողանցքն ըստ հնարավորության պետք և յերկար ժամանակ բաց թողնել: Սենյակն առանձնապես պիտի լավ ողատվոխել սուսվույան դարթնելուց հետո, յերեկոյան քնելուց սուած, նաև յուրաքանչյուր անդամուտելուց հետո: Յուրա յեղանակներին պիտի հոգ տանել սենյակները կանոնավոր տաքացնելու մասին, վորպեսզի ուժեղ ողատվոխումից, հիվանդը, մանականդ չափաղանց զգայուն ու դեռևս իր որդանիզմը բավականաչափ չամբաղնդված հիվանդը, ցրտից չինասպի:

ՎՈՐՏԵՂ ԴՆԵԼ ՄԱՀՃԱԿԱԼԸ

Հիվանդի մահճակալը պիտի դրվի բուսամուտի մոտ: Պառկած հիվանդը սենյակումն ել կարող ե

տաք, խաղաղ յեղանակին դրսի մաքուր ող չնչել։
Դրա համար անկողինը պիտի սարքել բարձր, լուսա-
մուտի մակերեսին հավասար։ Յեթե լուսամուտը
բարձր է, ապա անկողնու համար կարելի յէ ոզտա-
դործել նույնիսկ սեղանը։ Գլուխը կարելի յէ գնել
հենց լուսամուտի գողին։ Պառկելով սենյակում, հի-
վանդը դրա շնորհիվ, կարող է դրսի մաքուր ող շն-
չել։

ՄՐՄԵԼՈՒ ՑԵՎ ՄԻԶԱՆՑԱՀՈՎԵՐԻ ՄՅ.ՄԻՆ

Հաճախ հիվանդները թարմ ող քիչ են շնչում
ոյն պատճառով, վոր վախենում են մքսելուց և
մանավանդ միջանցահովից։ Մրսելու աղղեցության
են վերագրում ամեն տեսակի, անգամ մբսածության
հետ վոչ մի տօնչություն չունեցող հիվանդություն-
ներ։

Իր մեջ իրական վտանգ պարունակում է մարմնի
ուժեղ և խիստ սառչելլ։ Յեթե, որինակ, մարդը
ընկել է սառուցցի բացվածքի մեջ, ամբողջովին թըրջ-
վել է ու գոլացել, կամ թեթե հագնված մարդը քա-
մու ժամանակ յերկար կանգնել և ցուրտ անձրեի-
տակ, ապա զբանից հետո զարմանալի չե, մոր նա
վորեն հիվանդությամբ հիվանդանա։

Լուրջ նշանակություն կարող է ունենալ նաև ան-
հսկաարաշափ սառչելլ։ Յեթե, որինակ, ցուրտ յե-
ղանակին յերկար ժամանակ և առանց շաբժվելու
նստենք բաց լուսամուտի առաջ, վորտեղից սառը
ողի սուր հոսանք և զալիս, ապա յերեսի կամ վզի

մի կողմբ կատոչի : Սուր և անհավասար սառչում տեղի յն ունենում նաև այն դեպքում , յերբ մարդիկ (նույնական տաք հազնիված) թրջում կամ ուժին կերպով մրսեցնում և վոտները : Նման դեպքում , մրսելուց յերբեմն հիվանդանում են մանավանդ այնպիսի մարդիկ , վորոնք ցրտի սովոր չեն : Այդ ուստածուով եւ , ինչպես առողջ մարդիկ , նույնպիս և մանավանդ հիվանդները , պետք է զգուշանան ամբողջ մարմինը կամ նրա սուանձին մասերը խիստ և անհավասարաչափ մրսեցնելուց :

Սակայն , վորոնքների մրսելու եյությունը հասկանուի լինի , անհրաժեշտ ե լիմանալ , վոր համարյա բոլոր , այսպես կոչված մրսածության հետևանքով հիվանդությունները (զրիպ , անողինա , թոքերի բորբոքում և այլն) խսկապես սուած են զալիս զանազան միկրոբներից : Մրսածությունն անմիջականորեն այդ հիվանդությունները չի առաջացնում , սակայն նա թուլացնում և մեր որդանիդմը և նրա ընդունակությունները պաշտպանվելու միկրոբներից , վորոնք որդանիդմի մեջ են ընկնում : Մաքուր , թարմ ողը , վորք մեջ միկրոբները չատ քիչ են , չարտավելի լույս ուղաշտուանում ամեն անսակի հիվանդություններից , քան նեղ , հեղձուկ բնակարանի ողը , վորը բառացիորեն լեփ-լեցուն և հիվանդությունների ամեն անսակի հարուցիչներով :

Յաւոք սրտի , հաճախ ասիթ և լինում նկատել , թե ինչպես քաղաքի բնակիչները վախենում են ամենթիթե միջանցահովից , թարմ ողի ամենամեղմ հուսանքից : Բաց լուսամուտներից առանձնապես վախե-

նում մն փոքր յերեխաներ ունեցող ժայրերը, սակայն փոքր յերեխաների համար ևս վնաս է վոչ թե թեթե միջանցահովը, այլ աղականված վշացած ողը:

Թաքմ և սառը ողին մշտական ու աստիճանաբար վարժմելը կովում և ցրտի և մրսելու դեմ: Այդպիսի կովումը հատկապես խոշոր նշանակություն ունի տուրերկուլյոգով հիվանդի համար:

ԹԱՐՄ ՈԴՆ ԱՆՀՇԱԺԵԾՏ Ե ՎՈՉ ՄԻԱՅՆ ՀԵ-

ՎԱՆԻՆԵՐԻՆ, ԱՅԼԵՎ ԱՌՈՂՋՆԵՐԻՆ

Յերբ հիվանդը սանատորիայից կամ կուրորտից տուն և վերադառնում, նա ձգուում է իր տնային ուսուցանութերում ևս կիրառել ոճմեմի այն կանոնները և կանոնադր ապրելակերպը, վորոնց սովորեցրել են նրան այսուեղ: Սանատորիայում սովորած լինելով բաց հովնոցում քնիլու, բայն բացված լուսամուտների, ամենորյա յերկարատես գրասանքների, մաքուր թարմ ողի, — բնականաբար նա տանին ել ամենից առաջ յեռանդուն կերպով հոգ և ատառում ողափոխության ժամանք: Սակայն այսուեղ նա ամենուրեք հանդիպում է իր հարազատների դիմագրությանը, վորոնք պահպանում են «տաք շունչը», և ձմռանը հաճախ ըստ ողանցքից ավելի յեն վախենում, քան կրակից: Այդպիսի ղեպքերում հիվանդը պետք է հանդիսան Համբերությամբ, սակայն հաստատակամորեն բացառի իր ընտանիքին, վոր մաքուր ողը անհրաժեշտ և ողակար վոչ միայն հիվանդ մարդուն, այլև առղջին, ինչպես հասակալորին, նույնպես ել յերե-

իային։ Թարմ ողը բուժման հրաշալի միջոց է վոչ միայն հիվանդաց մարդու համար, նու նախառահանգանում և առողջներին զանազան հիվանդություններից, այդ թվում նաև տուբերկուլյուզից։

Զե՞ վոր մաքուր ողում միկրոբներ (այդ թվում նաև տուբերկուլյուզին) չնչին քանակությամբ են լինում, իսկ կեզտոտված ողում՝ նրանք չափազանց չափ են։ Մարդիկ, վորոնք շարունակ վատ ող են նշում, հաճախ տառապում են արյան պակասությամբ ու դիմացավով։ Մաքուր ողը նպաստում է հանդիսանքներուն, արյան լավ բաղադրությանը, նորմալ ախորժակին։ այդ բոլորն առողջության դրավական են հանդիսանում։

Վոչ միայն մաքուր ողը, այլև ամբողջ ապրելակերպ, վոր զիտությունը պատվիրավորում է տուբերկուլյուզի հիվանդին, հիմնականում ողոտակար և նաև առողջ մարդու համար։ Յեթ յեթե առողջ մարդը կատարի սանատորական ռեժիմի բոլոր կետերը, այսինքն հոգ տանի թարմ ողի, մաքուր բնակարանի, կանոնավոր սննդի, աշխատանքի ու հանգստի խելացի հերթափոխություն մասին, յեթե նա ի չարք չկործադրի ծիսեն ու վողելից խմիչքները— նա կը կուփովի, կամ բասկովի և դրանով իսկ կպաշտպանի իր որդանիկմն ամեն տեսակի հիվանդություններից։

ՊԱՅՔԱՐ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Մաքուր ողի մասին հողատարությունը պահանջում է պայքարել բնակարանի խօնավության դեմ։

Բնակարանում խոնավություն առաջանում է նըստանից, վոր չենքի պատերը խոնավանում են, այսպինքն ջուր ևն ծծում: Շինարարական նյութերը (փայտ, աղյուս կամ քար) հոծ մասսա չեն ներկայացնում:

Շինամյութերի առանձին մասնիկների միջև գտնվում են փոքրիկ, աչքի համար անհկատելի բացդժներ-ծակոտիներ, փորոնք սովորաբար լցված են լինում ողով: Այդ ծակոտինների միջոցով շարունակ կատարվում է սենյակի ողի և դրսի ողի փոխանակությունը. դու կոչվում է չենքի բնական ողափոխություն (ինքաբեր ողափոխություն):

Սակայն խոնավության զեղութեամ այդ ծակոտիները ողի փոխարեն ջրով են լցվում: Բնական ողափոխությունը զաղարում է և չենքում ողը նեխած և լինում: Խոնավությունը շատ մնասակար և զարձնում բնակարանը առողջության համար: Մարմնի նորմակությունը (ջրագուրբու արտադրումը) չնշանության և քրտինքի զատվելու միջոցով, զժվարանում է: Խոնավ ողը մարմնից շատ տաքություն է իրում և կարող է հասցնել սառչելու: Խոնավ պատերի վրա մնասակար զագեր արտադրող բորբոս և դոյանում:

Խոնավությունից խռասափերու համար բնակելի սենյակում թաց իրեր չպիտի պահել, որինակ, թաց սպիտակեղեն և հագուստ: Լվացքը, ամանեղենները բխնալը և կերակուր պատրաստելը պիտի կատարվի առանձին չենքում: Հատակը և պատերը լվանալուց հետ պիտի չորացնել, իսկ այնուհետեւ սենյակը հիմնովին ողափոխել: Խոնավ չենքը հաջողվում է չորաց-

նել, յիթե ամառը մի քանի որ շաբունակ այնուեղ վասարան վառվի միաժամանակ և յեռանդուն կերպով ողափոխի:

ՈԴԻ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ ԲՆԱԿԱՌԱՆՈՒՄ

Վորպեսզի բնակարանում ողը չոր լինի և վոչ չափազանց սառը, անհրաժեշտ և հոգ տանել բնակարանը կանոնավոր տաքացնելու մասին։ Բնակարանի հորմալ տաքությունը համարվում է Յելսիուսի ջերմաչափով 14—16 սատինանը։ Ավելի բարձր տաքությունը թուլացնող ազդեցություն և ունանում մարդու վրա։ Սանառորիաներում յեղած տուբերկուլյոզով հիմնդները հաճախ սովորում են 12 և 10 տատիճանի։ Սակայն ամելի ցածր ջերմաստիճանի մարդկանց մեծ մասը դժվարությամբ է ընտելանում, իսկ այդպիսի դուրսը կարող է թուլացնել որդանիզմը և հետազոտում մրսածության հիվանդությունների պատճառ հանդիսանալ։

ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԹԱՔՄ ՈԴԻՆ ԸՆՏԵԼԱՆԱԼ

Յեթե հիվանդը թույլ է և սառը ողին անսովոր, առաջ վորոշ զգուշություն պահպանելով, նրան սառը ողի պիտի վարժեցնել աստիճանաբար։ Տարվա ցուրտ յեղանակին, սկզբում չպիտի բանալ այն սենյակի լուսամուռը, վորտեղ հիվանդն է ողառկած, այլ հարեւան սենյակինը, յիթե այդ սենյակը հիվանդի սենյակի հետ հաղորդակցվում է բաց դռնով։ Այսուհետեւ ողափոխությունը կարելի յէ կառարել վարագույրն իջեց-

բամ լուսամուտի և մահճակալի մեջ չիրմա դնել-
լով, խոկ բավականաչափ սովորելուց հետո, ողափա-
խությունը թույլատրելի յեւ վարագույրը բարձրացրած
բաց լուսամուտով։ Քանի զիս հիմանդը չի ընտելա-
ցել, ողանցքը կամ լուսամուտը կարելի յեւ բաց անել
մոչ ամբողջ որը, այլ որովայ ավելի տաքը ժամերին։
Այդպիսի զեղքերում լուսամասը վակում են լվա-
ցումների կամ շփումների ժամանակ, ուժեղ քառու-
կամ ցուրտ աձնորեցի ժամանակի, յեղանակի խիստ վա-
փոխության գեալքում և այլն։

Զմեուը բաց ողում պառկելուն նույնագիս պետք և
աստիճանաբար սովորեցնել իրեն։ Յուրա սկզբ անց-
կացնելուն կարելի յեւ վարժվել սկսելով կես ժամից
և մասել յերկար ժամերով։ Համարյա ամեն մի հի-
մանդ, նույնիսկ ամենաթույրը, աստիճանաբար վարժ-
վում և ցուրտ ողին։ Միայն հասակավորները, արյու-
նապականները, կամ շատ ջղացին մարդիկ յերբեմն
զժվարությամբ են վարժվում ցլատին։ Այլպիսի հի-
մանդները ստիպված են մնում շատ յերկար ժամա-
նակ պառը լինել։

ՊԵՏՔ Ե ՔԹԱՎԸ ՇՆՉԵԼ

Անհրաժեշտ և սովորել չնշել քթով, և վոչ թ-
բերանով։

Յերբ մարդ քթով և չնշում, սպա սասը ողը քթի
միջոցով բավական յերկար ճանապարհ անցնելով տա-
քանում և։ Կոկորդում, ցնցուղներում և թոքերում,
նույնիսկ ցուրտ յեղանակին, ողն արգեն բավական

ուսլացած և մտնում: Բներանով շնչելիս ողբ ավելի
կարճ ճանապարհ և անցնում: Այդ պատճառով եւ
ցուրտ յեզանակին սառը ողբ ընկնելով ողատար ու-
ղիները և թոքերը, կարող և մնաս պատճառել:

Քթի մեջ բազմաթիվ մանր մաղիկներ կան, վո-
րոնք պահում են փոշին: Յեթե փոշոս ողբ քթով և
ներշնչվում, փոշին քթում նստում և այդ մաղիկների
վրա, լորձի հետ զուրս եւ զալիս և չի հասնում մինչեւ
կոկրդը, ցնցուղներն ու թոքերը: Յերեխաներին ա-
մենավոր հասակից պիտք և սովորեցնել քթով կանո-
նավոր շնչելու: Յերեմն յերեխաները քթով շնչել-
շեն կարստանում, քթի կամ քիթըմպանի վորեւ հի-
մանգության հետեւանքով: Այդպիսի հիմանգությունն
անհրաժեշտ է անմիջապես բուժել մասնազետ թթիչկ-
ների մոտ:

Քթով կանոնավոր շնչելն առանձնապես խոշոր
նշանակություն ունի տուրերիությունով հիմանդի հա-
մար, վարովհետեւ հիմանդրությունից թուլացած թոքե-
րը պետք և պաշտպանել փոշոս և կեղանուված ողից:

ԳԼՈՒԽ ՅԵՐԵՐՈՐԴ

ԿՐԻԹԻԿ (Բուժում ջրով ու արեվով)

Մենք արդեն գիտենք, վոր վարժվելու դեպքում
մարդիկ ցուրտ ջերմաստիճանը հեշտությամբ են տա-
նում: Այսին, սահատոքական շատ հիմանդրեր ձմեռ-
ուր, նույնիսկ 15 աստիճան ցըսում հավացում քնում
են: Յբախն գիմացկուն մարդը տասնց վնասվելու թե-
թեկ և հաղնվում նաև ցուրտ յեզանակին, անսպառ

մարդը կարող է մըսին նույնիսկ մուշտակը հագած ժամանեակ : Ցըտին անսովոր մարդը թարմ ող չի սիրում , ողանցը հաճությամբ լաց չի անում , իսկ ձմեռային սառնամանիքին պատրաստ է նույնիսկ լաւարանի մոտից չհեռանալ կամ քաշվել մի այլ , թիկուզ հեղձուցիչ , միայն թե առք անկյուն : Ահա թե նոյն անհրաժեշտ է , վորպեսզի տուրերկուլյուզով հիվանդը , վորի համար թարմ ողը հանդիսանում է բուժվելու ամենակարելուր միջոցներից մեկը , իրենց ըլուի սովորեցնի :

Սաոր ողը ամենից առաջ ազդում է մաշկի վրա , վորը և կոփինը կարիք ունի : Մաշկը մեր մորմնի հոգմար միայն ծածկոց չե , վոր նրան պաշտպանում է արտաքին աշխարհի մնասակար ազդեցություններից : Մաշկը-որպան է , վորը մարդկային որդանիզմի կյանքում խոշոր նշանակություն ունի : Շատ նշանավոր դիտնականներ յենթազերում են , վոր մաշկի մեջ մշակում և տուրերկուլյուզային ցուպիկների թույների (տոքսինների) գեմ որաշտպանողական նյութեր , և վոր հետեւապես մաշկը տուրերկուլյուզային ինֆեկցիայի (վարակի) գեմ , որդանիզմի պաշտպանության գործում խոշոր դեր է խաղում :

Մաշկի կարեմորագույն Փունկցիաներից մեկը — քրտինք և ձարակ արտադրեն ե : Քրտինքի հետ միասնին որպանիզմից արտադրվում են նրա համար լնաւակար , ավելորդ դարձած նյութերը — թափոնները : Քրտինք , արտադրվում է մաշկի հատուկ գեղձերի միջոցով : Տուրերկուլյուզով հիվանդը ժամանակ առ ժամանակ սաստիկ քրտնում է : Յեթե մաշկը կեզտու-

ված է, ապա քրտինքային զեղձերի ծակոտիները կարող են խցանվել և այդ դեպքում քրտինքը չի կարող կանոնավոր արտադրվել:

Մաշերում կան չեան հատուկ ճարուային զեղձեր՝ նրանք մաշկաճարապ են արտադրում: Այդ մաշկաճարապի շնորհիվ, մաշկը փափուսկ, հարթ և առածդական է: Յեթի մաշկի մաքրությանը չհետեւվին, ապա մաշկը կկեղաստավի և ճարագագեղձերի ծակոտիները կիսցանվեն: Այդ դեպքում ճարալը վաստ և ալտադրվում, մաշկը չորանությամբ ճաքճքվում: Խցանախած զեղձերում ճարալը կանդ և առնում, նրա մեջ ընկնում են փատածին միկրոբներ, վորոնք իրենց համար նախառավոր միջավայրում, ինչպիսին ճարպն է, առաստությամբ բազմանում են: Մաշկի վրա սկրիպում գոյանում են բշտիկներ, իսկ հետո պղուկներ:

Պղուկներն առանձին հեշտությամբ դոյցանում են անմաքրասեր, հաճախ քրտնող տուբերկուլյոզով հեմանգի վրա, վորովհետև թուլացած մարզու մաշկի բջիջները միկրոբներից ավելի վաստ են պաշտպանվում: Անմաքրասեր տուբերկուլյոզով հիվանդի մաշկի վրա հաճախ նկատվում են դեղին բծեր, վորոնք առաջնում են հատուկ տեսակի սնկերկներից: Վոչ սնկիկներ և վոչ ել թարախային պղուկներ կան այն հիվանդների վրա, վորոնք իրենց մաշկը խիստ մաքուր են պլահում:

ԶՐԱԲՈՒԺՈՒՄ : ՎԱՆԱՆԵՐ

Զուրը տուքերկուլյողավ հիմանդի բուժման գործում խոշոր դեր է խաղում: Զրաբուժումը նպաստում է վոչ միայն մաշկի մաքրությանը, այլև մաշկի, մորովեռ որդանի, լավ աշխատելուն, վորն ոզնում և որդանիդմի ոլուտպանության ուժեղացմանը սունեն տեսակի ինֆեկցիաների դեմ: Զրաբուժական սրոցեղուրանների կանոնավոր կիրառումը բարեկարգում և արտի զործունեցությունը և արյան շրջանառությունը, յավացնում և ախորժակը և նպաստում ավելի կանոնավոր և խորը չնչելուն:

Մաշկը մաքուր պահելու համար վերցորյակը ժեկանդամ պիտի վաճնա ընդունել կամ բաղնիքում լորանալ: Վաճնան պիտի տաք լինի, բայց վոչ չափազանց կիզիչ (32—35 աստիճան): Վաճնա պիտի ընդունել 10—12 բուք տեսվողությամբ: Միաժամանակ ունառով պիտի ըալ լիացվել, վորովեսդի մաշկի վրայից հեռացվեն քրտինքը, մաշկաճարակի մնացորդները, կեղաը, մաշկի թեփը և այլն: Լողանալուց հետո խորհուրդ և որովում ավելի սառը ջրով (վոչ չափազանց սառը, 24—28 աստիճան) ջրցանվել, ասա մաշկը լավ չարացնել ու կես ժամ, մեկ ժամ հանդսատանալ:

Վորոշ հիմանդներ վաճնա ընդունելիս պետք է վորոշ զդուչություն ունալուանեն: Յեթե հիմանդի ջերմությունը բարձր է, ասպա վաճնայի ընդունումը պետք է կարճատեվ լինի (մոտ 5 բուք): Հյուծված կամ խիստ չերմող հիմանդները վաճնա ընդունելուց ժամանակավորապես պետք է հրաժարվեն:

Արյունախիսման ժամանակ վաճնա ընդունելը վը-

տանդարձուք և : Տուրերկուլյուսյին սահսառը իմանեցրում
և Հիմանդրանցն ուրում Հիմանդրները վաճառա ընդունում
են միայն բժշկի նշանակութեավ : Տանը դատվող Հիման-
դր վաճառա բնդունիւնու : Ի բաղնիքում լողաճալու մա-
սին նույնագես պետք է ստանա իրեն բուժող բժշկի
ցուցումները :

ՇՓՈԽՄ

Արգանիզմի կովման և մաշկի մաքրության համաց
խոչըր նշանակություն ունեն կանոնավոր շփումները :
Բոլոր Հիմանդրները, նույնիսկ շատ թույլերը սովորա-
բար Հիմանալի կիրարով են ստանում ամենորյա շփում-
ները : Շփում չպետք է անել միայն թոքային արյու-
նահոսության դեպքում, վորովհետեւ այդ ժամանակ Հիմանդր լիակատար հանգստ կարեւը ունի : Շփումը
Հիմանդրին ողտակար և միայն այն ժամանակ, յերբ
այն ճշտությամբ կատարվում է դիտության կողմից և
Յերբեմն չափից ավելի սնունդ ընդունելիս ել հիվանդի ստամոքսն ու աղիքները կարողանում են լավ կատարել իրենց աշխատանքը և հիվանդիը սկսում է զիրանալ։ Յեթե շատ նիհար հիվանդը մի քիչ զիրանում և և վերականգնում և իր նորմալ քաշը կամ նույնիսկ մի քիչ ավելանում ե՝ դա բարենպաստ նույնիսկ է։ Սակայն չափից դուրս զիրացումը և ճարպակալումը մնասակար և ճարպը հիվանդի սրտին բեռ է դառնում, ճարպակարված հիվանդը դժվարությամբ շարժվում, ավելի դժվար է շնչում, շատ և քրտնում և իրեն ավելի վատ և դպում։

Ահա թե ինչու մենք կոչ ենք անում հիվանդներին կանոնավոր, խելացիորեն, գիտականորեն հիմնավորված ձեռվ սնվել և վոչ թե կերակրվել չափից շատ ու չափից ավելի զիրանալ։ Առողջության համար

կարեոր և ինչպես սննդի քահամելը, նույնպես և նրա վորակը:

ՄՆԵՒԹԻ ՔԱՆԱԼ

Սիալ և այն կարծիքը, վոր իրբ թէ տուրերկուցուցով բոլոր հիվանդների, ինչպես և բոլոր առաղջական համար կարելի յէ սննդի միևնույն քահամելը սահմանել: Այս տեսակետից, տմենից առաջ անհրաժեշտ և խիստ անհատական մոտեցում (հաշվի առնելով յուրաքանչյուր առանձին հիվանդի որդանեղմի տուանձնահատկությունները): Յեթէ հիվանդը լավ սնված է, նա սովորաբար պետք է ուտի մոտավորապես այնքան, ինչքան առողջ մարդը: Յեթէ հիվանդը չափազանց չատ և զիրացել, միաժամանակ պետք է պակասեցնել նրա սննդի ռացիոնը (որբաժինը): Հաճախ ականատեսեն ենք ինում, թէ ինչպես այդպիսի հիվանդը կորցնելով տվելորդ ճարպը, սկսում է իրեն ավելի լավ զգալ, անհատանում են չնչոտությունն ու որոի խփոցները, հիվանդը հեշտութայմբ է բարձրանում սանդուխքներով և ամելի լավ է աշխատում: Սակայն յեթէ հիվանդը նիհարել է, իսկ նրա մարտուական որդանները կանոնավոր վիճակում են, ապա արտպիսի հիվանդին հարկաւոր է ուժեղ սնունդ (բայց վոչ գերիերակրում) և այդ ուժեղ սննդի չնորհիվ հիվանդը հնարավորություն և ունենում վերականգնելու իր նորմալ քաշը:

Սննդի քահամելը պետք է կախված լինի նաև հիվանդի աշխատանքի բնութիւն: Լրիվ բհանվածու-

Այսամբ աշխատողն ավելի շատ սնումդ պետք է ստանա, քան հանդստացողը։ Ծանր աշխատանք կատար լողը, որինակ, բեռնակիրը, դարրինը կամ կալսողը ավելի շատ պետք է ուտի, քան թեթև Փիղիկական աշխատանք կատարողը, որինակ, դոնուպահը կամ զբասենյակային աշխատողը։ Մննդի քանակը կախված է նաև տարիքից (յերիստոսարդն ավելի շատ պետք է ուտի, քան ծերը) ու հասակից 180 սանտ. հասակ ունեցող մարդու որդանիզմն ավելի մեծ քանակությամբ սնումք է պահանջում, քան կարճահասակ, որինակը 140—150 սանտ. մարդու որդանիզմը։

Այստեղից միանգամայն պարզ է, վոր ինչպես բոլոր առողջ, նույնպես և բոլոր հիվանդ մարդկանց համար միանական որուրաժին չպետք է լինի։ Մննդի քանակը պետք է վորոշի բուժող բժիշկը, վորն այդ դեպքում հաշվի պետք է առնի տվյալ հիվանդի որդանիզմի դրությունը, տարիքը, հասակը, աշխատանքային բեռնվածությունը, սովորությունները և այլ առանձնահատկությունները։

Բիբնակ, բավարար մնվածքով, մոտ 30 տարեկան, միջահասակ, աշխատանաքի միջին բեռնվածությամբ հիվանդ տղամարդու համար կարելի յէ նշեց որվա մոտավոր միջին սացիոնը։

Թիս կամ ձուկ 200—250 գրամ։

Հաց սկ 400 գրամ, սպիտակ—200 գրամ

Կաթ	2 գրամակ
---------------	----------

Ճարպեր	50 գրամ
------------------	---------

Զու	2 հատ
---------------	-------

Կարտոֆիլ	200 գրամ
--------------------	----------

Բանջարեղեն (ավելի լավ և թարմ դադար, կա-
յամբ) 200—400 գր.

ՄՆԵԴԻ ՎՈՐԱԿԵ

Մարդու որդանիզմի համար անհրաժեշտ և վոչ
միայն վորոշ քանակի, այլև վորոշ վորակի սնունդ:
Մննդի վորակի հարցը ճիշտ վորոշելու համար ան-
հրաժեշտ է նկատի ունենալ, վոր սնունդն որդանիզ-
մի համար նշանակություն ունի յերեք տեսակետից:

Առաջին՝ սնունդն անհրաժեշտ և մարմնի նորմալ
չերժաստիճանը պահպանելու համար:

Յերկրորդ՝ սնունդը որդանիզմի բոլոր մասերին
աշխատելու հներդիա յէ տալիս (որինակ, մկաննե-
րին, որտին և այլն). գըրա համար, ինչպես վերը
նշվեց, սնունդը պետք է համապատասխանի հիմանդի
աշխատանքի չափին ու ծանրությանը:

Յերրորդ՝ սնունդն իր մեջ ուղարունակում է նաև
շինանյութ որդանիզմի համար: Շինանյութի անընդ-
հատ մասակարարումն անհրաժեշտ է վոչ միայն յե-
րեխայի կամ պատահու աճող, այսպես կոչված, կա-
ռուցված որդանիզմի համար, այլև մեծ մարդու
համար: Բջիջները, վորոնցից կազմված են մարդու
կամ կենդանու բոլոր որդանները, համիլտոնն չեն
սպառում: Զանազան բջիջների կյանքի տեսլողությունը
տարբեր է և տատանվում է մի քանի տասնից մինչև
մի քանի տարի: Մարդն անընդհատ այսպես ասած
«իւսնանում ե» վախճառ են մազերը, թեփոտելում է
մաշեր և այլն: Մաշված բջիջները փոխարինվում են

Նոր, յերիտասարդ բջիջներով։ Նոր բջիջը կառուցվում և որպանիզմի յուրացքած սննդից։ Այստեղից հասկանալի յե, վոր սնումնդն այնպայման պետք և պարսւնակի այն բոլոր նյութերը, վորոնցից կառուցված և մեր որպանիզմը և նրա գանհազան բջիջները։

ՍՊԻԾՆԵՐ

Սպիտաները մարդու և կենդանու որդանիզմի բջիջների հիմնական մասն են հանդիսանում։ Այս նյութերից նման են ձվի սպիտակուցին։ Սպիտաները գտնվում են մսի, ձկնի, ձվի, պանրի, կաթի, պատենավոր բույսերի (սիսեռ բակլա, բորի) և հացահատիկների մեջ։ Ովա ընթացքում մարդը միջին հաշվով պետք և բնդունի մոտ 90 դրամ մաքուր սպիտաներ։

Թարմ միոր սովորաբար լավ և մարսում և յուրացվում որդանիզմի կողմից։ Միօր պետք և զործոծել լավ յեփած կամ տասպակած, իսկ զբայրուն սոսամոքս ունեցողներն ավելի լավ ե, վոր ուսեն ծեծած միու—կոտրեա։ Կոտրեաը ավելի հեշտ և մարսվում, ինչպես նաև ավելի հեշտ և կուլ զնում, վորը մեծ նշանակություն ունի կակորդի տուրերկուլյության զեղութում։ Միօր հաջողությամբ կարելի յե փոխարքնել թարմ ձկով։ Զուկը սննդաբար և դյուրամարս մթերք է։ Միօր զործ և ածվում նաև ապիտած և ապած, սակայն թարմ միուն ավելի լավ և յուրացվում և ավելի զյուրամարս է։ Այդ պատճառով մենք չիփանդներին թարմ միս ավելի ենք խորհուրդ տալիս, քան պահածոներ և յերշիկ։

Մննդի կարևոր և անհրաժեշտ մասն են կազմում նաև ճարպերը, բայց այդ տեսակետից շատ չտվապահ ցություններ կան: Այսպես, կարծում են, վոր անհրաժեշտ ե յուրաքանչյուր հիվանդին կաթի հետ միասին մեծ քանակությամբ հալած ճարպ տալ: Այժմ հայտնի յէ, վոր ճարպերը հիվանդին անհրաժեշտ են բարձրար, և վոչ թե մեծ քանակությամբ:

Ճարպերը լինում են կենդանական (կողի յուղ, ճարպ, ձկան յուղ) և բուսական (վուշի, կանեփի, արեածաղկի և ձիթենու ձեթ): Բուսական ճարպերն ավելի եժան են, քան կենդանական ճարպերը, բայց դրանք դժվարությամբ են յուրացվում և նրանց կերպերի մեջ կարելի յէ գործածել միայն առողջ աղիքներ ունեցողների համար, այն ել քիչ քանակությամբ: Ամենահամեղ, դյուրամարս և հիվանդի համար ոգտակար ճարպը— կոմի թարմ յուղն է:

Հիվանդների համար շատ ովտակար են նաև ձկան յուղը: Այս մթերքը ոլատրաստվում ե ձկան (ձողաւծուկ) թարմ լսարդից: Ձկան լավ յուղը շատ աննշան հոս ունի, լսոսինայի հոտի նման: Ձկան յուղը շատ լավ և յուրացվում: Ձկան յուղ ընդունելու ամենահարմար ժամանակը ձմեռն ե և աշնանը, ամառվաշու սրերին ավելի լավ և դադարեցնել ձկան յուղ ընդունելը: Աղիքների խանդարման կամ բարձր ջերմաստիճանով հիվանդին ձկան յուղ չպետք ե տալ: Մեծահասակ հիվանդները ձկան յուղ կարող են խօնել որական 1—3 հացի դղալ: Ավելի լավ և սկսել մեկ

յի բկու թեյի գլաւ ընդունելուց և ապա աստիճաննարաք ավելացնել:

Անսովոր մարդու համար ձկան յուղը կարող է անհամ թվալ, դրա համար վոմանք ձկան յուղն ընդունում են վրան շատ աղ ցանած հացի չորուկի հետ: Հացի չորուկի կեռը ուտում են ձկան յուղը խմելուց առաջ, կեռը խմելուց հետո: Յեթև ձկան յուղն ընդունելուց հետո բղկոց և առաջանում, խորհուրդ և տրվում անանուխաբլիթ ձծել: Այսուամենայնիւ հիմանդների մեծ մասը հեշտությամբ է սովորում ձկան յուղ խմելուն: Ավելի լավ է ձկան յուղն ընդունել ուտելուց հետո: Կան հիմանդներ, վորոնք հաճույգով ընդունում են այն ուտելու ժամանակ կամ մինչեւ ուտելը:

ԱՆԻԱԶՐԵՐ: ԶՈՒՐ: ԱՂԵՐ

Արգանիզմին անհրաժեշտ են նաև քիմիապես շաքարին նմանվող և ածխաջրեր կոչվող նյութերը: Ածխաջրերը գտնվում են գլխավորապես հացի, կարտոֆիլի, բանջարեղենի և մրգեղենի մեջ: Ածխաջրերի (մաքուր վիճակում) նկատմամբ մարդու որվապահանջը հավասար է 400—500 գրամի:

Արգանիզմին անհրաժեշտ են նաև բավական մեծ քանակությամբ ջուր պինդ սնունդը լուծելու, տարբեր մարսողական հյութերի արտադրության (լեկի, թուք և այլն) մեղի, քրանքի և այլն միջոցով սրբանիզմից արտադրող թափոնները լուծելու համար:

Բջիջների կյանքի մեջ առանձնապես մեծ դեր էն
խաղում դանարան աղերը, մանավանդ կերակրի աղը
և կրային աղերը: Արդանիզմում բալարար չափով
երի առկայությունն առանձնապես կարեոր և տուքեր-
կուլյոպով հիմանդների համար: Թոքերում կամ այլ
որդաններում դժուգող տուքերկուլյոգային ոջախ-
ների բուժման համար կիրը մեծ նշանակություն ու-
նի: Ազացուցիած և, վոր ապաքինվող տուքերկուլյո-
զային ոջախները հաճախ ծծվում են կրոլ, վորը
մարդու արյունից նստում են մարմնի հիմանդ հյուս-
վածքների վրա: Հիմանդ թոքի այն մասերում,
փրտեղ նստում են կիրը, հիմանդությունը սովորա-
բար կանդ և առնում, այն այլիս չի տարածվում:
Թոքային հյուսվածքի այս միտում տուքերկուլյոգա-
յին ցաւոլիկները չեն կարողանում բարձմանալ, նրանք
կարծես ծածկված են կրային կեղեղի: Մեջ:
Այդ պատճառով հիմանդի մննդի մեջ պետք է լինեն կիր
պարունակով մթերքներ, առաջին հերթին բանջարե-
ղեն և մրղեր:

ՎԻՃԱՄԻՆԵՐ

Բացի վերը թված նյութերից, մնունդը պետք է
պարունակի նաև այնպիսի նյութեր, վորոնք դիտա-
կան լեզվով կոչվում են վիտամիններ: Մի քանի տաս-
նյակ տարի սրանից առաջ, շնորհիվ մի քանի հի-
մանդությունների ուսումնասիրության, ողարզվեց,
վոր այս նյութերը մեծ նշանակություն ունեն կյանքի
համար: Այսպիս, ճապոնական նախատորմում հան-

կարծակի յերեան յեկառ մի ծանր հիվանդություն, վոլն բնթանում եր ցնցումներով և վերջանում մահով։ Պարզվեց, վոր այս («բերի-բերի») հիվանդությամբ հիվանդանում ելին միայն այն նախաստիները, վորոնք սնվում ելին թեփր մաքրած բրինձով։ Հենց վոր այդպիսի հիվանդներին սկսում ելին կերակրել չմաքրած բրինձով կամ ուտելիքներին բրնձի թեփր ելին ամելացնում, հիվանդությունն արագ կերպով անցնում եր։ Նման զեղքեր տեղի ելին ունեցել նաև ստար աղղերի նավաստիների հետ հեռավոր նավարկությունների ժամանակ։

Յերբեմն սնունդը հրաշալի յեր լինում իր քանակով ու կաղմությամբ, սպիտների, ճարպերի, ածխաջրերի և աղերի բավարար քանակությամբ, այնուամենայնիվ անձնակաղմը հիվանդանում եր։ Բայց հենց վոր մարդիկ ափ ելին իջնում և սկսում ելին թարմ կաթ խմել և սնինել բարջարեղենով ու մրգերով, նրանք արագորեն առողջանում ելին։

Այս զիտողությունները պարզ կերպով ցույց տվին, վոր մարդու նորմաէ կյանքի համար միանդամոյն անհրաժեշտ են վորոշ նյութեր, վորոնք պարունակվում են բուսական մթերքների թաղանթների, նաև բանջարեղենի և մրգերի մեջ։ Այս նյութերը կոչեցին «վիտամիններ»։ Վիտամինների բացակայությունը կարող է առաջացնել նաև ցինդա, ռախիտ (անդրիական հիվանդություն) և այլն։

Վիտամինների ունեցած աղղեցությունն ապացուցված է նաև զանազան կենդանիների (համերի, ծովախողուկների, աղավնիների) վրա կատարած

փորձերով։ Վիտամիններն անհրաժեշտ են տուբերկուլյոզին վարակի գեմ մարդու որդանիզմի կռողմից մզմող հաջող պայքարի համար։ Ահա թե ինչու տուբերկուլյոզի հիվանդի սննդի մեջ մեծ տեղ պետք է բանեն թարմ կանաչեղենը, թարմ բանջարեղենը, և միրզը։ Վիտամիններ պարունակվում են նաև թարմ կաթի, սերուցքի, ձկան յուղի, կարաղի, թարմ ձիի, հոմ մսի և մսահյութի մեջ։ Հաճախ վորակս «ժողովրդական միջոց» հիվանդներին խորհուրդ են տալիս խմել գաղարի ջուր կամ սոճու բողբոջների սպիրտային թուրմ կամ դարահալվեցի (շտումբ) հյութ։ Դա վորոշ խմաստ ունի, վրասովհետեւ այդ բույսերի թարմ հյութը վիտամիններ և պարունակում։ Սակայն, ինչպես մենք դիտենք, վիտամիններ կան նաև մի չարք ուրիշ, ավելի համեղ և սննդարար մթերքների մեջ, այդ պատճառով կարիք չկա դիմելու այնպիսի նյութերի, ինչպիսին են սոճենու բողբոջները կամ դարահալվեցի հյութը։

Յերկարատե յեռացումից վիտամինները վոչնչանում են։ Այդ պատճառով յեռացրած կաթի և յիշած բանջարեղենի մեջ վիտամինները համարյա բացակայում են։

ԱԱԹ, ԿԵՖԻՐ, ԿՈՒՄԻՍ

Կաթը՝ որդանիզմի համար բոլոր անհրաժեշտ և հեշտ յուրացվող նույթեր (սպիտներ, ճարպեր, ածխաջրեր, աղեր, վիտամիններ) պարունակելու շնորհիվ սոճենուալ սնունդն է համարվում։ որանով և

բացառութում այն, վոր կըծքով կերակրվող յերեխան
տուաջին ամիսներին միայն կաթով և սնվում: Կաթը
համեմատաբար հժան մթերք և: Անհիշելի ժամանակ-
ներից սկսած կաթն իրավացլորեն համարվում է շատ
ողտավեա մթերք թե առողջների և թե մանավանդ
ապրերեկուլյողով հիվանդների համար: Անցյալներում
հիվանդներին խորհուրդ ելին տալիս որական մի քա-
նի լիար կաթ խմել, սակայն զա ավելորդ չափազան-
չություն և: Հիվանդն որական 2—3 բաժակ կաթից
ավելի չպետք և խմի, վորովհետեւ մեծ քանակու-
թյամբ ընդունած հեղուկը մեծացնում է հիվանդի
սրտի և յերիկամների ծանրաբեռնվածությունը:
Եռութ նշանակություն ունի այն հարցը, թե կաթը
հում պետք և խմել, թե յեռացրած: Մի կողմից
հայտնի յէ, վոր հում կաթը վիսամիններ և պարու-
նակում և բացի դրանից, ավելի դյուրամարս և,
բայց մյուս կողմից պետք և նկատի ունենալ այն
հանգամանքը, վոր հում կաթի մեջ կարող են լունվել
զանազան վարակիչ հիվանդությունների կենդանի
հարուցիչներ, այդ թվում նաև տուբերկուլյոզի ցու-
պիկներ: Յեթե հաստատ համողված լինենք, վոր
կաթը միանգամայն առողջ կովից և և կթելու ժամա-
նակ պահպանվել են հիգիենայի բոլոր կանոնները,
այսպիսի կաթն, առանց վախենալու, կարելի յէ հում
խմել: Իսկ յեթե այդ վատահությունը չկա, ապա
կաթը պետք և անալայման յեռացնել, բայց վոչ յեր-
կագատան:

Հռչակավոր Փրանսիացի գիտական Պաստյորն ա-
ռաջարկել և կաթի յեռացնելը վոխարինել յերկարա-

տեղ, մինչև 60 աստիճան ջերմության տաքացմամբ : Կաթն այս ձեռվ մշակելիս, վորը կոչվում է «պատերացում» միկրոբները վաշնչանում են, իսկ վիտամինները պահպանվում :

Կաթի արժեքավոր պատրաստուկներից մեկը կե-
ֆիրն է : Կեֆիրը պատրաստվում է մերանի նման
հատուկ սնկիկ խառնելով կաթին : Այս սնկիկը կով-
կասից է բերված : Այդ սնկիկի աղղեցության տակ
կաթի մեջ քիմիական բարդ սլրոցեսներ են առաջա-
նում, վորոնց հետեւսնքով կաթի մեջ պարունակվող
սպիտները մակարդվում են մանր կաթիների ձեռվ և
աղիքների համար ավելի դյուրամարս զատնում :
Իսկ կեֆիրային խմորման ժամանակ առաջացած թը-
թուները (կաթնաթթու, ածխաթթու) կեֆիրին մի
քիչ սուր, գուրեկան թթվաշ համ են տալիս և դրզ-
ռելով ստամոքսի լորձաթաղանթը, արագացնում են
նրա ներծծումը : Մածունը և սերը նույնակես ողտակ
կար կաթնամթերքներ են :

Կումիսը պատրաստում են ձիու կաթից . դա ու-
ժեղ փրփրացող թթվաշ սպիտակ խմիչք է : Կումիսի
հայրենիքը բաշկիրական տափաստաններն են : Կումի-
սը վորոշ քանակությամբ արկհուլ և պարունակում :
Իսկ մեծ քանակությամբ խմելիս մի քիչ հարե-
ցնում է :

Կումիսը վաղուց ի վեր հոչակված և վորովիս
բուժիչ միջոց տուբերկուլյոզի դեմ, այդ պատճառով
էլ տուբերկուլյոզով հիվանդները հաճախ տափաստան
են զնում կումիսային բուժման համար : Թէ հիվանդ-
ները և թէ բժիշկները նշում են, վոր վորոշ տուբեր-

կուլյազով հիմանդներ կումիսաբաժման հետեանքով
ոկառմ են լով քնել, անհետանում և զիշերային
քութինքը, հանգստամում հաղը և քաջն ել զգալիորեն
ամելանում և: Բայց կումիսի բուժիչ ազգեցությունը
զնահանակիս պետք և նկատի ունենալ այն հանգստան-
քը, վոր տափաստանում բուժվողը վոչ միայն կու-
միս և խմում, այլ վարկատար կերպով հանգստանում
և և չնչում տափաստանի չոր ու մաքուր ողը: Դրա
համար դժվար և լինում վորոշել, թէ ինչն և ամենից
չառ հիմանդին ովնում— հսնդի՛ստը, մաքուր ո՞ղը,
թէ՞ կումիսը: Շատ ավելի. համանական և, վոր ազ-
գում են այլ բոլոր ալայմանները միասին առած:
Առոճը այս իշխանության որոք կումիսաբուժարան-
ներ են կազմակերպված Աւրալում, Բաշկիրական ինք-
նագար ԽՍՀ-ում, Ղաղախստանում, ինչպես նաև Մի-
ջին Վոլգայի յերկրամասում, Կիրովոգրավում, Մի-
ւերքի մի քանի շրջաններում և այլն:

Կումիսը համագատասխան բուժիչ միջոց և վոչ
բոլոր առւբերկուլյազով հիմանդների համար: Առամի-
սը լով են տանում առաջ սիրտ, աղիքներ և յերի-
կամներ ունեցող հիմանդները միայն: Այդ պատճառով
կումիսաբուժման պիտի զնալ միայն բուժող լժէկի
խորհուրդով և վոչ թէ իր՝ հիմանդի ցանկությամբ:

ՈՒՍԵԼԻՔԻ ՀԱՄԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Ինչպես հայտնի յէ, մարդ ողուտ և ստանում
ոնքի այն մասից միայն, վորս յուրացնում և նրա
որպանիզմը և վոչ թէ ամբողջ կերածից:

Զավից շատ ընդունած կերակուրը մեծ ժամանք
հիմանդին ոգուտ չեւ տալիս այն պատճառով, վոր
ստամոքս-աղիքային տրակտում այդ քանակի ոնուն-
ոք մարտերու համար անհրաժեշտ քանակությամբ
մարտողական հյութեր չեն լինում:

Այդ հյութերը բավարար չափով արտադրելու
համար հակացական նշանակություն ունի ախորժակը:
Վորքան ավելի համեղ և կերակուրը և վորքան ավելի
շնորքով և մատուցվում, այնքան ավելի լավ և լինում
ախորժակը: Դա տաճանձնապես կարեոր և տուրքերկու-
թողով հիմանդների համար, վորոնք հաճախ վատ ա-
խորժակ են ունենաւ: Կան սննդանյութեր, վորոնք
աննդարաբության տեսակետից ինքնին վոչ մի նշա-
նակություն չունեն, սակայն ոգտակար են, վորովհե-
տեվ բաց մեն անուամ ախորժակը և ավելի լավացնուամ
մարտողական հյութերի արագագրությունը:

Սրանց թվին են պատկանում թեյը, սուրճը, քա-
ցիսը, ժանամնեխը և ծովարողկը (չրեն): Սակայն շատ
կծու և ուժեղ համեմած ճաշերը վնասակար են տու-
րերկությունով հիմանդների համար, վորովհետեւ այդ-
պիսի կերակուրներ հաճախակի գործ ածելուց չափից
ավելի յեն զրոյովում ստոմոքսն ու լյարդը:

Ախորժակի համար կարեոր նշանակություն ունեն
նաև ուսեւու պայմանները: Սեղանը միշտ պետք և
ծածկած լինի մաքուր սփոցով, ամանեղենը լավ
լացած, մատուցողի ձեռքերը և հաղուստը մաքուր:
Ճաշարանի համար չենքը և ճաշի լավ ամանեղենը հի-
մանդի տրամադրության վրա լավ են աղջում և զբա-
հետեւանքով ուժեղանուամ և մարտողական հյութերի

արտազգությունը։ Այս պայմաններն առանձին խառությամբ պետք է կիրառել տուբերկուլյոզով հիվանդների նկատմամբ։ Թույլ հիվանդի ախորժակը կարող է բայորովին փակիլ և նա կարող է հրաժարվել ուտելուց, յեթե այն բավականաչափ մաքուր ու չնորով չի մասաւցված։ Վատ ախորժակ ունեցող հիվանդին միանդամից շատ ուտելիք չպետք է տալ. այդպիսի հիվանդը սովորաբար հաճուքը և ուտում փոքր ախտեցվ սուաղը, խել յերբեմն բոլորովին ձեռք չի տաքին նրան, յեթե ափսեն թերեներերան է լցրած։

ՄՆՈՒՅՆ ՊԱՐՏԱԳԻՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Մնունդը շատ մեծ ընդմիջումներով ընդունելով չափ չի. ավելի լավ է ուտել որպեսան 4—5 անգամ։ Մնունդը լավ է յուրացվում, յերբ յուրաքանչյուր անշամ, համեմատաբար փոքր քանակությամբ է ընդունվում։ Յերբեք չի կարելի անոքի դրուքյամբ աշխատանքի գնալ։ 6—8 ժամյա աշխատանքային որվա ընթացքում անհրաժեշտ է ընդմիջման ժամանակ նախահաշել։ Քննելուց առաջ շատ չպետք է ուտել։ Շատ կարելոր է ուտել կանոնավոր և միշտ որվա վարուժումներին։ Այս դեպքում կերակրավորը վարժվում է իր հյութերն արտադրել վորոշ ժամերին, այդ ժամերին ել բացվում է մարդու ախորժակը, վորից և ոնունդն ամենի լավ է յուրացվում։

Մնունդը պետք է լինի դյուրամարու և աղիքների համար հեշտ յուրացվող։ Դրա համար կերակրությ պետք է լավ պատրաստված լինի։ Հացը պետք է լավ

թիված լինի : Շատ կոչտ միսը , սունկերը , չին և
կոչտ պահիքը վաս հն յուրացվում : Հում կամ թիր-
խաշ ձուն ավելի լավ և մարտավում , քան պինդ յևիածը :
Վաս և մարտավում նուն թարմ հացը (վոլոց նոր հա-
նած) : Աւտելիքը շափից ավելի մհծածավալ չպետք է
լինի : Սմբողջ որվար կերածն ու խմածը յերկուս և կես
կիլոմետր ավելի չպետք և լինի : Արվար ընթացքում
խմած հեղուկը (կաթ , թեյ , սուալ , ջուր) պետք և լի-
նի վոչ ավելի , քան 6—8 րաժակ : Շատերը սովորու-
թյուն ունեն ճաշին մի քանի ամսուն սուալ ուտել , կամ
միննդամից մի քանի բաժակ թեյ խմել , զրանից չա-
փից դուրս և անողաւու ծանրաբեռնվում են տառմոք-
ուր , սիրու և յերթիամները : Աւտելիքը պետք և լավ
չամել , վորի հետեւանքով նա ավելի հեշտ և մարտ-
ավում և յուրացվում : Այդ պատճառով ուտելիքը մեծ
կտորներով չպետք և կուլ տալ , պետք և ուտել դան-
դաղ ու բավ ծամել : Դանդաղ ծամելիս կերակուրը լավ
և խառնվում թքի հետ , վորը նոպաստում և սննդի վո-
րոշ տեսակների մարտավելուն :

Կերակրի մեծ կտորները , ընդհակառակը , գժվա-
ռամառչելիի յեն մարտավական հյութերի համար , վո-
րոնք չեն կարողանում թափանցիկ չծամված մեծ
կտորների մեջ :

Մննդամթերքները պետք և լավ պահել , կարագը ,
կաթը , միուր և ձուկը ավելի լավ պահվում են ցուքու-
մելում : Մննդամթերքներ զնելիս անհրաժեշտ և միշտ
ուշադրություն դարձնել մթերքների թարմության և
լովոթյան վրա : Միկրոբների ազդեցության տակ
մթերքները կարող են քայլքայվել , նեխովնել և կորցնել

իրենց անողարար հատկությունները : Կծված յուզե
մեջ, որինակ, ճարովի մի մասը թթուների յև վերած-
վում, վարոնք կարող են ստումոքոի խանդարում ա-
ռաջացնել : Վատ, պէչացած ուտելիքով կարելի յէ
նույնիսկ թունավորվել : Այլ առաջանում է նրանից,
վոր միկրոբների ազդեցության տակ մթերքների մեջ
կարող են թույներ զոյտնալ (ձկան, յերշեկի և պան-
րի թույն) :

ՊԵՏՔ Ե ԽՈՒՍԱՓԵԼ ՓՈՐԿԱՊՈԽԹՅՈՒՆԻՑ

Տուրերկուլյոզով հիվանդները հաճախ տառապում
են վորկապությամբ : Փորակապության պատճառները
շատ բազմազան են : Վորոշ հիվանդների որդանիքի
բնուհանուր թուլության հետեւվանքով թույլ են աշխա-
տում աղիքները և կերածը դանգաղ առաջ մզում :
Յերեմն վորկապություն առաջ և դալխո յերկարա-
տել պատկերուց, վոր նշանակված և հիվանդին ողո-
ցեսի վորեկ բարդության կամ որման սրբածառով :
Աղիքների լավ աշխատելու համար շատ կարեւոր են
բավականաչուի շարժումները : Փորկապություն կա-
րող է օտարաջանալ նաև այն դեպքում, յերբ հիվանդը
դործ է ածում թեև սննդարար, բայց շախադանց
նուրբ ուտելիք (կաթ, յուղ, միս) :

Յուրաքանչյուր մարդ, առողջ թե հիվանդ, ամեն
որ պետք է դուրս դնա : Փորակապությունը վնաս և
յեթե կղանքը աղիքներում յերկար է մնում, նրա մեջ
յեղած զանազան թունավոր նյութերը արյան մեջ են
ծծվում, վորի հետեւվանքով յերբեմն առաջանում և
պլացմայ, թուլություն, վատ ախորժակ, դժուրա-
դըրգություն, վատ որամազըրություն :

Փորկապությունից խուսափելու համար ուտելիքը
 պետք է լինի խառը և բազմազիսի, բավական քանա-
 կությամբ բանջարեղենով ու մրգերով, աղբեների
 թուլությունից առաջացած կապության զեղքում ա-
 ռանձնապես ողտակար են գտնաբը, խնձորը և մածու-
 նը: Աղբեները կանոնավոր մաքրելու համար աճարի
 ու հացը ավելի հարմար են, քան ցորենի սպիտակ
 հացը: Բացի դրանից, աճարի հացն ավելի հարուստ
 և վիտամիններով, ուստի և չպետք է հրաժարվել նրա
 գործածությունից: Ամեն որ կանոնավոր դուրս գնա-
 լու համար անհրաժեշտ է ամենայն համառությամբ
 սովորեցնել իրեն այդ բանին: Փորակապության դեպ-
 քում հարկավոր է ամեն առավոտ (անկախ պահանջից)
 ու պարսն վնալ և համբերությամբ 10—15 ըսով
 նստել ու սպասել առանց վորեե ձիգ գործադրելու:
 Սովորաբար, զբանից հետո աղբեները մաքրվում են.
 այդպիսի ճշտապահ սովորության դեմքում մորկա-
 րությունը վորոշ ժամանակից հետո ինքն իրեն անց-
 նում է: Բայց յեթե վորակապությունը չառ համար
 և հիմանդը չի կարողանում սեփական միջոցներով
 սովորել նրանից, անհրաժեշտ է անհապաղ խորհր-
 դակցել բուժող բժշկի հետ:

ԱՏԱՄՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Լավ, առողջ առամներն ողնում են ուտելիքի ա-
 վելի բարեկում, վորը և նորասոսում է կանոնավոր
 ժարուղությունը: Փչացած, վտած առամները կարող
 են առամոքսի հիվանդություններ, նիհարում և որ-
 դանիզմի հյուծում առաջացնել: Առամները սկսում են
 վտել գլխամուրապես սննդի մհացորդները առամների

արանքներում մնալու հետեւվանքով։ Այդ մնացորդներն սկսում են նեխվել և ատամներ մաշող նյութեր առաջացնում։ Փոտած ատամներում բուն են դնում ամեն տեսակ միկրոբներ, յերբեմն նաև կոխի ցուռիկներ։

Այդ պատճառով տուբերկուլյոզով հիվանդն առանձին խնամքով պետք է հետեւի իր ատամներին։ Ատամների խնամքի համար անհրաժեշտ ե ամեն անդամութելուց հետո բերանն ողողել (հատկապես շատ թթու կամ քաղցր ուտերուց հետո)։ Հիվանդ կամ փչացած ատամները ունենալու գեղագում բերանը պետք է ողողել նաև ուտելուց առաջ, վորովեսդի ուտելիքը չկեղառու վի վատ ատամների մեջ դոյցած փոռությունով։ Առավոտները՝ նախան նախաճաշելը և քնելուց առաջ, ատամները պետք ե մաքրել խողանակով և ատամի վոչով։

Յերբ ատամներն սկսում են փչանալ, նրանց անուշադրության չպետք ե մատնել։ Ժամանակին առաջնարութին դիմելով կարելի յէ պլոմբելու միջոցով փրկել փտող ատամը։ Սակայն ժամանակին անցկացնելու դեպքում, առաջը յերբեմն շատ արագ կերպով քայլարիցում ե։

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊ- ՎԱԾ ՍՆՈՒՄԸ

Տուբերկուլյոզով հիվանդը տան պայմաններում միշտ ել հնարավորություն չի ունենում իրեն համար հիշտ սնում կաղմակերպել։ Զե՞ վոր ճիշտ սնումը թե առաջի և թե մանավանդ հիվանդ մարդու համար հաւաքակ դործ չե։ դա մի ամբողջ և բարդ գիտություններ։

և : Ասորհը այլին իշխանությունը դիտական հիմունքներով մերակառաւցելով մեր ամբողջ կյանքն ու կենցաղը, լույսորմներ կազմակերպում եւ քաղաքի և գյուղի աշխատավորության հասարակական սնունդը : Կանոնավոր կազմակերպված հասարակական սնունդը հակացական զեր և խողում բնակչության առողջության ամբաղնդման զործում և հասցնում եւ շատ հիմանդրությունների, այդ թվում նաև տուրերկուլյովի նվազեցմանը :

Բանվորական մեծ ճաշարաններին կից կազմակերպվում մեր բուժական սնունդի հասուլք բաժանմունքներ (գիետ ճաշարաններ) : Այդ դիետ ճաշարաններում մնայում են զարդյանձի վրա չաշխատող բանախորհները, վորոնց համար բժիշկը հասուլք սնունդ և նշանակում վորապես նրանց հիվանդության բուժման կարեվոր միջոց (յերիկամների բորբոքում, սոսամոքսի խոց, շաքարախոտ, լեղաքարելը և այլն) : Մեծ զործարաններից շատերում հասարակական սնունդը կազմակերպված և նաև տուրերկուլյով հիվանդների համար :

Մոսկվայի «Երասնի Բառլատիբ» գործարանում դեռ 1931 թվից բուժական սնունդը կազմակերպված և այդ զործարանի տուրերկուլյով հիվանդների համար : Վորովչետելի բուժական սնունդը սովորաբար սննդից ավելի թանու և նստում, ուստի շրջանային սոցականավագրական գրամարկղնայիլ նպատակի համար լրացուցիչ միջոցներ եւ հատկացրել : Ճաշի փառական արժեքը 80 կոպեկ և, վորից 30 կոպ, վճարում եւ հիվանդը, իսկ մնացած 50 կոպ, վճարում և առավագական գրամարկղը : Մնողի վորակին հոկում

և ուռերկուլյողացին դիսպանսերն ու տոկայանք :
Ճաշաբանի սարքամբորումը ապահովագրական դրա-
մարկղի և տոկայանի հետ հատուկ համաձայնությամբ
կատարել և փակ բանվորական կոռուպէրացիան : Գոր-
ծարանի բնորդանուր ճաշաբանի չնչքի մի մասը հատա-
կոցված է տուրերկուլյողով հիվանդների համար ,
համեցրած են նաև առանձին սեղաններ և առանձին
ոմանեզեն , վորոնք միշտ յեռացվում ե առանձին են
պահպատմ : Համար ուշադրություն ե զարձվում մննդի
բարձր փորակի , աննպամթերքների թարմության , լու-
փորակաթթյան նրանց բազմազանության , բանջարե-
ղենի և մրգեղենի առարության վրա : Դիմու ճաշա-
բանից սպառով տուրերկուլյողով հիվանդներից շա-
տերի ասողջության գրությունը լավանում ե և աշ-
խատունակությունը բարձրանալում :

Խարկավի արակետորի դորձարանի հասարակական
ճաշաբանին կից լաց ձեվի տուրերկուլյող ունեցող հի-
վանդ բանվորների համար , աբսինքն այսպիսի հիվանդ-
ների համար , փորոնք խորխի հետ տուրերկուլյողի
շուղիքներ են արտադրում , կաղմակրեալված և զիետ
ամսոն հասուել բաժանմունք : Այդ ճաշաբանում հի-
վանդները մասնաւում են որական և անզամ : Աշխատանքն
ու կուտաց ասողառաջին նախաճաշ , կեսորի մոտ-
յերկրուրդ նախաճաշ , ճաշ յերեք տեսակից և ընթրիք :
Անդի արթեքի գդալի մասը վճարում ե սոցազահո-
վագրական դրամարկղը : Այդ ճաշաբանում մնայելու
համար հիվանդներին ընտրում ե դիսպանսերներին կից
դորձող աշխատանքի և կենցաղի ասողջացման հանձ-
նաժողովը :

Սյու հանձնաժողովի մեջ մտնում են դործաբանի բանվարական հասարակայնության ներկայացուցիչները, դիսպանների բժիշկները և քույրերը: Ճաշարանի տուաջին 4 ամավատ աշխատանքն արդին ցույց է տվել այդ միջոցառման մեջ ոգուտը, այդ ժամանակամիջոցում ճաշարանում ոնվող տուբերկուլյոզով հիվանդներից և վոչ մեկը չի ոգտվել հիվանդանոցային թերթիկով: Շարունակ աշխատանքի մեջ լինելով, նրանցից յուրաքանչյուրի քաշը, միջին հաշվով, ավելացել էր յերեք կիլոյից ավելի: Շատերի սուսզության ընդհանուր վիճակը նույնակես զդալի կերպով լավացել էր:

Դորկի քաղաքում «Կրամնոյե Սորմովո» դործարանում տուբերկուլյոզով հիվանդ բանվորների համար բացված և հատուկ դիետ ճաշարան: Ճաշարանը հիանալի կերպով կահավորված Ա. ճաշարանի ունի հանդսոտի սենյակ, լաբորատորիա, ջրաններ, հանդերձուրան: Սյու ճաշարանում մի քամի ամիս սննդելուց հետո բարձրացավ տուբերկուլյոզով հիվանդներից շատերի աշխատանքի արտադրողականությունը: Նույն բանը մենք նկատել ենք նաև տասնյակ այլ դործարաններում (Մոսկվայում Ստալինի անվան ավտոմոբիլացին դործարանում Վորոնեժում «Լոմինսկի» դործարանում, Կոնստանտինովիկայում Ֆրունզեյի անվան դործարանում և այլն):

Բուժական սննդնդ ստանալու համար սովորաբար տուաջին հերթին դիետ ճաշարան են ուղարկվում այն տուբերկուլյոզով հիվանդները, վորոնք վորեվե արտադրական արժանիք ունեն (հին կաղբային բանվորներ, պարզելատորված հարվածայիններ և ստախանու-

վականներ), ինչպես նաև վնասանեար ցեխերում աշխատողները: Բաց ձեւի տուբերկուլյոզով հիվանդների համար հատկացվում է կամ առանձին սենյակ կամ ընդհանուր ճաշարանում առանձին սեղաններ և առանձին ամսանեղին:

Տուբերկուլյոզավ հիվանդներից յուրաքանչյուրն ակտիվ կերպով պետք է մասնակցի գործարանում, հիմնարկութ կամ կոլխոզում այդպիսի նաշարանի կազմակերպմանը, ինչպես նաև այդ նաշարանի դրվագների հասարակական հսկողությանը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՒՐԴ.

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ ՑԵՎ,

ԲՈՒԺՈՒՄԸ

Տուբերկուլյոզի ախտորոշումը (դիագնոստիկան) և բուժումը բարդ գործ է: Դրա համար պահանջվում է բժշկական հատուկ գիտելիքներ, փորձառություն և սարքավորում (ռենտգեն, լարորատորիա): Հիվանդը միշտ պետք է հիշե, վոր բուժումը բժշկի գործն է:

Բժշկականության մեջ գոյություն ունի մի լավ կանոն, «պետք է բուժել հիվանդին և վոչ թե հիվանդությունը»: Տուբերկուլյոզի նկատմամբ այդ կանոնը պետք է հետեւյալ կերպ հասկանալ: Տարբեր մարդկանց մոտ տուբերկուլյոզը տարբեր կերպ և արտահայտվում և հիվանդության նշանները ևս տարբեր հիվանդների մոտ կարող են տարբերվել մեկը մյուսից: Ախտորոշելիս և բուժում նշանակելիս բժիշկը

հաշվի յե առնուած վոչ միայն թոքերի կամ տուքեր-կոլյոզով վնասաված մյուս որդանների զրությունը՝ այլև որդանիզմի ընդհանուր դրությունն ամբողջու-դին:

Այդ պատճառով բժիշկը տուքերկուլյոզով բոլոր հիվանդներին յերթեք միևնույն ձեվով չի բուժում: Նա հիվանդին նշանակում է բուժման այն մեթոդը՝ վորը համապատասխան է համարում հատկապես տվյալ հիվանդի բուժման համար: Դա վերաբերում է վոչ միայն դեղերին և բուժման այլ մասնագիտական մեթոդներին, վորոնց մասին, կիսումի հետո, այլի հիվանդի ռեժիմին, նրա սննդին և աշխատանքին: Ա-րենակ, տուքերկուլյոզով մի հիվանդի համար ռեժի-զացրած սնունդը ոգտակար է, իսկ մյուսի համար նա կարող է վնասակար լինել: Մեկը լիսկատար հանգստի կարեք ունի, մյուսին նշանակում է յերկարատեղ դրուանքներ և ֆիզկուլտուրա: Մի հիվանդը կարող է շարունակել իր աշխատանքը դործարանում, իսկ մյու-սը աշխատանքից պետք է աղատվի և ուղարկվի ար-տաքաղաքային սանատորիա: Վորոշ հիվանդների բու-ժում են բացառապես հետիւնիկ մեթոդների ռեժիմով, իսկ ուրիշներին կարելի յե լինում պլեվրայի խոռոչի ողի ներարկումներ անել կամ այլ, ավելի բարդ ոպե-րացիա նշանակել: Մեկին անհրաժեշտ է դեղ տալ, կամ սրսկել (որ տուքերկուլին), մյուսը վոչ մի դե-ղի կարիք չունի:

Ուստի թե ինչու սխալ է, յերբ տուքերկուլյոզով մի հիվանդ մյուսից վերցնում կա այն դեղը, վորը նրան ողնել է, չնայած վոր յերկուսի հիվանդությունն էլ

միաահսակ և — տուրերկուլյոդ : Նույնիսկ միենուքն
հիվանդի վիճակը ժամանակի ընթացքում փոխվում է .
նա կարող է կազդուրիմ կամ ընդհակառակը կարող է
պրոցեսի սրում կամ վորեն այլ բարդություն առաջ
դալ : Նայած այդ փոփոխություններին, բժիշկը միմ-
նույն հիվանդին, նրա հիվանդության տարբեր շրջան-
ներում, տարբեր մեթոդներով է բուժում : Այդ պատ-
ճառով սիստմում է այն հիվանդը, յերբ նա բժշկից
ոլահանջում է իրեն բուժել վորոշ մեթոդով, վկայա-
կոչելով իր բուժումն անցյալում : Այդ մեթոդը կա-
րող էր հարմար լինել մի տարի առաջ, և բոլորովին
անհամապատասխան ներկա պահին :

Բայց դա չի նշանակում, վոր հիվանդն իր բուժ-
ման հաջողության համար վոչինչ չի կարող, կամ վո-
չինչ չպետք է անի : Բուժման հաջող ընթացքը միայն
բժշկից չի կախված, այլ նաև հիվանդից : Ամենա-
հրմուտ և գիտակ բժշկը հաջողություն չի ունենա,
յեթե իր բուժման ամրողը ժամանակաշրջանում հի-
վանդը նրան չողնի և չաջակցի : Հիվանդը ինչո՞վ կա-
րող է ողնել բժշկին :

Նախ և առաջ միանդամայն անհրաժեշտ է, վոր
հիվանդն ամենայն անկիզմությամբ բժշկին հայտնի իր
վրության մասին, անցյալում տարած հիվանդու-
թյունների մասին . բժշկի հետ ունեցած բոլոր զբույց-
ների ժամանակ նա պետք է ճշտությամբ և մանրա-
մասն պատասխանի բժշկի բոլոր հարցերին : Հիվանդի
առջած մանրամասն և ճիշտ տեղեկությունները մեծ
չափով ողնում են բժշկին հասկանալու հիվանդությու-

նը, նրա ընթացքը, պատճառները և հիվանդության ընթացքի կախումը հիվանդի կյանքի պայմաններից: Հիվանդության յուրաքանչյուր առանձին դեպքերում նրա առանձնահատկությունների այդպիսի խոր ըմբռնումը հիվանդության ճիշտ և հաջող բուժման պրավականն ե:

Դժբախտաբար կան հիվանդներ, վորոնք այդք չեն համանում. յերբեմն հիվանդն այդպիսի հարցերի համար բժշկի վրա բարկանում ե, չհարկանալով իրեն արվող այդ հարցերի իմաստը և վորոնք անստեղի յեն թվում իրեն: Հաճախ հիվանդները բժշկից թագցնում են անցյալում իրենց ունեցած հիվանդությունները, առանձնապես ծածկում են վեներական ախտերը և հարթեցողությունը: Կանայք զալիս են տղամարդ բժշկի մոտ, յերբեմն ամաչում են նրան պատմել իրենց սեռական կյանքի, դաշտանի, հղիության և վիճումների մասին: Բժժկի հանդեսը այդպիսի ամաչիությունը անթույլատրելի է: Բժշկին սխալ տեղեկություններով շփոթեցնող ծածկամիտ հիվանդը վնասում և վոչ թիւ բժշկին, այլ իրեն: Հաջող բուժման հիմնական պայմանը լիակատար անկեղծությունն է ու վստահությունը դեպի բժիշկը:

Սակայն այդ բավական չե: Հիվանդը բժշկի ցուցամներով պիտի հետեւի իր առողջության ընթացքին, ինքնազդացողությանը և զրության մեջ տեղի ունեցած փոփոխություններին և այնուհետեւ ամենայն ճշությամբ բժշկին հայտնի իր այդ դիտողությունները: Յեթե բժիշկը հրահանգել և չափել զերմաստիճանը, կամ ժամանակ առ ժամանակ կշռվել,

կամ պարելին լաբարատոր հետազոտություն կատարել, առաջ այդ անհրաժեշտ է կատարել ամենայն ճշտությամբ, քանի վոր բարձրացած ջերմաստիճանի կամ նիւճարելու մասին տվյալ տեղեկությունները շատ կարևոր են այլաւ մոմենտին հիվանդի դրությունը վորոշելու, ինչպես և ճիշտ բուժում նշանակելու համար:

Հայտնելով բժշկին իր դրության մեջ նկատված այս կամ այն փոփոխության մասին, հիվանդն իր կողմից չպետք է առաջարկի բուժման վորելիք միջոց:

Եսա հիվանդներ սիրում են բժշկին ասել. «յես փորկատություն ունեմ, ինձ լուծողական և հարկավոր»: Հիվանդի այդպիսի մոտեցումը բուժման հարցերին միանգամացն սխալ է: Այդպիսի դեպքերում բժշկին ովետք և հայտնել միարյն անկանոն դուրս դնեալու, վաստ ախորժակի կամ ցավերի մասին, իսկ թե ինչ միջոցներ են հարկավոր այլ խանգարումների դեմ, դա արդեն բժշկի գործն է: Որինակ, փորկապության դեպքում միշտ ել լուծողական հարկավոր չե, այլ յերբեմն ավելի նպատակաբամար և սննդի բնակիթը պոխնչչ կամ հոգնա անել:

Սակայն ամենից կարեվորը՝ բժշկի նշանակած ռեժիմն ու բուժման հրահանդները ճշտորեն կատարեն և Կյանքում առկիթ և լինում նկատել այնպիսի դեպքեր, յերբ հիվանդը հաճությամբ և ընդունում բժշկի տվյալ դեղերը, բայց դրա հետ դժբախտաբար մոռանում և ռեժիմի և կենցաղի կանոնների մասին բժշկի տվյալ իսրհուրդները — որինակ, շարունակում ե ժիսել և խմել: Հիվանդի՝ դեպքի իր բուժումն ունեցած այլպիսի սխալ և միակողմանի վերաբերմունքից հետո

բնավել դարմանալի չե , յեթե բուժումը չի ողնում : Յեթե
բժշկի վորեւս նշանաւկումը հիվանդի համար անփրա-
ռործելի յե կամ վորեւե պատճառով անընդունելի , դրա
մասին նա առանց ձնչվելու պետք եւ հայտնի բժշկին :
Յեթե հիվանդի կը ուղարկառությունները բավականին
հիմնավորված են , բժիշկը կարող ե փոխել կամ բոլո-
րովին վերացնել իր նշանակումը : Բայց առանց բժշկի
խորհրդի հիվանդը ինքնազլուխ կերպով փոփոխու-
թյուններ չպետք ե մացնի իր ուեժիմի և բուժման
մեջ :

Եաւ կարեվոր ե , վոր հիվանդն իր կինցաղի բո-
ւոր լուրջ հարցերի վերաբերյալ խորհրդակցի բժշկի
հետ , ինչպես մենք արդեն զիտենք , առուբերկուլյողի
պլոցեսի ընթացքը նշանակալի չափով կախված ե հի-
վանդի կյանքի պայմաններից , և այդ պայմանների
ամեն մի փոփոխություն կարող ե հիվանդի վրա լավ
կամ վատ ազդեցություն ունենալ : Յեթե հիվանդն
ուղում ե ամուսնանալ , փոխել իր աշխատանքի բնույ-
թը , փոխել բնակավայրը կամ բնակարանը , ապա այս
ամենի մասին նաև սուածին հերթին պետք ե խորհր-
դակցի իրեն մշտապես բուժող բժշկի հետ :

Միաժամանակ մի քանի բժիշկների մոտ բուժվելը
ինելացի բան չե : Զանազան բժիշկներ կարող են միե-
նույն դեղը տարբեր ձեզով նշանակել և հիվանդը մի-
ևնույն դեղը կնդունի կրկնակի կամ յեռակի չափով
ու դրանով կվնասի իրեն : Յեթե հիվանդին յերկար
ժամանակ միենույն բժիշկն է հետեւում , նա կարո-
գանում ե լավ ուսումնասիրել նրա որդանիզմն ու հի-
վանդության առանձնահաշտկությունները և հեշտո-

թյամբ և նկատում նրա դրության մեջ տեղի ունեցած բոլոր վասկոխությունները։ Այդ պատճառով անթույլագով յէ առանց վորեւք պատճառի մի բժշկեց մյուսին անցնել։

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԳԻԱԳՆՈՍՏԻԿԱՆ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախքան սուրերկուլյոզով Հիվանդի բարժման ձեռնարկելը բժիշկը պետք է սոսույլ խմանա նրա ասողջության դրությունն ամրացնելին առած և առանձին որդանների վիճակը։ Հիվանդին ավելի խորը և հիշտ աշտումնասիրելու համար ժամանակակից բժշկուհանությունը չի սահմանափակվում միայն Հիվանդին հարցաքննելով և զննելով։ Անհրաժեշտ է Հիվանդին հետազոտել ունագենյան ճառագայթներով, նաև կատարել խորխի, արյան և մեղի քննություն, յերեմն յերկար ժամանակվա ընթացքում և կանոնավոր կերպով ջերմությունը չափել, կշռել Հիվանդին և այլն։ Հիվանդը պետք է ողնի բժշկին այս բոլոր հետազոտությունները ճիշտ կերպով կառարելու գործում։

Բժշկի համար, սովորաբար, անհրաժեշտ է իմաստի թե Հիվանդն ինչ քանակությամբ և խորի արտադրում և ինչ տեսք ունի այն։ Դրա համար Հիվանդը պետք է փակ թքամանի մեջ հավաքի ամրող որվա ընթացքում արտադրած խորիս և ցույց տա բժշկին։ Այդ ամսնի մեջ պետք է հավաքել միայն խորիս և վոչ թե թուքը։ Յերբեմն բավական է բժշկին հայտնել միայն որվա արտադրած խորիսի քանակի մա-

սին : Այդակեսի գեղագում ամենից լավ և խորիսի քանակը չտփել, բաժանումներ ունեցող թքամանի միջոցավ : Յեթե այդակեսի թքաման չկա, խորիսը կարելի յեւ հավաքել բաժանկի մեջ և որվա ընթացքում արտադրված խորիսի քանակը վորոշել բաժանով կամ բաժանկի մասերով : Յեթե խորիսը քիչ ե, նրա քանակը կարելի յեւ վորոշել գեղալներով կամ հաշվել, թե որվա մեջ քանի անդամ ե թքել :

Խորիսը լաբորատորիա տանելու համար պետք է համարքել մի հացի գղացից վոչ պակաս խորիս (առանց թքի), լցնել մաքուր շշի կամ բաժանկի մեջ և ամուր խցանել կամ լավ փաթաթել, վորապեսզի տանելիս շորերը խորիսվ չկեղասովի :

Ցուրաքանչյուր տուրերկուլյոզով հիմանդ պետք և ունենա առանձին ջերմաչափ և սովորի իր ջերմությունն ինչը չափել : Դա չի նշանակում, թե տուրերկուլյոզով հիմանդն իր ամբողջ կյանքում ամեն որ և կանոնավոր պետք է չափի իր ջերմությունը : Զերմությունը պետք է չափել կամ բժշկի պատվերով, կամ յեթե հիմանդն իրեն վատ է զգում : Զերմությունը լով և չափել որական հինդ անդամ, — յերեք ժամը մեկ, որինակ, առավոտյան ժամի 9-ին, յերեկվա ժամի 12-ին, ժամի 3-ին, յերեկոյան ժամի 6-ին և 9-ին : Զերմության չափումները պետք ե դրել, նշելով ամսաթիվը և որվա ժամն ու ցուցց տալ բժշկին նրա այնելու ժամանակ : Զերմությունը մեկ՝ յերկու որ չափելը բավական չե, անհրաժեշտ է առնվազն հինդ որ անընդհատ չափել ու դրել :

Հիմանդի դրությունը գնահատելու համար ուժ-

Հըրաժեշտ է ժամանակ առ ժամանակ սառւզել նքանչաշը: Այս դեպքում, յերբ բժիշկը կարգադրում է հետեւյն քաշին, հիվանդը սովորաբար կշումում է 10—15 որր մեկ անգամ, միշտ առավոտված ժամերին, բաղցած վիճակում, միշտ նույն հաղուստով կառ միայն սպիտակեղենով: Քաշը զրվում է կիլոգրամներով, պետք է կշումն կիլոգրամային կշեռքով:

Վո՞րն է մարդու նորմալ դաշը: Քաշը գնահատելիս չե կարելի միևնույն չափանիշով մատենալ բոլոր մարդկանց: Մարդու քաշը կախված է նրա հասակից, ուսուց և տարիքից: Գտնում են, վոր մեջին հաշվով մարդու քաշը կիլոգրամներով համաստ պետք է լինի նրա հասակին սանտիմենտներով, վորից պետք է հանել 100: Որինակ, յեթե մարդու հասակը համաստ և 160 սանտիմետրի, քաշը պետք է լինի 60 կիլոգրամ: Սակայն այդ հաշվումը հարմագ և միայն միջահասակ մարդկանց համար և բոլորովին անհարմար բարձրահասակ և ցածրահասակ մարդկանց համար:

Յեթե մարդու վոսկորները բարակ են և մկանները թույլ դարձացած, առաջ նրա քաշը վերը նշած ձեմով հաշված քաշից ավելի պակաս պետք է լինի:

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ՎԱՐ ՀԱՅՏԱԲԵՐՈՒՄԸ

Տուբերկուլյոզն ավելի հաջող բարժելու համար կարելոր և, վորքան կարելի յե շուտ վորոշել հիվանդությունը: Տուբերկուլյոզի վաղ հայտաբերման դեպքում նրա բուժումը մեծ դժվարություններ չե ներկայացնում: Հիմնականում նա սահմանափակվում է

Հեղենիկ ուժիմով։ Տուբերկուլյոզի վազ հայտաբերման դեպքում նրա բուժումը մեծ մասամբ ապահով ված է։ Բայց յեթե հիվանդությունը հայտարերված է այն ժամանակ, յերբ պրոցեսը խորն է գնացել, այդպիսի գեղքում հաճախ կարիք է զգացվում դիմելու բուժման շատ յերկարատեղ և դժվար միջոցների։

Խոր զնացած տուբերկուլյոզ վորոշելը դժվար չարծ չե։ Նույնիսկ վոչ բժիշկը յերբեմն տուբերկուլյոզով հիվանդի արտաքին տեսքից և մի շարք համաձանոթ նշաններից կարողանում է ճանաչել տուբերկուլյոզով ծանր հիվանդին։ Տուբերկուլյոզի վազ կիսպնստիկան վորոշելը շատ բարդ է ու դժվար և հնարավոր է միայն հետեւվյալ պայմանների առկայության դեպքում։

Նախ և առաջ բժիշկը պետք է տուբերկուլյոզի դժով մասնազիտական պատրաստություն ունենա։ Այդպիսի բժիշկներ կան մեր տուբերկուլյոզային գիսպանստերներում և սանատորիաներում։ Այնուհետեւ դրա համար անհրաժեշտ է վորոշ տեխնիկական սարքավորում, առանձնապես կարեվոր է լարորատորիա Յեւ և ունտպենի առկայությունը։ Լավ լարորատորիան, մանավանդ տուբուլիսպանստերների կամ տուբսանատորիայի լարորատորիան պետք է ունենա բուր հնարավորությունները խորիս մեջ տուբերկուլյոզի բացիլները ժամանակին հայտարեցելու համար։ Սյունականական յերբեմն վոչ միայն խորին են ներկում, այլ վորոշ գեղքերում նաև հարկ է լինում խորիը սրսկել տուբերկուլյոզային ինֆեկցիային։

իմաստ զգայուն լաբորատոր՝ կենդանիներին (ծովքու-
գուկներին, ճագաբներին) :

Սակայն տուբերկուլյոզը վաղ հայտաբերելու հա-
մար առանձնապես մեծ նշանակություն ունի ունտ-
գնյան լավ ապարատը։ Բանն այն է, վոր թոքերի
տուբերկուլյոզը յերբեմն սկսվում է աստիճանաբար
և աննկատելի։ Այդպիսի աննկատելի կերպով սկսվե-
լու դեպքում հիվանդը յերբեմն վոչինչ չի զգում,
բացի թեթեվ թուլությունից։ Նրա ջերմաստիճանը
մնում է նորմալ, ախորժակը յերբեմն ողահպանվում
է, աշխատունակությունը չի նվազում։ Զկան վոչ
հազ, վոչ կրծքի ցավեր, վոչ քրտինք և վոչ ել տու-
բերկուլյոզի այլ հանրածանոթ նշաններ։

Յերբեմն տուբերկուլյոզը սկզբում նման է լինում
վորեվե այլ հիվանդության. որինակ, դբիուլի, թո-
քերի բորբոքման, կամ մալարիայի։ Տուբերկուլյոզով
հիվանդներին վորքան հնարավոր է շուտ հայտաբերե-
լու համար դիմանսերները ժամանակ առ ժամանակ
ընդհանուր քննության են յենթարկում բնակչության
վորոշ խմբերի, վորոնց մեջ շատ թե քիչ հավանակա-
նությամբ կարող են հայտաբերվել տուբերկուլյոզա-
յին հիվանդություններ։ Դրանց թվին են պատկանում
առաջին հերթին. 1) մարդիկ, վորոնք տանը կամ
աշխատանքի վայրում շատ հաճախակի և յերկարա-
ուել շփում են ունենում բացիլավոր*) հիվանդի հետ, —
կենցաղային և արտադրական կոնուակտներ (կոն-
ուակտ նշանակում է շփում)։ 2) այն բանվորները և
ծառայողները, վորոնք հաճախակի ու յերկարատեղ

*) Այն հիվանդները, վորոնց խորսի մեջ տուբերկուլյոզէ
սուպիկներ են գտնված։

Հիվանդանում են այնպիսի տեսողացին հիվանդություններով, ինչպես գրիպու, բրոնխիտը, մալարիան։ Այսպես որինակ, «Կրամոնյոյե Սորմովո» զործարանում այդպիսի հիվանդություններ ունեցող 480 հոգունենելու ժամանակ հայտաբերվեց 4 բացիլավար տուքերիուլյազով հիվանդ։ 3) այն ընտանիքի անդամները, վորոնգ տուքերիուլյովի վերևե դեպք և հայտաքերպած, յեթե որինակ, ընտանիքում յերեխան հիվանդանում և վուկորոների կամ ուղեղի թաղանթների տուքերիուլյազով, առաջ ուսումնասիրելով այն միջավայրն ու պայմանները, վորոնց մեջ յերեխան հիվանդացել և, հաճախ հաջողվում է գտնել տուքերիուլյովի ինֆեկցիայի աղբյուրը, — մինչ այդ չհայտաբերած բացիլավոր հիվանդը այն ժամանակ հաջողվում է հայտաբերել մինչ այդ բոլորովին աննկտաելի կերպով բնթացող տուքերիուլյովի դեպքեր։ Սակայն հանուր քննություններն անողայման ուղեկցվում են ռենտեզենյան լուսարկումներով։ Ինքնին հասկրածութիւն, վոր վաղ հայտաբերված հիվանդների նկատմամբ բուժումը պետք է կիրառվի ժամանակին և շուրջ։

ՅՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԲՈՒԺՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Դիմանականների կողմից քիչ աշխատանք չի կատարված դանելու այնպիսի դեղեր, վորոնց ովնությամբ կարելի լիներ արագ կերպով բուժել տուքերիուլյովը, սակայն այդ գործում նրանք հաջողաւթյուն չեն ունեցել։ Մի քանի ուրիշ վարակիչ հիվանդությունների, որինակ սիֆիլիսի կամ մալարիայի դեմ գոյու-


Թյան ունեն չափազանց հուսալի և բավականին ա-
բագ ազդող բուժիչ միջոցներ . խինինը մարդիքի պահ-
պեմ, սնդիկը, յողը, սալմաբանը սիֆիլիսի դեմ,
վորոնք սալտանում են հիվանդի որդանիզմի մեջ յեղած
միկրոբներին և դրանով ազատում նրան հիվանդու-
թյունից : Մեղ հայտնի յեն այնպիսի նյուֆեր, ինչ-
պես սրբնակ, սուլեման կամ կարբոլաթթուն, վորոնք
սպանում են նուև կոխի ցուպիկին, բայց այդ նյու-
թեքը հիվանդներին տալ չի կարելի, վորովհետեւ
դրանք խիստ թունավոր են : Գտնել այնպիսի ուժեղ
զեզ, վորի առանց մարդու որդանիզմի բջիջներին
մնանելու, դրա հետ միասին, սպաններ որդանիզմի
ներում զոտնվող տուբերկուլյոզային ցուպիկին,
շեռևս չի հաջողվել :

Եատ զեպքերում տուբերկուլյոզով հիվանդներին
բուժում են տուբերկուլինով (տուբերկուլինը տուբեր-
կուլյոզի սպանված ցուպիկների գլիցերինային
մզվածքն և . տուբերկուլինը պարունակում և վարոչ
քանտիությամբ տուբերկուլյոզի տոքսիններ - թու-
նանյութեր) :

Կանոնավոր ընդմիջումներով շատ փոքր քանա-
կությամբ տուբերկուլին պառվաստելով հիվանդին,
դրանով մենք կարող ենք հիվանդի որդանիզմին առի-
պել ավելի ճիշտ և հավասարաչափորեն արատութել
հակաթույները : Սակայն տուբերկուլինը լավ միջոց
է տուբերկուլյոզի մի քանի ճեղերի համար միայն :
Բուժման այդ մեթոդը հարմար չե ամեն հիվանդի
համար :

Թոքերի տուբերկուլյոզի վորոշ ձեւերի դեպքում



Տե՛ծ Հաջողությամբ կիրավում և պլեվրայի խոռոչի մեջ ողի ներփառմաների մեթոդը, վորը հայտնի յեպինեվմուռաքս անունով։ Հատուկ ապարատի միջոցով ողը ներս են փչում պլեվրայի խոռոչը պլեվրայի թոքային և կողային թաղանթի միջեվ (Նկար 4)։ Ներփառմաների հետեվանքով մտցրած ողը շատ քիչ ճնշումով սեղմում է հիվանդի թոքը, բարձի նման քջապատելով այն (Նկ. 5)։ Սեղմված թոքը ժամանակախորապես ավելի թույլ և հանդիսաւ է շնչում և



Նկար № 4 Պնևմոտոքախ

Գորոշ չափով հանդստանում ե իր աշխատանքից։ Թուքի այդ ժամանակավոր, և իհարկե, մասնակի հանդիսար, անդամ խորը զնացած տուքերկուլյողային ոլոոցեսին, նույնիսկ կավերնայի և խոցերի առկայության գեղքում, ավելի արագ բուժման և հասցնում։ Եաւ դեպքերում բնությունն ինքը ե հեշտացնում թուքի հանդիսար։ Այսպես, թոքի տուքերկուլյողով կամ պլեվրիսով հիվանդի կրծքավանդակը քննելիս աեսնում ենք, վոր կրծքավանդակի այն կեսը, վորոնել

գոնավում և հիվանդ թոքը չնչելու ժամանակ ավելի
թույլ և շարժվում: Դրա չնորհիվ հիվանդ թոքը
նույնպես ավելի քիչ շարժումներ և անում, վորոշ
ափով հանգստում ե, վորը և նպաստում է բուժ-
մանը: Պնեվմոտորաքսը յերկարատե մեթոդ է, վարը



Նկ. № 5 Պնեմոտորաքսի սխեման

հարկ և լինում կիրառել ընդմիջումներով 2—3 տար-
վա ընթացքում:

Հիվանդի թոքերին հանդիսա տալու համար յեր-
բեմն կարիք և լինում ավելի բարդ ոպերացիաներ
կատարել (սոոծանու նյարդի հեռացում, պլեվրային
փոկերի նորից այրում, թոքերի կնքում (պլոմբիրով-

կա), սպիրտի ներարկում միջկողային նյարդի մեջ՝ կողերի կարճացում (տորակովառիկա) և այլն):

Գոյությունը ունեն տուբերկուլյոզի բուժման միշտք այլ յեղանակներ, վորոնք այս կամ այն նշանակությունն ունեն. որինակ բուժում արհեստական լույսով (կվարցի լամպա) կամ սենտգենյան ճառագայթներով։ Կոկորդի խոցերը քում և տյրում են տուբերկուլյոզով հիվանդ դեղձերի մեջ նույնպես տարբեր դեղեր են որսկում կամ ներքում։ Վասկրամին տուբերկուլյոզի դեպքում հիվանդ ծայրանդամի ձգում են կտարում, յերբեմն հարկ ե լինում հիվանդը հողի կամ վոսկորի ողերացիայի դիմել, յերեմն ել դիպսակաղեր կամ դիպսե մահճակալներ եկ կործանում։

Սակայն, կիրառելով այս բոլոր ուժուակար մեթոդները, միշտ պետք ե հիշել, վոր տուբերկուլյոզի յուրաքանչյուր ձեվի բուժման հիմքը հանդիսանում և վերը նկարաղբած հիղինիկ ռեժիմը։

Տուբերկուլինով կամ ողի ներփակումներով բուժվող հիվանդի համար ռեժիմի հիմնական կանոնների կատարումը (թարմ ող, կոփում, աշխատանքի և հանգստի ճիշտ հերթափոխում, խելտցի սնունդ և այլն) նույնքան ողարտաղիր և ինչպես և մյուս բուրք հիվանդների համար։ Առանց ռեժիմի պահպանման, բուժման այս բոլոր մեթոդները վոչ մի դրական հետեւվանք ունենալ չեն կարող։

ՏՈՒԲԵՐԿՈՒՑԼՈԶԻ ՄԻ ՔԱՆԻ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԻ
(ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԲՈՒԺՈՒՄԸ

Յերբեմն կարիք է լինում դեղեր դործածել տու-
թերկուլյոգային պրոցեսի մի քանի առանձին ծանր
կամ վնասակար արտահայտությունները մեղմելու
Գամար: Այնպիսի բուժումը, վորն ուղղված է վոչ
թե ամբողջ հիվանդության, այլ միայն նրա առան-
ձին արտահայտությունների և հատկանիշների դեմ,
հոչվում է սիմպոմատիկ բուժում (սիստոմ բա-
ռից— հիվանդության առանձին արտահայտություն):
Դրա թիվին և պատկանում, առաջին հերթին, այնպի-
սի սիմպոմների բուժումը, ինչպիսիք են հազը,
քրափինքը, արյունախումները:

Հաղը՝ հիմնականում որդանիղմի ողտակար հար-
թարումն է: Հաղի շնորհիվ ցնցուղներից և թոքերից
հեռացվում է խորխը, ինչպես և փոշին, վոր այնուղղ
քնկել է ներշնչվող ողի հետ միասին: Բայց հաճա-
խակի հաղը վնասում է, վորովհետեւ ուժեղ և տե-
ղական հաղը ցնցում և զրդում է ձայնալարերը,
եղաստում թոքերի լայնացմանը և վնասակար և սրտի
համար: Չոր հաղը միայն վնաս և տալիս: Հաղը վո-
րոշ չափով սովորություն է. հիվանդը վորոշ ջանք
զնելով, կարող ե սովորել դսպել իր հաղը: Այդ
պատճառով, յերբ հիվանդը խորխ ունի, նա պետք է
աշխատի խորխել այն վարկյանին միայն, յերբ խոր-
խը բոլորովին մոռեցել է կոկորդին: Վոչ մի դեպ-
քում չպետք է աշխատել հաղի միջացով թոքերի
քում չպետք է աշխատել հաղի միջացով թոքերի
քում դուրս հանել խորխը, ինչպես յերբեմն ար-

տահայտվում են հիվանդները։ Չոր հազը պետք է
միշտ զսպել, նույնիսկ յեթե հիվանդը կոկորդում ան-
դուր խուսուտ ե զգում։ Հազի այդպիսի զսպումը և
խորխի հեշտ արտախխումը կոչվում է «հաղի կար-
գապահություն»։

Յերբեմն հիվանդը շատ տանջվում է պիչերային
քրտինքից. այդ քրտինքի առաջն առնելուն շատ լավ
ողնում են մի քանի հասարակ միջոցներ։ Քրտնելու-
արամաղիր հիվանդը չափից դուրս չպետք է վա-
թաթմի, մանավանդ շատ տաք չպետք է ծածկվի
անկողնում։ Սենյակում պետք է պահել դուրեկան,
գով ջերմություն (12-13 աստիճան)։ Զափազանց
ովտակար և քնելուց առաջ գոլ ջրով մաշկի լվա-
ցումներ կատարել։ Դրա հետ միասին անհրաժեշտ է
նաև հաճախ փոխել սպիտակեղենը։

Թոքային տուբերկուլյոդի վորոշ ձեվերի դեպքում
հաճախ փոքր արյունախխումներ են լինում. ավելի
հազվադյուտ են մեծ արյունահոսությունները թոքե-
թից։ Անհշան արյունախխման դեպքում (յերբ խորխի
մեջ յերեվում են արյան յերակներ կամ կաթիլներ)
հիվանդը կարող է վոչ մի առանձին միջոցի չղիմել,
սակայն առաջին իսկ հնարավորության դեպքում այդ
մասին նա պետք է հայտնի բժշկին։ Նման փոքր ար-
յունախխումներին առանձին մեծ նշանակություն տա-
լու հիմք չկա. դա հողվելու կամ տիսրելու առիթ
չպետք է հանդիսանա։ Կյանքում հաճախ նկատվում
է, թե ինչպես շատ հիվանդներ, վորոնք առհասարակ
վոչ մի ուշադրություն չեն դարձնում իրենց հիվան-
դության լուրջ նշանների վրա (բարձր ջերմաստիճան,

մեծ քանակությամբ խորիս) և նույնիսկ անուշադրության մատնում իրենց հիվանդությունը, մի փոքր արյունախսումից սարսափում են և խուճապահարյեղած անմիջապես բժշկի մոտ վազում: Արյունախսման առթիվ բժշկին դիմելով, հիվանդն իր հետ պետք է բերի նաև արյունախառն խորիս: Յերեմին հիվանդները արյուն և թքում ատամներից, լինգերից, քթից, կամ կոկորդից և այդ արյունը թոքային արյունախման տեղ ևն բնդունում: Հաճախ բժշկին հաջողվում է արյունոս թքի տեսքից վորոշել, թե այդ արյունը վո՞րտեղից է ատամներից, լինգերից, քթից և թե՞ թոքերից:

Այլ բան ե, յերբ հիվանդն առատ արյունահոսություն է ունենում թոքերից: Այդ գեղքում անհրաժեշտ է անմիջապես բժիշկ հրավիրել, իսկ մինչ նրա դալը, հիվանդն ինքը կարող է վորոշ միջոցներ ձեռք առնել: Նախ և առաջ նա անմիջապես պետք է պառկի անկողնում և իրեն բոլորովին հանդիսաւ պահի, առանց խուճապահար լինելու և անհանդստանալու: Անկողնում պետք է պառկել լիակատար հանդիսաւ կերպով, առանց ավելորդ և արագ շարժումների: Յեթե հիվանդը չի կարողանում հաղթահարել իր հուզմունքը, լավ կլինի փուչիկով սառուց գնել նրա սրտի շրջանի վրա: Հիվանդը զգուշությամբ պետք է արտախսի կուտակված արյունը, սակայն անհրաժեշտ է ամեն կերպ զսպել չոր հազը: Հիվանդը պետք է պառկի հարմար և գլխատեղը բարձր, վորպեսզի հնարավորություն ունենաւ առանց դժվարության և շատ շարժումներ կատարելու արտախսել թափվող

արյունը : Արյունախման ժամանակ հիվանդին պետք է կերակրել հեղուկ և սառցրած ուտելիքով : Նրան կարելի յե տալ նաև վորքը քանակությամբ դոնդողակ (ժելե), ինչպես նաև մի գլաւ կերակրի աղ լուծած կես բաժակ ջրի մեջ : Արյունախման ժամանակ սռուցյա չպետք ե կուլ տալ ; վորովհետև սառուցյը կարող ե ուժեղ հաղ առաջացնել և դրանով ուժեղացնել արյունահոսությունը : Այլպիսի տնային պարզ միջոցների շնորհիվ յերեմն արյունահոսությունը մինչեւ բժշկի գալլ դադարում ե ինքն իրեն :

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԲՈՒԺՈՒՄ

Տուբերկուլյոզով հիվանդների մեջ շատ տարածված ե այն կարծիքը, թե յուրաքանչյուր տուբերկուլյոզով հիվանդ պիտք ե անպայման և մի քանի անդամ բուժվի սանատորիայում : Այդ կարծիքը միանդամայն սիալ ե : Տուբերկոնչյոզով հիվանդների ճնշող մեծամասնությունը կարող ե բուժվել և տնային պայմաններում, առանց կարվելու իր աշխատանքից և ընտանիքից : Ինչպես մենք արդեն վերեկում ասել ենք, յուրաքանչյուր հիվանդի խորհուրդ և տրվում իր ամառային հանդիսան ացկացնել քաղաքից դուրս, լավ տեղ : Սակայն շատ թե քիչ ամրակաղմ և աշխատունակ հիվանդին սանատորիա ուղարկելու կարիք չկա:

Սանատորիա պետք ե ուղարկել միյն այնպիսի հիվանդների, վորոնք ունեն տուբերկուլյոզային պրոցեսի համակշռության (կոմպենսացիայի) խախտում (այսինքն բարձր ջերմություն, թուլություն, աշխա-

առնակության անկում և այլն) : Սանատորիայում
հիվանդը պետք է մնա մինչեվ այն մոմենտը միայն,
յերբ հանդսոփի և աշխատանքային մարզման աղդեցու-
թյան տակ կհաստատվի նրա տուբերկուլյոգային պրո-
ցեսի կայուն կոմպենսացիան : Կոմպենսացիայի վերա-
կանդնումից հետո հիվանդը կարող է սանատորիայից
առևան վերադառնալ և նրա բուժումը կարող է շարու-
նակվել դիսպանսերում : Սանատորական բուժման ան-
հրաժեշտության հարցը կարող է լուծել միայն այն
բժիշկը, վորը դիսպանսերում հետեւյում և բուժում է
նրան :

Դժբախտաբար սանատորիաներում հաճախ մահ-
ճակալ են ստանում այնպիսի հիվանդներ, վորոնք
բոլորովին կարիք չունեն սանատորական բուժման :
Նրանք յերբեմն նույնիսկ վիճում են դիսպանսերի
բժշկի և ընտրող հանձնաժողովի հետ : Հաճախ դիս-
պանսերում լուսաւ ենք հիվանդի դայրացած հայտարա-
բությունը. «արդեն յերեք տարի յե յես դիսպանսե-
րում հաշվառման մեջ եմ, սակայն վոչ մի անդամ
սանատորիա չեմ դնացել» : Հիվանդի այդպիսի հայ-
տարաբությունը ցույց է տալիս միայն, վոր սանա-
տորիայի առաջ դրված ինդիքները նրա համար բո-
լորավին անհատականալի յեն, վորովհետև սանատորիա-
ներ են ուղարկվում հաշվի առնելով վոչ թե հիվան-
դության, հնությունը, այլ միայն հիվանդ թոքի և
ամբողջ որդանիզմի վիճակը :

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՈՒԺՈՒՄ

Տուբերկուլյոզի մի քանի ձեվեր ոգտակար և բուժել կուրոբաներում (կուրորտ կոչվում են բուժիչ վայրերը)։ Տուբերկուլյոզային կուրոբաները դանվում են հարավում կամ ծովափնյա լեռնային վայրերում, ամենից շատ Ղրիմում և Կովկասում, ինչպես նաև տափառաններում (կումիսաբուժական սահատորիաներում)։

Սովորաբար հարավ ուղարկվում են հետեւյալ կատեգորիայի հիվանդները։ 1) յերկարատեղ արեվաբուժման կարիք ունեցողները (վոսկորների, հողերի և դեղձերի տուբերկուլյոզի վորոշ գետքեր), 2) իրենց հայրենի կլիմայում վատ կազդուրվողները, 3) հեղուկակալուստականով պլեվրիտները, յերբ հեղուկը յերկար ժամանակ չի ծծվում, 4) կոկորդի տուբերկուլյոզի մի քանի ձեվերը։

Դժբախտաբար հիվանդների մեջ չափազանց տարածված եւ այն սխալ կարծիքը, վոր երր թե յուրաքանչյուր տուբերկուլյոզով հիվանդ հաջողությամբ կարող ե բուժվել միայն կլիմայական կուրոբանմ։ Մինչդեռ անհրաժեշտ ե, վոր հիվանդի հարավ կամ տափառան դնալու խնդիրը վորոշի միայն բժիշկը։ Հաճախ հիվանդները վնասում են իրենց, յերբ առանց բժշկի խորհրդի հարավ են վնում։ Յեթե հիվանդը, հակառակ բժշկի խորհրդի, հեռավոր կուրորտ ե գընում, մերբեմն նա այնտեղ ե զնուամ տարվա անհրաժեշտ ժամանակ (որինակ, ամառվա շողին), իսկ յերբեմն ել ճանապարհին գտնվում ե պրոցեսի կոմպեն-

սացիայի խանդարման շրջանում : Վերջին դեպքում Հիվանդը յերկարաբու ճանապարհորդությունից կարող է խթառ հոգնել, և այդ հոգնածությունը կարող է նույնիսկ հիվանդության վատացման պատճառ դառնալ :

Տուբերկուլյոզի միտ քանի ձեւերի կամ մի քանի բարդությունների դեպքում (թոքային արյունախոռուների տրամադրությունը) կուրորտ դնալը կարող է վնասել հիվանդին :

Հետևապես հիվանդները, հենց իրենց առողջության շահերից յելնելով, կուրորտ պետք է գնան վոչ թե «ինքնահօսի» կարողով, այլ միայն բժիշկների նըշանակումով և ընտրությամբ :

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ.

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ

(Կանխումը)

Պրոֆիլակտիկա մենք անվանում ենք առողջ մարդկանց հիվանդանալուց նախապահպանելու միջոցառումները : Տուբերկուլյոզի, վորսես մասսայական հիվանդության դեմ պայքարի զործում պրոֆիլակտիկան պակաս գեր չի խաղում, քան նրա բուժումը : Տուբերկուլյոզի պրոֆիլակտիկայի դիսավոր գենքը հիվանդի՝ դեպի հիվանդայի բոլոր կանոններն ունեցած դիտակցական վերաբերմունքն է :

Հիվանդը պետք է պաշտպանի իր հարադարձնե-

յուղի ժամանակ հոսում եխուղերից : Մի քանի դեպ-
քերում կոխի ցուղիկները գտնվում են հիվանդի
կղանքի մեջ : Այդ բանը լինում է կամ աղիքների
տուբերկուլյոզի դեպքում , կամ յերբ հիվանդը կուլ
ե տալիս իր խորխը , վորի հետ աղիքների մեջ են
ընկնում նաև կոխի ցուղիկները : Կոխի ցուղիկները
մեղի մեջ են ընկնում յերիկամների կամ միղափամ-
իուշտի տուբերկուլյոզի դեպքում : Տղամարդկանց
սեռական որգանների հիվանդությունների դեպքում
կոխի ցուղիկները կարող են դանվել նաև հիվանդի
սերմի մեջ : Հաղվաղույտ դեպքերում չնչին քանտ-
կությամբ ցուղիկներ են հայտաբերվում տուբերկուլ-
յոզով հիվանդ կանանց կաթի մեջ : Սակայն վարակի
թված բոլոր աղբյուրները (բացի խորխից) , այսինքն
թարախը , կղանքը , մեղը , սերմը , մայրական կաթը
առողջ մարդկանց վարակելու տեսակետից շատ քիչ
դեր են խաղում :

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶ

Յերբեմն տուբերկուլյոզային վարակը մարդուն և
անցնում կենդանուց : Կենդանիների բոլոր տեսակնե-
րից տուբերկուլյոզով ամենից հաճախ հիվանդանում
են ընտանի խոշոր յեղջերավոր անասունները (կովե-
րը) : Կովի որգանիզմում տուբերկուլյոզը հաճախ
բուն և զնում կուրծի մեջ : Այդ դեպքում կուրծի վրա
կոյանում են խոշոր մարդարիտի մեծության տու-
բերկուլյոզային ուսուցքներ . այդ պատճառով ել
այդ հիվանդությունը կոչվում է «մարդարոյակ» :

Մարդարտյակով վնասված կուրծից տուբերկուլյոզացին ցուպիկները հաճախ ընկնում են կաթի մեջ։ Այդ պատճառով տուբերկուլյոզով հիվանդ կովերի կաթը կարող է վարակման աղբյուր դառնալ, առանձնապես փոքր յերեխաների համար։ Ցուպիկը կաթից կարող է անցնել մյուս կաթնամթերքներին— պանրին, յուղին, ժաժկին, հումսերին։ Այդ մթերքներում նրանք կարող են յերկար ապրել և պահել իրենց թունավորությունը։ Պանրի մեջ, որինակ ցուպիկը կարող է մինչև 20 որ ապրել։ Կաթնատնտեսություններում զանազան կովերի կաթը, մինչև վաճառելը, իրար են խառնում։ Յեզ յեթե այդպիսի տնտեսության մեջ բացակայում է անսանաբուժների (այսինքն կենցանիների հիվանդությունների մասնագետների) պատշաճ հսկողությունը,— ապա մեծ քանկությամբ կաթի մեջ կարող է ընկնել տուբերկուլյոզով հիվանդ թեկուղ մի կովի կաթ, վորի հետեւանքով և ամբողջ կաթը կվառակվի։

Տուբերկուլյոզով հիվանդ կովին յերբեմն կարելի յե ճանաչել արտաքին տեսքից։ Նա տիսուր տեսք և ունենում, խիստ նիշարում է, այնպես վոր կողերը դուրս են պրծնում, աչքերը խորն ընկնում, յերբեմն հազում է։ Սակայն բացի կովերի այդպիսի ծանր հիվանդություններից, պատահում են նաև հիվանդության ավելի թեթև դեպքեր, յերբ կենդանին արտաքին միանդամայն առողջ է յերեսում։ Այդպիսի դեպքերում տուբերկուլյոզի առկայությունը կարելի յե հայտաբերել տուբերկուլինի պատվաստման միջոցով։

Մյուս կենդանիներից տուբերկուլյոզ, համեմատաբար հաճախ, ունենում են խոզերը, մահավանդայնութեղ, վորտեղ յեղջերավոր անասուններից վարակվելու հնարավորություններ կան. որինակ, խոճկորներին կովի կաթով կամ տուբերկուլյոզով վարակված կաթնամթերքների մնացորդներով կերակրելու դեպքում: Տուբերկուլյոզը համեմատաբար հազվագեղ և պատահում այծերի մեջ, այդ պատճառով ել ծձկեր յերեխաների՝ արհեստական կերակրման համար միքանիսը այծի, կաթ են հանձնարարում: Սակայն դրա հետ պետք է նկատի ունենալ, վոր այծերի տուբերկուլյոզը հաճախ վեր և ածվում թոքային բաց տուբերկուլյոզի ձևվի:

Հավերի մեջ յերբեմն տեղի յե ունենում տուբերկուլյոզի համարակակ, ըստ վորում տուբերկուլյոզով հիվանդ հավերի ծերտի հետ մեծ քանակությամբ ցուպիկներ են արտադրվում. սակայն մարդու վարակվելը հավերից լուրջ դեր չի խաղում: Շատ հազվադեպ է ձիերի, շների, վոչխարների, կառփիների, թութակների և մյուսների տուբերկուլյոզը: Վայրի գիշատիչ կենդանիների տուբերկուլյոզը չափազանց հազվադեպ է: Սակայն ընկնելով դադանանոց, վայրի կենդանիները (որինակ առյուծը, վազը և այլն) հաճախ տուբերկուլյոզի զոհ են դառնում:

Քանի վոր տուբերկուլյոզը վնասում և նաև կենդանու ներքին որդաններին, ուստի տուբերկուլյոզով կարելի յե վարակվել նաև մոխ միջոցով: Վորովեսզի կարելի յե վարակվել նաև մոխ միջոցով: Վորովեսզի կովի կամ խոզի միս տուբերկուլյոզով վարակված կովի կամ խոզի միս

վաճառքի չհանովի, անհրաժեշտ և սպանդանոցներում
անասնաբուժների խիստ հսկողություն սահմանել:

ՓՈՇՈՒ ՎԱՐԱԿ: ՊԱՅՔԱՐ ՓՈՇՈՒ ԴԵՄ

Տուբերկուլոզի ցուպիկները մարդու որդանիպմի
մեջ կարող ե ընկնել դանաղան ճանապարհներով:

Տուբերկուլոզով հիվանդի կողմից հողին կամ
հատակին թքած խորխը սովորաբար չորանում և
Չորացած խորխի փոքրիկ մասնիկները (իրենց մեջ
պարունակած կենդանի ցուպիկներով) խառնվում են
փոշու հետ, նրա հետ ել տարածվում ողի մեջ, նըս-
տում են իրերի, պատերի, հաղուստի մրա: Առողջ
ժարդը ողի հետ փոշի յե ներշնչում, վորի մեջ կարող
են ցուպիկներ լինել, վորոնք և անցնում են թոքերի
մեջ: Վարակման այդ տեսակը կոչվում են փոշու վա-
րակ:

Փոշու միջոցով վարակվելու հնարավորությունը
սպացուցված և հետեւյալ փորձով. առուբերկուլոզով
հիվանդի սենյակում յերկար ժամանակ գտնված դոք-
չը չորացրել են: Այնուհետև մի քանի րոպե շարունակ
թափ են ավել նրա փոշին: Ստուգելու համար, հենց
այդանո՞ւ մոտիկ, վանդակների մեջ դրված են յեղել
ծովախորուկներ, վորոնք ստիպված են յեղել ներշնչ-
չել այդ փոշին (ծովախորուկները շատ զգայուն են
տուբերկուլոզային ցուպիկներով վարակվելու հան-
դեպ): Դրա հետեւանքով խոզուկների մեծ մասը հե-
վանդացել և տուբերկուլոզով:

Սակայն, բացի վարակվելու մուտքից, փոշին ու-

պի մեասակար խտոնուրդ և հանդիսանում : Փոշին
զբգում և շնչտության որդանները — կոկորդը, չըն-
չտփողը, ցնցուղներն ու թոքերը և հազ և առաջայ-
նում : Փոշու դեմ պայքարելու համար շենքերում
պետք և վոչնչացնել այն պատճառները, վորոնք առա-
ջացնում են այն : Փոշին մեծ մասամբ առաջանում է
կոշիկի և հաղուստի հետ բնակարան բերած չորացող
ցեխից : Դրա համար նախքան բնակարան մտնելն ան-
հըրաժեշտ և խնամքով մաքրել կոշիկները : Այդ նպա-
տակով բնակարանի մուտքի մոտ քերիչ, դորդիկ,
ցանց կամ խսիր են դնում :

Աշխատանքից տուն վերադառնալիս պետք և փո-
խել հաղուստը : Այս բանն առանձնապես անհրաժեշտ
և այն դեպքում, յերբ աշխատում են այնպիսի պայ-
մաններում, վորտեղ կեղտն անխուսափելի յե (հան-
քահորեր, հողային աշխատանքներ և այլն) : ԽԱՀ
Միությունում բանվորներին այդպիսի դեպքերում
արտահաղուստ և տրվում, վորը նրանց հնարավո-
րություն և տալիս աշխատանքից հետո փոխել հա-
ղուստը : Զնայած դրան, ցավոք որտի, հաճախ ա-
ղուստը և լինում տեսնելու թե ինչպես անմաքրասեր ու
որիթ և լինում տեսնելու թե ինչպես անմաքրասեր ու
անդիտակից մարդը կեղտոտ արտահաղուստով ուղ-
գակի մեկնվում և անկողնի վրա : Բնակելի շենքում
ցերեք կոշիկ կամ հաղուստ չմաքրել . հաղուստը
ներքնակները, դորդերը միշտ պետք և թափ տաէ
բնակելի շենքերից դուրս :

Հատակն անհրաժեշտ և հաճախ՝ լվանալ կամ
մաքրել : Եթե պատերը յուղաներկ են, ապա դրանք
նույնպես պետք և լվանալ :

Մեծ նշանակություն ունի բնակարանը մաքրելու ձեզ: Յեթե բնակարանը չոր ավելով եւ ավելվում, ապա հատակից մեծ քանակությամբ մանր փոշի յի բարձրանում, վորն ամպից տարածվում է ողի մեջ և ապա նորից նստում հատակին, կահկարասիների և երերի վրա: Այդ պատճառով սենյակը պետք է մաքրել խոնակ յեղանակով, թաց շորի մեջ փաթաթելով հատակի խողանակը: Մաքրելուց առաջ հատակի վրա կարելի յե ջուր կամ խոնակ թեփ ցանել: Լուսամուտների, պատերի, կահկարասիների, երերի փոշին հույնապես պետք է թաց շորով վերցնել:

Բնակելի շենքերում չափաղանց շատ կահկարասի չպետք եւ պահել: Յեթե սենյակը ծանրաբեռնված ե կահկարասիներով կամ լցված իրերով, ապա նրանում շատ քիչ ող ե լինում: Այդպիսի սենյակը դժվար ե մաքրուր պահել, նրա մեջ շատ փոշի յե կուտակվում: Առանձնապես վնաս ե փափուկ կահկարասին, ինչպես նաև գորգերը, դրանց մեջ շատ փոշի յե ծծվում:

Պահարանները չափաղանց բարձր չպետք ե անել, փորսեսղի հնարավոր լինի առանց դժվարության լվանալ և մաքրել փոշուց: Պահարանների վրա ու պահարանների հետեւում հնոտիք չպետք ե պահել, հակառակ դեպքում այդտեղ անպայման փոշի կհավաքվել: Լվանալու և փոշին մաքրելու տեսակետից անհամեմատ հարմար ե հարթ, առանց վորեեւ փորմածքների ու բարդ դարդարանքների կահկարասին: Կարեգոր նշանակություն ունի սենյակում կահկարասիների հիշտ դասավորությունը: Այս դասավորության ժամանակ ամեն կերպ պետք ե խուսափել մութ անկ-

յուններ կաղմելուց վորտեղ փոշի, կեղա, խոնավություն և դոյանում: Տաս որը մեկ անգամ պետք ե հիմնովին հավաքել, մաքրել ու լվանալ բոլոր իրերն ու կահկարասին. ընթացիկ մաքրումը պետք և կատարել ամեն որ:

ԿԱԹԻԼԱՅԻՆ ՎԱՐԱԿ

Տուբերկուլյոզային վարակը հիվանդից առողջին կարող և անցնել այսպես կոչված, կաթիլային վարակի միջոցով: Խոսելիս, փոշտալիս, մանավանդ հաղալիս, տուբերկուլյոզով հիվանդի բերանից դուրս են թոշում մանր կաթիլներ, վորոնք կարող են իրենց մեջ կոխի կենդանի ցուսկիկներ պարունակել: Այդ կաթիլներն ընկնելով առողջ մարդու յերեսի և հագուսի վրա, կարող են նրան տուբերկուլյոզով վարակել: Իսկ յեթե կաթիլներն ընկնում են հատակի կամ զանազան իրերի վրա, ապա նրանք չորանալով, փոշի յեն դասնում և դրանով կարող են նպաստել փոշու վարակին:

Կաթիլային վարակման հնարավորությունը կանխէլու համար անհրաժեշտ են հետեյալ միջոցները — Բաց ձեկի տուբերկուլյոզով հիվանդը չափաղանց մոտ չպետք ե նստի իր խոսակցին, իսկ հազալիս կամ փոշտալիս ձեռքով պետք և ծածկի բերանն ու քիթը, տվելի լավ և ձախ ձեռքի հետևի մասով (ձեռքի հետևի մասով, քանի վոր նրանով իրեք չեն բռնում և ձախ մասով, վորովհետև նրանով չեն բարեւում): Քանի ձեռքով, վորովհետև նրանով ժամանակ հիվանդի վոր հաղալու կամ փոշտալու ժամանակ հիվանդի

ձեռները կեղաստվում են կաթիլներից, ապա անհըլք
ժեշտ և հաճախ լվանալ ձեռները:

Տուբերկուլյոզով հիվանդը պետք է խուսափի
ձեռքով բարեկելուց:

ՎԱՐՍԿ ՇՓՄԱՆ (ԿՈՆՏԱԿՏԻ) ՄԻԶՈՑՈՎ

Վարսկումը շփման միջոցով և կոչվում այն
գեղքում, յերբ առողջ մարդու մարմնի մակերեսն
անմիջականորեն շփում և վարակիչ նյութերի հետ:
Տուբերկուլյոզին վարակի ամենամեծ աղբյուրը—
խորխն է: Շփման միջոցով վարակումը հնարավոր է,
յերբ բացիլային հիվանդի բնակարանի կեղտուա հո-
տակի վրա սողում են յերեխաները, վորոնք հատակին
թքած խորխի մեջ կեղտուում են ձեռքերը և հետ
մատները բերանը կոխում: Շփման միջոցով վարա-
կումը հնարավոր և դառնում նաև կյանքում հաճախ
նկատվող հետեյալ դեպքերում.—

1) Յեթե տուբերկուլյոզով հիվանդ մոր թաշեի-
նակը կեղտուոված և խորխով կամ հաղի կաթիլներով,
իսկ մայրն այդ թաշեինակով սրբում և յերեխայի
ձեռներն ու յերեսը. 2) յեթե տուբերկուլյոզով հի-
վանդի խորխուա. թքամանը վատ և պահվում կամ
ընկնում և խաղացող յերեխաների ձեռքը. 3) յեթե
բացիլավոր հիվանդը խորխով կեղտուում է իր դոր-
ծածության առարկաները (բարձը, անկողինը, ամա-
նեղենը, հագուստը). 4) Համբույրների, ձեռքով բա-
րեվելու ժամանակ, վորովհետեւ բացիւավոր հիվանդ-
ների, մանավանդ անմաքրառեր հիվանդների ձեռների

վլրա մեծ քանակությամբ բացիլներ կարելի յէ հայտաբերել:

Կասկածից դուքս ե, վոր շփման միջոցով վարակվելու մեծ հնարավորություններ կան գիտավորազնայնաղ, վորտեղ բացիլավոր հիվանդը և նրան ըլլեցապատողները չեն պահպանում հիդիենայի հիմնական հանոնները։ Սակայն նույնիսկ շատ մաքրասեր հիվանդներ ճնշվում են հասարակական վայրերում (թատրոն, տրամվայ) և աշխատավայրում ողտովել թքամանից։ Այդ պատճառով նրանք խորիս թքում են թաշկինակի մեջ և անխուսափելիորեն թաշկինակով կեղտոտում են իրենց ձեռերը, դրաբանները, հագուստի յեղբերը (տուրերկուլյոզով հիվանդների այդ տեղերի վրա ցուալիկների առկայությունն ապացուցված է հաստուկ գիտական հետաղոտություններով)։

Շփման միջոցով վարակը կանխելու համար անշըբաժեշտ և պահպանել նախազգուշական հետեւյալ միջոցները։

1) Բացիլավոր հիվանդը վոչ վոքի չպետք և համար լուրի։

2) Բացիլավոր հիվանդների անկողնու սպիտակելունը և թաշկինակները հաճախ պետք և փոխվեն ու լվացվեն։

3) Հիվանդի թաշկինակը թքամանի տեղ չպետք և ծառայի և խորիս կեղտոտվի։

4) Բացիլավոր հիվանդը պետք և ունենա իր առանձին մահճակալը, ամաններն ու յերեսրբիչը։

5) Բացի բավոր հիվանդը պետք է հրաժարվի ձեռ-
քով բարեվելուց :

ԽՈՐԽԻ ՀԱՎԱՔՈՒՄՆ ՈՒ ՎՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Վերեւում բոլոր ասածներից պարզ է, թե ինչ
Հոկայական նշանակություն ունի խորիս կանոնավոր
հեռացումը։ Ամեն տեղ թքելու ամոթալի սովորու-
թյանը պետք է վերջ տրվի, վորպես հին կենցաղի
ժառանգություն։ Զի կարելի նաև կուլ տալ խորիս,
վորովհետեւ կուլ տված խորիս գրգում և ստամոք-
սը և աղիքների մեջ ընկնելով կարող է նույիսկ ա-
ղիքների տուբերկուլյոզ հիվանդություն առաջաց-
նել։

Խորիս պետք է շատ կանոնավոր կերպով հավա-
քել թքամանում։ Ամենից լավ է, յեթե տուբերկուլ-
յոզով հիվանդը գրանի թքաման ունի, վորը նա
կարող է միշտ իր հետը վերցնել թե աշխատանքի
զնալիս և թե զբոսնելիս։ Թքամանը պետք է ունենա
ամուր կափարիչ, վորը լավ պտուտակվում է, վոր-
ուղեղի խորիս չհոսի։ Ավելի հարմար է թքամանի
համար ունենալ մաքուր քաթանից կարգած կոճկվող
փոքրիկ տոպրակ։ Դրա չնորհիվ չի կեղտուավի այն
դրապանը, վորտեղ պահվում ե թքամանը։

Կոյուղի ունեցող բնակարաններում հիվանդը կա-
րող է խորիսել ուղղակի զուգարանում կամ կոճկում և

հետո անմիջապես ջուրը բաց թողնել։ Այդ դեպքում
դուքարանի կամ կոնքի մոտ հատակը խորիով չպետք
է կեղտոտվի։ Թքամանից խորխը նույնակա պետք է
զուգարանում թափել։ Նախքան խորխը թափելը,
պետք է վնասազրկել նրան։

Այդ նպատակով բարխական և խորխը յեռացնել
պետքանոթի մեջ, ավելացնելով սողայի յերկու տո-
կոսանոց լուծույթ խորիս խոշոր կտորները լուծելու
համար։

Փոքր քաղաքներում և գյուղերում, վորահղ
կոյուղի չկա, խորհուրդ ետրվում խորխը հողում թա-
ղել։ Յերբեք խորխը չպետք է թափել բաց տեղում, վո-
րովհետեւ այդ դեպքում հնարավոր և խաղացող յերե-
խաների ու ընտանի կենդանիների վարակումը, այլև
վարակի տարածումը ճանձերի միջոցով։ Քիչ քանա-
կությամբ խորխը կարելի յե այրել հետեւյալ կերպ։
Վառարանում թուղթ են դնում (որինակ հին լրա-
գիր), նրա վրա թափում են խորխը և առա թղթի
շետ խորխը վառում։

Թքամանը պետք է ամեն որ լվանալ։ Թքամանը
պետք է մաքրի ու լվանա ինքը՝ հիվանդը։ Յեթե նո-
այդ բանը հանձնարարում է ընտանիքի առողջ ան-
դամներին, ապա դրանով նա նրանց վարակվելու-
վանդին է յենթարկում։ Վոչ մի դեպքում չի կարի-
վանդին աշխատանքը հանձնարարել յերեխաներին,
մի նման աշխատանքը հանձնարարել յերեխաներին,
մի նման պահպանը դյուրազգաց են դեպի տուքեր-
կուցողային վարակը։

ՃԵՐԻ ԴԵՄ

Տուբերկուլյոզով հիվանդի ամաները՝ գղալը, ափսեները, բաժակը, պատառաքաղը ու դանակը պետք է միանդամայն առանձին լինի ընտանիքի մյուս անդամների ամանեղենից : Հիվանդի ամանեղենը, ընտանիքի մյուս անդամների ամանաղենից պետք է առանձին լվանալ և առանձին սրբիչով ել սրբել : Ամենից լավ է, վոր հիվանդը ինքը լվանա իր ամաները : Հիվանդի ամաները պետք է պահել առանձին դարակում : Իսկ ամենից լավ է, յեթե հիվանդն իր ամաների, ոճառի և առորյա վործածական այլ իրերի համար ունենա իր առանձին փոքրիկ պահարանը : Բնդհանուր սեղանի վրա ճաշելիս հիվանդն ամեն կերպ պետք է խուսափի հաղալուց, այլև բարձր ձայնով խոսելուց, իսկ հաղալիս կամ խոսելիս բերանը ծածկի : Հակառակ դեպքում կաթիլները կարող են ընկնել հարևանների կերակրի մեջ :

Վարակել կերակուրը զանազան միկրոբներով, այդ թվում են նաև տուբերկուլյոզային ցուպիկներով կարող են նաև ճանձերը : Տեղից տեղ թաշելով, ճանձերը նատում են բացիլավոր հիվանդի խորիս և մյուս արտաթորումների վրա, ապա նստելով սնընդապահների վրա իրենց կեղտոտ թաթիկներով կեղառոտում ու վարակում են նրանց : Այդ իսկ պատճառով ուտելիքը յերբեք բաց չպետք է թողնել : Անհրաժեշտ է նաև միջոցներ ճեռք առնել ճանձերի բաղմանալու դեմ : Ուտելիքի ամեն մի մնացորդ անմիջապես պետք

Ե դուքս տանել սենյակից : Վորովհետեւ ճանձերը սովորաբար իրենց ձվիկները դնում են զոմաղբի մեջ, ուստի պետք է աշխատել, վոր բնակարանի մոտերքում գոմեր, զոմաղբի կույտեր, կեղտոտ ջրի հորեր չլինեն : Աղբահորերը և կեղտուչըրի հորերը խնամքով ու ամուռ պետք է փակվեն խուփով :

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՅԵՎ ԲԱԿԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Վատ բնակարանը տուբերկուլյոզային վարակի տարածմանը կարող է նպաստել յերկու պատճառով, — առաջին՝ կեղտոտ, խեղզող, մութ և խիտ բնակեցված բնակարաններում մարդիկ տուբերկուլյոզով չեշտ են վարակվում, յերկրորդ՝ վատ բնակարանը թուլացնում է մարդու որգանիզմը և նվազեցնում է տուբերկուլյոզային վարակի դեմ նրա պայքարելու ընդունակությունները :

Վատ պահվող բնակարանը, կեղտն ու նեխվածությունը նպաստում են տուբերկուլյոզային վարածության, խոնալորության, կեղտի մեջ կոխի ցուպիկները շատ յերկար են ապրում և պահում իրենց թունավորությունը : Նեղ բնակարանում մարդիկ չափաղանց մոտիկ են ապրում իրար : Այդաեղ տուբերկուլյոզով հիվանդների սերտ շիումը առողջների հետ անխուսափելի յէ : Կատարված դիտողների հետ անխուսափելի յէ : Կատարված դիտողները ցույց են տալիս, վոր մարդու տուտողությունները ցույց են տալիս, վոր մարդու տուտողությունները ցույց են տալիս, վարակումը համարյա միշտ եւ յերկուլյոզով առաջին վարակումը համարյա միշտ եւ յերկուլյոզով առաջին վարակումը համարյա միշտ, այլ վակ սենյակատարվում է վոչ թե բաց ոդում, այլ վակ սենյակատարվում է վոչ թե բաց ոդում :

Մաքուր պահվող բնակարանում, վորտեղ փոշի ու կեղտ չկտ, միկրոբները դժվար թե նատելու տեղ ու նենամն : Նրանց հեռացնում են մաքրելով հատակը պատերը, իրերը : Սակայն նրանք պահպանվում և շաբաթներով ու նույնիսկ ամիսներով ապրում են այնտեղ, վորտեղ բնակարանը լցված եւ ամեն տեսակի անպետք հնուտիքով, կեղտու չորերով, վորտեղ մութ ու կեղտու անկյուններ չառ կան և վորտեղ ջնջոցը, խողանակն ու տաք ջուրը հազվագեղ եւ թափանցում :

Յեթե բակում կեղտն ու փոշին չառ ե, ապա դըրանք անխուսափելուն բնակարան են բերվում : Յեկընդհակառակը, բակի կանոնավոր մաքրումը նպաստում ե բնակարանի մաքրության համար մղած պայքարին : Բնակիչների առողջության, մասնավորապես յերեխանների առողջության համար խոշոր նշանակություն ունի բակի կանաչապարփումը : Որինակ, բակում կարելի յե խոտ ցանել, ծառեր տնկել ու ծաղիկներ ցանել : Բակում բույսեր աճեցնելն առանձնապես ոդտածկար ե այն պատճառով, վոր բույսերն արտադրում են թթվածին, վորը չառ կարեվոր ե մեր չնչառության համար և իրենք կլանում են ածխաթթուն : Ավազով ծածկված ճարապարհներով կանաչապատված բակում վոչ կեղտ ել լինում և վոչ ել փոշի :

Բակի ողը (հետեւվապես նաև բնակարանինը) հաճախ փչանում ե արտաքնոցներն ու աղբահորերը վաստ պահելուց : Արտաքնոցների հորերը պետք ե բավականաչափ խորը լինեն, նրանց մեջ հաճախ պետք ե կիրացնել և տարեկան առնվազն 1—2 անգամ մաքրել :

ԱՌԱՆՁԻՆ ՍԵՆՅԱԿ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋՈՎ ՀԻՎԱՆ-
ԴԻ ՀԱՄԱՐ

Բնակարանը կարող է տուբերկուլյողային վարա-
կի ոջախս դառնալ, յեթե այնուեղ մշտապես բաց ձևի
տուբերկուլյողով հիվանդ է ապրում: Նույնիսկ հի-
վանդի և նրա ընտանիքի կողմից ամենամեծ դգուշու-
թյան դեսպում առողջներին (մանավանդ յերեխանե-
քին) սալահովել տուբերկուլյողային վարակից այն
ժամանակ, յելք նրանք գտնվում են հիվանդի հետ
մատիկ ու մշտական չփոման մեջ— այնուամենայնիվ
հեշտ դործ չե: Այդ սպասնառով ել շատ կարեվոր է,
վոր բացիլավոր հիվանդն առանձին սենյակ ունենա:

Առանձին սենյակը կարեվոր է հենց իրեն՝ հի-
վանդի համար նրա բուժման հարմարության և
սեժիմի կիրառման տեսակետից: Առանձին սենյակում
հիվանդն առանց ճնշվելու կարող է ամբողջ մարմնի
չփում կառարել և ողային վաննա ընդունելիս ամ-
րողջովին մերկանալ: Հիվանդն առանձին սենյակ ու-
նենալով, կարող է հաճախ ողափոխել այն չփախենա-
լով մրսելուց, յերեմն չափազանց վախեցող շրջա-
պատղների գիմաղբությունից:

Խորհրդային դեկրետի համաձայն, յուրաքանչյուր
բացիլավոր տուբերկուլյողով հիվանդ առանձին սեն-
յակ ունենալու իրավունք ունի: Այդ դեկրետը հրա-
յական տարրեկան կամաց բարեյան Հեղափոխությունից
տարբարկված է Հոկտեմբերյան Հեղափոխությունից
անմիջապես հետո, դեռ Միության մեջ ընակարանա-
անմիջապես հետո, դեռ Միության մեջ ընակարանա-
անմիջապես հետո, դեռ Միության մեջ ընակարանա-

քով հաստատեց, թե վլորքան խոչոր նշանակություն
և տալիս նա աշխատավորության շարքերում տու-
րելուլողի դեմ պայքարելու դործին:

ԱՌԱՋՁԻՆ ՄԱՀՃԱԿԱԼ : ՍՊԻՏԱԿԵՂԵՆ

Յերբ տուբերկուլյոզով հիվանդն առանձին սեն-
յակ չունի, ապա շափազանց կարեվոր է, վոր նա դո-
նե առանձին մահճակալի վրա քնի: Բացիլավոր հի-
վանդի՝ առողջի հետ միատեղ քնելիս, մանավանդ
յերեխաների հետ, նրանց տուբերկուլյոզով վարակվելը
առանձնապես հաճախ և տեղի ունենում: Յեթե հի-
վանդի բնակարանը խիստ նեղվածք է և մշտապես
առանձին մահճակալ դնելու տեղ չկա, ուստի դիշերը
կարելի յէ ծալովի մահճակալ դնել, իսկ ցերեկն այն
դուրս դնել: Իր անկողինը հիվանդը՝ ինքը պետք և
հավաքի: Հիվանդը բաղժոցի կամ տախտի վրա չպետք
է քնի, վորովհետև ցերեկը նրա վրա յերեխաները կա-
րող են խաղալ: Հիվանդը չպետք է քնի նաև հատա-
կին, վորովհետև հատակին քնողին հեշտությամբ են
մոտենում վորքրահասակ յերեխաները, վորոնք հաճախ
մեծելից վաղ են արթնանում:

Հիվանդի մահճակալը չպետք է դնել մութ ան-
կյունում, ընդհակառակը լուսամուտին ավելի մոտիկ
պետք է դնել: Վորպեսզի դիշերը, հիվանդի հագա-
լու դեպքում, նրա բերանից կաթիլները չընկնեն նույն
սենյակում քնած առողջների վրա, անհրաժեշտ է նրա
մահճակալը դնել ընտանիքի մյուս անդամների մահ-
ճակալներից յերկու մետր հեռավորության վրա: Կա-
թիլային վարակից պաշտպանվելու ել ավելի լավ ու

Հուսալի միջոցը — դա հիվանդի մահճակալի գլխակողմը՝ հիվանդի սենյակի մնացած մասից, յերկու մեար բարձրությամբ շիրմայով անջատելն է:

Հիվանդն անօդայման առանձին լիբեսորբիչ և անկողնոյւ առանձին սպիտակեղեն պետք է ունենա: Յեթև հիվանդն ովտվում է ծալովի մահճակալից, վորը ցերեկը վերցվում է, առաջ հիվանդի անկողնու ազիտակեղենը չպետք է գրվի ընտանիքի մյուս անդամների անկողնի հետ, այլ պետք է հավաքվի առանձին հատուկ տոպրակի մեջ: Բացիլավոր հիվանդի սպիտակեղենը հաճախ կեղտութած է լինում խորխի կաթիլներով (իսկ յերբեմն նաև մեզով ու կղանքով), այս բորով արտաթորություններում կրխի բացիլներ են լինում: Առանձնապես վարակի շատ նյութեր են լինում տուբերկուլյոզով հիվանդների սրբիչների ու թաշկինակների վրա: Սպիտակեղեն լվացողին վարակվելուց պաշտպաննելու համար հիվանդն իր սպիտակեղենը պետք է հավաքի առանձին քարակի մեջ, լվանալուց առաջ քսակը պետք է յեռացնել կաթսայում լցնելով նրա մեջ յերկու տոկոսանի սողացին լուծույթ: Միայն դրանից հետո յեռացրած սպիտակեղենը կարող է խառնվել ընդհանուր լվացքին:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԽՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Յարական ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ Ի Կոմունալ գործը քաղաքներում ամբողջովին դանվաւմ էր իւշոր տնատերերի ձեռքին, վորոնց և պատկանում էր ամբողջ իշխանությունը քաղաքային գումաներում:

Այդ իշխանությունից նրանք լայնորեն ոգտվում ենին
կրենց զասակաբդային շահատենչ նպատակներին հաս-
նելու համար : Բնակչության աշխատավորական խավե-
րից ամեն տեսակի հարկերի ու տուրքերի միջացով
հավաքած քաղաքների հիմնական միջոցները նրանք
ժախսում ենին քաղաքի կենտրոնական մասերի, այ-
սինքն բուրժուազիայի բնակած մասերի շինարարու-
թյան ու բարեկարգման վրա : Բանվորական թագա-
մասերն ու ծայրամասերը կորչում ենին կեղտի մեջ,
չունեցին ելեկտրական լուսավորություն, ջրմուղ, կո-
յուղի, սալահատակում և ամենահասարակ ու անհրա-
ժեշտ հարմարությունները : Քաղաքների աճման և
յեկալ (գլխավորապես բանվորական) բնակչության
ավելացման գուղքընթաց, — սողծվում ենին կեղտու-
ու մռայլ նկուղներ, մութ վորջեր, հիվանդություննե-
րի ոջախներ : Շատ քաղաքներում բանվորական մաս-
սաները ապրում ենին գլխավորապես զորանոցային
տիպի հանրակացարաններում, քնում ենին տախտակա-
մածերի վրա : Մի քանի բանվորական հանրակացա-
րանների տախտակամածերը յերկու կամ յերեք հար-
կանի ենին . Հանքարանվորներն ապրում ենին դետնա-
տբներում կամ կիսագետնատներում :

Մինչեղափոխական Ռուսաստանում տուքերկուլ-
յոցի հակայտական չափերով տաքածվելու գլխավոր
պատճառներից մեկը աշխատավորների բնակարանային
սուկալի պայմաններն ենին :


Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո Միու-
թյան բոլոր քաղաքներում կատարվեց մեր յերկրի
ժամանակակիցների ֆոնդի (պահեստի) վերաբաշխում :

Բուրժուադիան վտարվեց իր շքեղ բնակարններից, նը-
րանցում բնակլվեցին նկուղներից տեղափոխված բան-
վորները: Միայն Մոսկվայում մոռ յերեք հարյուր
հազար բնակիչ (բանվորներ և չքավորներ) վողոքմելի
ժահճակարախցիկային բնակարաններից տեղափոխվե-
ցին բարեկարգ տներ: Այնուհետեւ առաջին հնգամյա-
կից սկսած, ակսվեց մարդկային կուլտուրայի պատ-
մության մեջ չտեսնված հսկայական բնակարանային
շինարարությունը:

Վիթխարի չափով նոր բնակտարածություն և կա-
ռուցված քաղաքներում, բանվորական ավաններում,
խորհունտեսություններում ու կոլտնտեսություննե-
րում: Այդ բանն, անկասկած հանդիսանում և մեր
յերկրում տուրերկուլյոգի իշնելու դիմավոր պատճառ-
ներից մեկը:

Անել են ամբողջ նոր քաղաքներ (Ստալինակ,
Մագնիստագորսկ, Կոմսոմոլսկ և այլն), տասնյակ նոր
բարեկարգ բանվորական ավաններ են կառուցված
Դոնբասում, Ռուբալում, Բագվի շրջանում, ՌԽՖՍՀ
կենտրոնական մարդերում, աղջային հանրապետու-
թյուններում և այլն: Բանվորական նոր թաղամասերը
կանաչապարզմում են, ունեն ակումբներ, թատրոններ,
կինոներ, մանկական հիմնարկներ, դպրոցներ, զիս-
տանուեքներ, հիմնադանոցներ, գործարան-խոհանոց-
պանսեքներ, լայն փողոցներ, զբոսավայրեր, կուլտուրայի և
հանդստիպարկեր, բաղանիքներ լողանալու ավագաննե-
րով, Փիզիկուլտուրայի հրապարակներ, դահուկային և
ջրային կայաններ: Բնակարանային ու կոմունալ շի-
նուրարություն գործում յեռանդուն մասնակցություն և

ունեցալ բանվորական հասարակայնությունը : Բանվորական խոշոր բնակչություն ունեցող շատ քաղաքային խորհուրդներ (Յարոսլավլը, Գորլովկան Դոնբասում և այլն) հաջողությամբ ելին տանում բնակարանային շինարարության և քաղաքային բարեկարգության վերաբերյալ մրցակցությունը : Այժմ մշակված են Մոսկվայի, Լենինգրադի և մեր մյուս խոշորագույն քաղաքա-



Նկ. № 6 Տուբեռկուլյազով հիմնադների համար (Սարմալո)

յին կենտրոնների վերակառուցման հակայական նախագծերը . այդ վերակառուցումներն արդեն սկսում են կուտարվել մեր աչքի առաջ :

ԹԽՖՄՇՀ մի քանի քաղաքներում Յարոսլավլում, Լուգանսկում (այժմ՝ Վորոշիլովգրադ) Անդիջանում, Սորմովում (բանվորական թաղամաս Գորկում) հատուկ տներ են կառուցված տուբեռկուլյոզով հիմնել -

ների համար : Սորմովոյի գործարանի վարչությունը
Հոկտեմբերյան Հեղափոխության 16-րդ տարեդարձի
առթիվ տուբերկուլյոզով հարվածային բանվորների
համար կառուցել ե յերկու տուն . բնակաբաններն ու
նեն հիվանդների համար առանձին սենյակ պատշպամք
(նկ. 6) :

Սորմովոյի որինակը շատ Փաբրիկաներ ու գոր-
ծաբաններ պետք ե ընդոբինակեն :

ՎՐԱԿԱՄԱՆ ՊՐՈՖԵԼԱԿՏԻԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵջ

Անցյալում բժշկական աշխատողների շարքերում ,
— գլխավորապես քույրերի ու հիվանդապահների մեջ
տուբերկուլյոզով հիվանդներ շատ ելին լինում : Այդ
բացատրվում է նրանով , վոր նրանք վարակվում ելին
տուբերկուլյոզով հիվանդներին խնամելիս : Այժմ , յերբ
տուբերկուլյոզի պրոֆիլակտիկայի յեղանակները լավ
ուսումնասիրված են , խնամող պերսոնալը լիակատար հը-
նարավորություն ունի ազատ մնալ վարակվելու վտան-
գեց : Արինակելի և մաքուր հիվանդանոցներում ու սանա-
տորիաներում պերսոնալը տուբերկուլյոզով վարակ-
վելու դեպքերը խիստ հազվագեց են : Դրանում շատ
բար կախված է հիվանդի վարքից : Այն բուժական
բար կախված , վորտեղ հիվանդները չեն թքում վոր-
տիմնարկներում , պերսոնալը վարակվելու չեն , վոր
տեղ պատահում ե , վորտեղ խիստ հետեւում են , վոր
հազարի բերանը վակեն , այնուղի բժշկական պերսո-
նալի վարակվելու վտանգը շատ աննշան է :

Դպրոցներում , մանկապարտեզներում , մանկատնե-
րուցներում ,

բում և մանկական մյուս հիմնարկներում բացիլավոր տուբերկուլյոզ Հիվանդներ չպետք է աշխատեն։ Յերեխաներին վարակվելուց պաշտպանելու համար, բացիլավոր ուսուցիչներին, մանկասպարուղների ղեկավարութիւններին, մասուցների և կոնսուլտացիաների քույզերին, բժշկներին ու դաշտակներին պետք է տեղափոխել այլ աշխատանքի։ Դպրոցներում խստիվ պետք է պահպանել «հազի դիսցիլինան» և թքելն արդելել։ Դըպրոցներում անհրաժեշտ են թքամաններ դնել և ամեն որ խոնավ յեղանակով մաքրել սենյակները։

Տուբերկուլյոզով վարակելու վորոշ վտանգ կառնդի գծով աշխատող բացիլավոր հիվանդների կողմից (սննդամթերքներ վաճառողներ, մամավաճառներ, հացթուխներ, կթողներ, մատուցողներ և այլն)։ Այդ սրատճառով ԽՍՀՄ-ում տուբերկուլյոզով վարակիչ հիվանդներին սննդային ձեռնարկություններում աշխատելը հասուլ որենքով արդելված է։

